

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ	
Սերգո Երիցյան.....	2
ՀՀ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ	
ՈՒՂԻՆԵՐԸ Ատոմ Մխիթարյան.....	6
VOCATIONALLY EDUCATION ORGANIZATIONAL ISSUES IN ARMENIAN	
UNIVERSITIES Nonna Khachatryan.....	10
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ	
ՄԱԿՐՈՀԱՇՎԵՆԿԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ Արմեն Ճուղուրյան.....	15
TAX PLANNING DEVELOPMENT ISSUES IN UNIVERSITIES Hamed Mirzaei.....	22
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ	
Նոննա Խաչատրյան	25
INFORMATION PROVIDING ISSUES IN MICROFINANCE _EFFECTIVENESS	
ASSESSMENT Artak Yarazyan	29
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ	
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Վահան Պողոսյան	35
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ	
ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	
Մարգարիտա Պողոսյան	40
ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ «ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ» ՄԱՍԻՆ Աշոտ Ներսիսյան	42
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ	
Նունե Մկրտչյան	46
ՄԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ	
ԻՆՏԵՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ Անի Խեչոյան	51
ՀԱՅ ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵԻ	
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ Աելիտա Դուլուխանյան.....	56
ՄԱՆԱՀԻՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ Հովսեփյան Լիլիթ	60

ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Սերգո Երիցյան

Կրթական համակարգին առնչվող ակադեմիական ազատությունների օրենսդրական ամրագրումներին զուգընթաց՝ դեռևս ՀՀ բուհերում ցայտուն կերպով չի դրսևորվում նման գործընթաց: Համալսարանները «իներցիոն ուժով» շարունակում են դասախոսակենտրոն ուսուցումը, ուսանողներն էլ պասիվ են իրենց ընձեռած ակադեմիական ազատությունների իրացման պարագայում:

Սակայն միայն ավանդույթի ուժը չէ, որ խոչընդոտում է ակադեմիական ազատությունների շրջանակի ընդլայնմանը ՀՀ բուհերում: Պետական, առավել ևս մասնավոր համալսարաններում չեն ձևավորվում անհրաժեշտ այն ֆինանսատնտեսական ռեսուրսները, որոնք կոչված կլինեն նպաստելու վերոնշյալ գործընթացի ակտիվացմանը: Այսպես, ուսանողի անհատական աշխատանքի ծանրաբեռնվածությունը ենթադրում է համակարգչային սրահների և գրադարանային հարուստ ֆոնդի առկայություն, իսկ ընտրովի կրթական մոդուլների ընդլայնման հնարավորությունը ենթադրում է լսարանային ծառայությունների և պրոֆեսորադասախոսական համակազմի ճկուն կառավարում, որը դեռևս արդյունավետ չի իրականացվում ՀՀ բուհերում:

Բացի այդ, ակադեմիական ազատություններն առավել արդյունավետ են իրացվում ուսանող-դասախոս-բուհի հարաբերությունների փոխվստահության մթնոլորտում: Սակայն փոխվստահության նման մթնոլորտ մեր իրականությունում դեռևս լիարժեքորեն չի ձևավորված: Այսպես, ՀՀ բուհերը մինչ այժմ ակադեմիական կրեդիտների փոխանակման հնարավորություններ չեն ստեղծում՝ դրանով իսկ սահմանափակելով ուսանողների միջբուհական շարժունությունը: Կրթական գործընթացի հիմնական և որոշիչ գործոնը համարվում է դասախոսությունը, և դեռևս կրթության որակի ապահովման առումով վստահություն չի դրսևորվում ուսանող-դասախոս անհատական աշխատանքին, առավել ևս սովորողների ինքնուրույն աշխատանքին:

Ուսանողները ակտիվություն չեն ցուցաբերում նաև բուհի կառավարման համակարգում իրենց լիազորություններն իրացնելիս: Մի կողմից, դեռևս իշխում է այն թերահավատությունը, որ «ուսանողական ծայրը», միևնույն է, չի հասնելու բուհի վարչակազմին, մյուս կողմից, մեր ուսանողը դեռևս «պատրաստ չէ» կրթական համակարգում կառավարչական որոշումներին մասնակցելու՝ իր տեղեկացվածության ցածր աստիճանի, փորձի և կառավարման հմտությունների պակասի պատճառով:

Հետևաբար, ուսանողին ընձեռած ակադեմիական ազատությունների լիարժեք իրացմանը պետք է համալիր մոտեցում ցուցաբերել՝ բարեփոխումներ իրականացնելով ոչ միայն օրենսդրական դաշտում, այլև կրթական ծառայությունների ոլորտում կատարելով խոշոր ֆինանսական ներդրումներ և կարևորելով բուհական համակարգում «ուսանողակենտրոն» միջոցառումների իրականացման շրջանակի ընդլայնումը, որը համարվում է Բոլոնիայի գործընթացի հաջող իրականացման առանցքային դրույթներից մեկը:

Գիտությունը նույնպես բուհերում զարգացման արգելքների է հանդիպում, որի պատճառը ոչ միայն գիտահետազոտական աշխատանքների թերֆինանսավորումն է, այլև գիտական ոլորտում ակադեմիական ազատությունների պակասը: Այսպես, ՀՀ համալսարաններում գիտությունը «ծերացման» միտում ունի, քանի որ գիտության դոկտորների տարիքը տատանվում է 50-60-ի սահմաններում, ամբիոնների վարիչները աշխատում են կենսաթոշակային տարիքը գերազանցող ժամանակահատվածում՝ դրանով իսկ դուրս մղելով գիտության ջահակիր հանդիսացող երիտասարդության միտքը:

Ակադեմիական ազատությունների առումով վիճակն էլ ավելի է բարդանում թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների ներկայացման գործընթացում: Ատենախոսը, աստիճանաշնորհման գործող կարգի համաձայն, պարտավոր է կատարած հետազոտության քննարկումների մի ամբողջ շղթա հաղթահարել ամբիոնում, առաջատար կազմակերպությունում, մասնագիտական խորհրդում, ընդդիմախոսների շրջանակում՝ ար-

դյունքում նախապաշտպանական շրջանում առավել ժամանակ կորցնելով ոչ թե հետազոտական աշխատանքի, այլ բազում վարչարարական արգելքների հաղթահարման վրա:

Գիտության բնագավառում ակադեմիական ազատությունների արգելքներ են նաև հրատարակվող հոդվածների վերաբերյալ բազում գրախոսությունների խիստ պահանջները, գիտական բաժինների ղեկավարների զանազան «մասնագիտական քննադատությունների» առկայությունը, որոնք կաշկանդում են երիտասարդ գիտնականի գործունեությունը՝ նրան ընդհուպ հասցնելով աշխատանքային հիասթափության:

Բոլոնիայի գործընթացին Հայաստանի անդամակցությունը մինչև այսօր տարակարծության առիթ է տալիս ակադեմիական շրջանակներում և անգամ մեր հասարակության լայն շերտերում, որը պայմանավորված է մի շարք պատճառներով:

Առաջին. անցած տասը տարիները ցույց տվեցին, որ Բոլոնիային անդամակցության մեկնարկային *ակադեմիական* տեսլականի հիմնական դրույթները այդպես էլ իրենց լիարժեք կիրարկումը չստացան: Բոլոնիային անդամակցելուց հետո մեկ տասնամյակ անց նախատեսվում էր, որ ունենալու ենք ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի անարգել և ակտիվ շարժունություն, որակի ապահովման առումով գրավիչ կրթական տարածք, սերտ ինտեգրացիոն կապեր եվրոպական կրթական շուկայի հետ: Սակայն, Բոլոնիային անդամակցության տեսլականի այս հիմնադրույթները դեռևս լիովին և ամբողջական չեն իրագործվում, քանի որ առանձին բուհերում ունենք.

- ձևական կրթական աստիճանային համակարգ՝ կայացման փուլում գտնվող իր մագիստրատուրայով և դոկտորանտուրայով, որտեղ դեռևս կրթական ծրագրերի, կրթության վարչարարության անորոշությունները շատ են,
- ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման ոչ ամբողջական մեխանիզմ, որով ուսումնառության ընթացքում կուտակված կրեդիտները ծառայում են միայն ավարտական դիպլոմին՝ և չունեն էական դերակատարում շարժունության ապահովման և կրթական ծանրաբեռնվածության պաշարի գնահատման ոլորտում,
- ոչ լիովին, չձևավորված կրթության որակի ներքին և արտաքին ապահովման մշակույթ, որի արդյունքում դեռևս անհասկանալի են կրթական ծառայությունների մատուցման որակի գնահատման մոտեցումները և մեխանիզմները:

Երկրորդ՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման *քաղաքական շարժառիթները* նույնպես նպաստում են Բոլոնիային անդամակցության նպատակահարմարության տարակարծության խորացմանը մեր հասարակության լայն շերտերում: Եվրոպայի հետ չխզելով անկախության տարիներին հիմնած լայնամասշտաբ համագործակցության կապերը, այնուամենայնիվ վերջերս Հայաստանի Հանրապետությունը ԵՏՄ անդամակցության ուղենիշ վերցրեց՝ դրանով իսկ նպատակադրվելով առավելապես ինտեգրվելու ոչ թե եվրոպական, այլ եվրասիական կրթական շուկային: Ձևավորված իրավիճակում բնականաբար հարց է ծագում. արդյո՞ք Բոլոնիային Հայաստանի անդամակցությունը չի հակասում մեր կողմից իսկ ընդունած ներկա քաղաքական ուղենիշներին և առաջացնում սոցիալ-քաղաքական ռիսկեր:

Երրորդ՝ Բոլոնիայի գործընթացին անդամակցության փորձը ցույց տվեց, որ բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումները պահանջում են հսկայածավալ ֆինանսական ռեսուրսներ, որի աղբյուրները մեր հանրապետությունում դեռևս դժվարությամբ են գտնվում: Կրթական բարեփոխումները միայն միջազգային հատուկեմտ դրամաշնորհներով իրագործելի չեն, և դրա համար անհրաժեշտ են ներհանրապետական ֆինանսական լուրջ միջոցներ: Սակայն Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է մի իրավիճակ, երբ սակավամասշտաբ ֆինանսական ռեսուրսներով ընդամենը ապահովվում է կրթական ծառայությունների անխափան իրականացում, և բարեփոխումների ակտիվացման առումով հանրային ու մասնավոր ֆինանսավորման սուղ պայմաններում կրթության բարեփոխումների ոլորտում պարզապես չեն իրականացվում էական ֆինանսական ներդրումներ: Արդյունքում ունենք սոցիալապես անապահով ուսանողություն և պրոֆեսորադասախոսական անձնակազմի որոշակի շրջանակ, բարոյապես և ֆիզիկապես մաշված կրթական ծառայությունների մատուցման ակտիվներ, որոնց միջոցով պարզապես անհնար է իրականացնել լայնածավալ և արդյունավետ կրթական բարեփոխումներ:

Սակայն, մեր կարծիքով, Բոլոնիայի գործընթացի զարգացման ճանապարհին վերը քվարկած ակադեմիական, քաղաքական և ֆինանսական գործոնների արգելքները ժամանակավոր են և անցողիկ բնույթ են կրում: Համաշխարհայնացման այսօրվա ընթացքի պայմաններում պարզապես անհնար է մեկուսանալ ինչպես տնտեսական, այնպես էլ կրթական շուկայում: Իսկ կրթական միջազգային շուկան ներկայումս զարգացման հարաշարժ բնույթ ունի և պահանջում է համընդհանուր սկզբունքներով և ընդհանուր հայտարարի բերված գործիքակազմով կրթական ծառայությունների մատուցում, որն արդեն իսկ միջազգայնորեն ներդաշնակեցվել և հղկվել է Բոլոնիայի գործընթացում: Ուստի Հայաստանի Հանրապետությունը այս տասը տարիների ընթացքում անդամակցելով Բոլոնիային և այդ ոլորտում ունենալով տեսանելի հետագիծ՝ անկախ ներկայումս ստեղծված դժվարություններից, չպետք է հրաժարվի ԵԿԿՏ-ում ունեցած ձեռքբերումներից և պետք է շարունակի կրթական բարեփոխումների ոլորտում որդեգրած քաղաքականությունը:

Ակնհայտ է, որ Բոլոնիայի գործընթացի հետագիծը թողեց հսկայածավալ արդյունքներ ԲԿԵՏ-ում: Բոլոնիայի համաձայնագրի անդամ բոլոր երկրները ներմուծել են մասնագիտական կրթության բազմաստիճան համակարգ: Բուհերի 95%-ն արդեն կիրառում է երկաստիճան համակարգ, ընդունվել են 180-240 և 60-120 կրեդիտ միջակայքերը՝ համապատասխանաբար առաջին և երկրորդ շրջափուլերի համար:¹ Գործում է 3+2 տարի մոդելը (180 + 120) կրեդիտ, և ընդամենը 5 երկրներում, որոնց թվին է դասվում նաև ՀՀ-ն, գործում է 4+2 տարբերակը, համապատասխանաբար 240 և 120 ակադեմիական կրեդիտներով: Դոկտորանտուրայի ծրագրերը աստիճանաբար ձեռք են բերում կառուցվածքային կրթական բաղադրիչներ և մոդուլային հենքով են կազմակերպվում: Այնուամենայնիվ, դեռևս չկա ընդհանուր համաձայնություն դոկտորանտուրայի տևողության, կրեդիտների և մոդուլային կառուցվածքի վերաբերյալ: ԲԿԵՏ երկրներում անհամաչափ ծրագրային բարեփոխումների ընթացքը, հատկապես մոդուլացման, ճկուն կրթական ծրագրերի ներմուծման, աշխատաշուկայի պահանջներին համահունչ շրջանավարտների կարողությունների և հմտությունների ձևավորման ուղղությամբ:

Մինչ այժմ դեռևս ԲԿԵՏ-ում չի առաջադրվել որևէ շեմային սահմանափակում կրթական ծրագրերում ընտրովի և պարտադիր դասընթացների տոկոսային հարաբերակցության վերաբերյալ, որը խոչընդոտում է ուսանողակենտրոն ուսուցման հանդեպ ընդհանուր մոտեցումների ձևավորմանը, քանի որ տարբեր երկրներում ուսանողները տարբեր ակտիվությամբ են մասնակցում իրենց իսկ ուսումնական պլանի ձևավորմանը: Բացի այդ, ԵԿԿՏ երկրներում միևնույն մասնագիտության գծով տրվող դիպլոմի հավելվածում բարձրագույն կրթության վերջնարդյունքները՝ շրջանավարտների կարողությունները, հմտությունները, ոչ միշտ են համընկնում, որը դժվարացնում է շրջանավարտների շարժունությունը աշխատաշուկայում:

Բուհի ուսանողն իրավունք ունի մասնակցելու ուսումնական հաստատությունների համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ օրենսդրորեն նախատեսված կամ համալսարանի կանոնադրությամբ: Սակայն դրա հետ մեկտեղ կրթական բարեփոխումների ներկայիս գործընթացը դեռևս մտահոգիչ կողմեր ունի, մասնավորապես.

- ուսանողության գերակշիռ զանգվածը հիմնականում օտարված է կրթական բարեփոխումների գործընթացից,
- դեռևս ցածր է կրթական բարեփոխումների գործընթացում ուսանողության՝ որոշումներ կայացնելու մասնակցության աստիճանը:

Այս առումով կարևոր է «լսել» ուսանողներին և հաշվի առնել նրանց վերաբերմունքը բուհական համակարգում ընթացող կրթական բարեփոխումների նկատմամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բոլոնիայի գործընթացը միանաշանակ չի ընկալվում ԲԿԵՏ-ում՝ կապված մի շարք գործոնների հետ:

¹Eurodoc Survey I, Descriptive Report, 2009, page 32

Նախ և առաջ՝ ավանդական կրթական ավանդույթներ ունեցող երկրների (Միացյալ Թագավորություն, Գերմանիա, Ֆրանսիա) որոշ խոշորագույն համալսարաններում դժվարությամբ են հրաժարվում բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում ազգային ձեռքբերումներից և Բոլոնիայի գործընթացի համընդհանուր չափանիշների կիրառումը միանշանակ չի ընկալվում: Նկատվում է նաև կրթության որակի ճանաչման ոլորտում խտրականության սկզբունքի կիրառումն առավել հանրաճանաչ և խոշորագույն բուհերի կողմից: Հատկապես այն ակնառու է դրսևորվում կրեդիտների միջբուհական փոխանակման գործընթացում, երբ ԲԿԵՏ-ի զարգացող երկրներից կրեդիտները մեծամասամբ դժվարությամբ են ընդունվում զարգացած երկրների խոշորագույն համալսարաններում:

Երկրորդ՝ Բոլոնիայի գործընթացի գործիքակազմի կիրառումն առավել արդյունավետ է իրագործվում խոշոր և ֆինանսապես առավել կայուն համալսարաններում, որոնք կարողանում են ապահովել շարժունության ֆինանսավորում, կրթական նոր և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառում, որակի ապահովման արդյունավետ վերահսկում: Արդյունքում միջին և փոքր համալսարանները չեն կարողանում լոկոմոտիվի դեր ստանձնել Բոլոնիայի գործընթացում և ակտիվ դերակատարում չունեն ԲԿԵՏ կառուցման ճարտարապետությունում: Ուստի, նրանց մնում է միայն հետևել ուժեղներին՝ ընդունելով վերջիններիս կողմից սահմանված կրթական ծառայությունների մատուցման չափանիշները և կանոնները:

Երրորդ, բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ընդգրկված երկրներն ունեն տարբեր քաղաքական և սոցիալական ռազմավարական դրսևորումներ, իսկ վերջին աշխարհաքաղաքական դրսևորումները այդ տարբերությունները այնքան սրեցին, որ ԱՊՀ երկրներն իրենց սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները կապելով առավելապես եվրոպական տնտեսական միության հետ, փոքր-ինչ պասիվացան եվրոպական կրթական շուկայում: Հետևաբար, եթե Բոլոնիայի գործընթացի սկզբնական շրջանում առավելապես կարևորվում էին ազգային և ավանդական կրթական առանձնահատկությունների շրջանցումը և համընդհանուր կրթական չափորոշիչների մշակումը, ապա ներկայումս արդիական են համարվում աշխարհաքաղաքական ստեղծված բարդ իրավիճակում ԲԿԵՏ երկրներում ավանդույթի ուժով ձևավորված կրթական համակարգերի ներդաշնակեցման հիմնախնդիրների լուծումները:

Հիմնաբաներ. ուսանող կենտրոն ուսուցում, ակադեմիական շարժունություն, որակի փոխճանաչում, կրթության միջազգային շուկա:

BOLOGNA PROCESS CONSEQUENCES IN ARMENIAN UNIVERSITIES

Sergo Yeritsyan

The Bologna process, which is in the higher education system current reform cornerstone, in the course of many years has given rise to diverse interpretations and feedbacks in Armenia. Concerning publications and official reports, we can find varied comments about the Bologna process outcomes, as in Armenia, as well as in Europe.

Key words: student orientated education, academic mobility, quality recognition, international education market.

РЕЗУЛЬТАТЫ БОЛОНСКОГО ПРОЦЕССА В УНИВЕРСИТЕТАХ АРМЕНИИ

Серго Ерицян

Болонский процесс является главным локомотивом реформ в системе высшего профессионального образования в Армении. В статье анализируются результаты Болонского процесса и влияние реформ на деятельность вузов Армении, что и формирует дальнейшие пути реформирования высшего образования в стране. Также представляется сравнительный анализ результатов Болонского процесса между Армянскими и европейскими вузами.

Ключевые слова: студенто-ориентированное обучение, академическая мобильность, оценка качества, международный рынок образовательных услуг.

ՀՀ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԻՆԵՐԸ

Ատոմ Մխիթարյան

2005թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին՝ ստորագրելով Բերգենի կոմյունիկեն² և դառնալով կազմավորվող Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) մաս: ԵԲԿՏ ինտեգրումը ենթադրում էր ՀՀ բարձրագույն կրթության համակարգում խորքային փոփոխությունների իրականացում Բոլոնիայի գործընթացի մշակված պահանջներին համապատասխան, այդ թվում՝ որակավորումների եռաստիճան համակարգի ներմուծում, բուհերում կրթական և գիտական գործընթացների ինտեգրացիա:

Հայաստանում բարձրագույն կրթության մեկ աստիճանից՝ երկաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա) համակարգին անցումը սկսվել է դեռևս վաղ 90-ական թվականներից: 1992-ին Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, այնուհետև, 1995-ին Երևանի պետական համալսարանն ու 1998թ.-ին Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիան կիրառեցին բարձրագույն կրթության երկաստիճան համակարգը, 1991 թվականից մագիստրոսի կրթական ծրագրով իր գործունեությունը Երևանում սկսեց Հայաստանի ամերիկյան համալսարանը: Փաստենք, որ բակալավրի և մագիստրոսի որակավորումները օրենսդրորեն ամրագրվեցին միայն 1999 թվականին՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքով³:

2004 թվականին, մինչ օրս գործող «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ Հայաստանի բոլոր բուհերում դադարեցվեց ընդունելությունը դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով, իսկ նույն անուն որակավորումը հավասարեցվեց մագիստրոսի որակավորմանը: Այս օրենքում⁴ դեռևս ամրագրված է, որ բարձրագույն կրթության որակավորման համակարգը երկաստիճան է՝ բակալավր և մագիստրոս (հոդված 5): ԵԲԿՏ-ում ընդունված բարձրագույն կրթության երրորդ աստիճանը, մեզ մոտ ասպիրանտուրան, ավելի քան տասներկու տարի գործող օրենքում համարվում է հետբուհական կրթություն, չնայած՝ իրականացվում է հիմնականում հենց բուհերում: Մեր կարծիքով հարկավոր է փոփոխել օրենքը և Հայաստանում վերջապես անցնել բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի: Հենց օրենքում անհրաժեշտ է ամրագրել, որ դոկտորանտուրան (այժմ՝ ասպիրանտուրա) բարձրագույն կրթության երրորդ աստիճանն է, միաժամանակ, հրաժարվելով «հետբուհական» բառից: Գործող օրենքը նախատեսում է նաև «հետազոտողի որակավորման» շնորհում հետբուհական մասնագիտական կրթության եռամյա ծրագրի ավարտին: Օր առաջ հարկավոր է օրենքից հանել «հետազոտողի որակավորում» արտահայտությունը: Դա որակավորման աստիճան է, որ պիտի տրվեր «հետազոտողի» կրթական ծրագրով ուսանողներին՝ ծրագիրն հաջողությամբ ավարտելուց հետո (հոդված 8, հոդված 9): Մակայն ստացվում է, որ օրենքն ըստ էության չի գործել. հետազոտողի որակավորում համալսարանները չեն տվել (որոշ բացառություններով), կամ՝ այն որևէ գործատուի, այդ թվում և հենց համալսարանների մոտ որևէ նշանակություն չի ունեցել և դեռևս կիրառելի չէ: Այսպիսով, ինչպես Բոլոնիայի գործընթացն է մեզ հուշում, և ինչպես արևմտյան երկրներում է՝ բարձրագույն կրթության երրորդ աստիճանն ավարտելիս պետք է շնորհել դոկտորի (մեզ մոտ՝ գիտությունների թեկնածուի) գիտական աստիճան՝ ատենախոսության պաշտպանության արդյունքում:

Օրենքում ամրագրված մյուս չգործող ինստիտուտը դոկտորանտի ինստիտուտն է՝ «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի

²Communique of the Conference of European Ministers responsible for Higher Education, Bergen, 19-20 May, 2005

³«Կրթության մասին» ՀՀ օրենք, 1999թ., հոդված 24

⁴«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 2004 թ.

գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստելու համար համապատասխան կարգով ձևակերպված անձը» (հոդված 3): Ըստ էության սա նախկինից մնացած, օրենքում ամրագրված, սակայն այժմ չօգտագործվող ինստիտուտ է: Առավել ևս, երբ գիտական առաջին աստիճանը օրենքով վերանվանվի «դոկտոր» ինչպես երաշխավորում է UNESCO-ն⁵, բարձրագույն կրթության երրորդ աստիճանը տրամաբանորեն կարելի է վերանվանել «դոկտորանտուրա»՝ «ասպիրանտուրայի» փոխարեն: Գիտական երկրորդ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտություն չկա կրթական որևէ ծրագիր իրականացնել, առավել ևս, որ այժմ էլ ոչ ոք դրա կարիքը չի զգում: Ավելին, գիտական երկրորդ աստիճանը ուղղակի կապ չպիտի ունենա կրթության հետ, դա զուտ գիտական, հետազոտական աշխատանքի արդյունք է, ուրույն ներդրում, ավանդ գիտության որոշակի բնագավառում: Գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հավակնորդն իր ատենախոսությունը պատրաստելիս, թերևս, պետք է բավարարի միայն մեկ պայմանի՝ ունենա գիտական առաջին դոկտորի աստիճան:

Օրենքում ամրագրված հիմնական հասկացություններից հաջորդը, որը ևս մեր կարծիքով պետք է տեղ չունենա նոր օրենքում, հայցորդն է՝ «բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձը, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը» (հոդված 3): Սա Հայրենական Մեծ պատերազմից հետո ԽՍՀՄ-ում ներդրված ինստիտուտ էր, որ պետք է ծառայեր որպես գիտական կադրերի պատրաստման ժամանակավոր միջոց՝ մեծ զոհերի պատճառով առաջացած բացը լրացնելու համար: Մինչդեռ, այն դեռևս մնալով մեր գիտակրթական համակարգում՝ ավելի շատ ծառայում է որպես գիտության ոլորտի հետ որևէ ուղղակի կապ չունեցող անհատների համար գիտական աստիճան ձեռք բերելու հեշտ միջոց: Պատճառներից մեկը, թերևս դա է, որ ՀՀ ԲՈՀ ներկայացվող ատենախոսությունների զգալի մասն անորակ է:

Էական փոփոխությունների կարիք ունի ՀՀ-ում աստիճանաշնորհման ողջ համակարգը, որը կարելի է ամրագրել առանձին օրենքով: Բերենք այն հայեցակարգային հիմնական դրույթները, որոնք, մեր կարծիքով, հստակեցման կամ փոփոխությունների կարիք ունեն:

Ատենախոսությունների պաշտպանության համար պահանջվում է նախապես տպագրված առնվազն վեց գիտական հոդված ունենալ ԲՈՀ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակություններում, կամ առնվազն մեկ տպագրված հոդված՝ **web of science** կամ **scopus** միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում (այդ դեպքում կպահանջվի ևս երկու տպագրված հոդվածի առկայություն): Ընդ որում, այս պահանջը համընդհանուր է և տարածվում է բոլոր մասնագիտություններով պաշտպանվող ատենախոսությունների վրա: Եթե բնագիտության՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մեխանիկայի կամ մաթեմատիկայի բնագավառներում միջազգային շտեմարաններում ընդգրկված ու որոշակի ազդեցության գործակից ունեցող գիտական պարբերականներում հոդված ունենալը մեծ խնդիր չէ, ապա նույնը չի կարելի ասել հումանիտար ու հասարակագիտական բնագավառում պաշտպանության ներկայացվող ատենախոսությունների համար: Առաջադրվող պահանջը շատ կարևոր է, և անշուշտ, նպաստում է հայրենական գիտության միջազգային ճանաչմանն ու ազդեցության աճին: Սակայն, ցավոք, մյուս կողմից, շատ են հայկական գիտական պարբերականներն ու շատ ցածր է դրանց ազդեցության մակարդակը:

Անհրաժեշտություն կա օրենսդրորեն կարգավորելու նաև հայկական գիտական պարբերականներին ներկայացվող պահանջները այնպես, որ բարձրանա արհեստավարժության մակարդակը, ամրապնդվի գիտականությունն ու դուրս գա արհեստականությունը: Ցանկալի է ստեղծել գիտական հրատարակությունների ազգային գրանցամատյան, մշակել ու իրականացնել գիտական ամսագրերի ու ժողովածուների ուժեղացման քաղաքականություն, խրախուսել դրանց ընդգրկումը միջազգային շտեմարաններում:

⁵<http://www.uis.unesco.org/Education/Documents/isc2011-en.pdf>

Նշենք, որ այս հարցն օրախնդիր է հատկապես հայագիտության համար, որի միակ ու հիմնական աջակիցը պետք է հայոց պետությունը լինի:

Հետաքրքիր է, որ Հայաստանն այն փոքրաթիվ երկրների շարքում է, որտեղ ատենախոսությանը զուգահեռ պարտադիր է ունենալ սեղմագիր, որը պետք է արտացոլի ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Ընդ որում, սեղմագիրը պետք է հրապարակվի համապատասխան բուհի կամ գիտական կազմակերպության էլ.կայքում: Սա լավ հնարավորություն է երկրի գիտական նորությը մեկտեղելու ու համակարգված ներկայացնելու համար, առավել ևս, որ սեղմագրերի պարզայում, ի տարբերություն ատենախոսությունների, հեղինակային իրավունքի խնդիրներ չեն կարող առաջանալ, դրանք տպագրվում են առնվազն 50 օրինակով ու տարածվում մասնագետների շրջանում, տրամադրվում գրադարաններին ու մասնագիտական կազմակերպություններին:

Այստեղ, թերևս, սեղմագրերի թարգմանության ու օտար լեզվով (անգլերենով) միջազգային հանրությանը ներկայացնելու խնդիրն է կարևորվում: Խնդրի լուծումը կարելի է տալ պետականորեն ֆինանսավորվող առանձին ոչ մեծ ծրագրով, որի իրականացումը, մի կողմից, կնպաստի հայ գիտնականների ու հայրենական գիտական արդյունքի միջազգայնացմանը, մյուս կողմից՝ այդքան տարածված գրագողության կանխմանը:

Մասնագիտական խորհուրդները նախկինից մնացած, ատենախոսությունների պաշտպանությունը կազմակերպող ու իրենց, կարելի է ասել, սպառած օղակներ են: Աստիճանաշնորհման խորհրդային համակարգը ժառանգած գրեթե բոլոր երկրները հրաժարվել են 1-2 տասնյակ անդամ ունեցող մասնագիտական խորհուրդների «ծառայություններից», իսկ արևմտյան երկրներում արդյունավետորեն գործում են 3-5 հոգանոց մասնագիտական խմբերը: Մեզանում ևս օր առաջ անհրաժեշտ է հրաժարվել ոչ արդյունավետ, մշտապես գործող մասնագիտական խորհուրդներից և փոխարենը յուրաքանչյուր պաշտպանության համար կազմավորել փոքր մասնագիտական խմբեր: Խմբերում հնարավորինս ընդգրկել մասնագետներ արտասահմանից:

Ասենք, որ վերջին շրջանում նույնիսկ Ռուսաստանում են սկսել կազմակերպել «արևմտյան տիպի» պաշտպանություններ: Սակայն Պետերբուրգի պետական համալսարանում, օրինակ, ատենախոսության պաշտպանության համար ստեղծվում է յոթ հոգանոց խումբ, որում առնվազն երկուսը նույն համալսարանից են, առնվազն երկուական մասնագետներ էլ՝ Ռուսաստանի այլ, նաև արտասահմանյան համալսարաններից: Ընդ որում, այսպիսի պաշտպանությունների արդյունքում ատենախոսին շնորհվում է ոչ թե գիտությունների թեկնածուի, այլ դոկտորի (PhD) գիտական աստիճան: Հայաստանի գիտական պոստենցիալը, մեր բուհերի, գիտնականների ու գիտական կազմակերպությունների ունեցած կապերը լիովին բավարար են մեր երկրում միջազգային ստանդարտներին համապատասխան պաշտպանությունների կազմակերպման համար: Այս դեպքում կկարողանանք հրաժարվել նաև պաշտոնական ընդդիմախոսների ծառայություններից և մասնագիտական խմբում ընդգրկված բոլոր մասնագետները հավասարապես նաև ընդդիմախոսներ կլինեն:

Ներկայացնելով արևմտյան զարգացած երկրներում դոկտորանտուրայի կազմակերպման փորձը և համեմատական վերլուծություններ կատարելով ՀՀ ասպիրանտական համակարգում ձևավորված իրողության հետ, հանգում ենք այն եզրակացության, որ հանդիսանալով Բոլոնիայի համաձայնագրի անդամ երկիր, մեր հանրապետությունը պետք է արմատական փոփոխություններ իրականացնի բարձրագույն կրթության երրորդ աստիճանում: Սակայն, միաժամանակ, համոզմունք ենք հայտնում, որ Զալցբուրգյան⁶ սկզբունքների հենքով բարեփոխումներն իրականացվելու են սահուն ու հետևողական, հաշվի առնելով գիտական հանրության կարծիքը:

Կտրուկ բարեփոխումների խոչընդոտ է ֆինանսական գործոնը: Ասպիրանտուրայում կրթությունը կազմակերպելով հիմնականում ուսանողական կրթավճարներով, դեռևս հնարավոր չէ պատշաճ մակարդակի հասցնել ուսանողների ակտիվ շարժունությունն ու միջազգային համագործակցությունը, լուրջ մտահոգություններ կան, կապված պաշտպանվող

⁶ http://www.eua.be/eua/jsp/en/upload/Salzburg_Report_final.1129817011146.pdf

ատենախոսությունների որակի հետ: Ֆինանսավորման կենտրոնացված աղբյուրների սակավությունը առայժմ թույլ չի տալիս իրականացնել միջգիտակարգային և խորքային հետզոտություններ գիտության բոլոր բնագավառներում, չափազանց ցածր են գիտական ղեկավարների աշխատավարձը, ասպիրանտական կրթաթոշակը, բուհերի ու գիտական կազմակերպությունների լաբորատոր հագեցվածության աստիճանը, որոնք որոշակիորեն խոչընդոտում են արդյունավետ գիտահետազոտական և ուսումնական գործընթացի իրականացմանը:⁷

Ասպիրանտուրայում առաջնահերթություն են համակարգի ինստիտուցիոնալ վերակառուցումները, առանց որոնց բարձրագույն կրթության երրորդ աստիճանում բարեփոխումները մակերեսային բնույթ կկրեն, որին առճակատվեցինք մագիստրատուրայում: Անհրաժեշտ ենք համարում որակի մշակույթի ձևավորման, ակադեմիական ազատությունների ընդլայնման, օրենսդրական դաշտի բարեփոխումներին աջակցման գործիքակազմի կիրառումը բարձրագույն կրթության երրորդ աստիճանում, որոնք պետք է ապահովեն ասպիրանտուրայից դեպի որակապես շահավետորեն տարբերվող դոկտորանտուրային անցման սահուն գործընթացը:

Ակադեմիական միջավայրում բարեփոխումների հանդեպ ձևավորված կարծրատիպը նույնպես լուրջ խոչընդոտ է արմատական վերակառուցումների համար: Ավագ սերնդի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և կրթության մենեջերները դեռևս համոզմունք ունեն, թե գործող ասպիրանտական համակարգը տասնամյակների ընթացքում արդարացրել է իրեն և պետք չէ բարեփոխումների քողի տակ այն «քանդել»՝ ձևափոխելով դոկտորանտուրայի, որը դեռևս չի փորձարկվել մեր երկրում և կարող է ձախողման ռիսկեր պարունակել:⁸

Անշուշտ, հակված ենք այն մտքին, որ չափազանց շտապողականությունը ասպիրանտուրայի և գիտական աստիճանաշնորհման համակարգի բարեփոխումների գործընթացում հարիր չէ: Սակայն, մյուս կողմից, տեղում դոփելն էլ անթույլատրելի է, քանզի եթե այդ համակարգը իրեն լիովին արդարացնում էր Խորհրդային Միության տարիներին, ապա ներկայումս դրա արդյունավետության բարձրացումն ու միջազգային չափանիշներին համապատասխանեցումը օրախնդիր է, ինչպես ամրագրվեց ՀՀ կառավարության 2017թ. ծրագրում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը, ՀՀ բուհերը դանդաղ քայլերով, բայց արմատական վերակառուցումների հաստատակամությամբ պետք է սահուն անցում կատարեն ասպիրանտուրայից՝ դոկտորանտուրայի: Հակառակ դեպքում Հայաստանը պարզապես չի կարող մրցակցային դիրքեր գրավել Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում: Այս առումով, անհրաժեշտ է ամբողջապես վերափոխել բարձրագույն կրթության երրորդ աստիճանի անատոմիան և ստեղծել անհրաժեշտ իրավական դաշտ:

Հիմնաքառեր. ասպիրանտուրա, դոկտորանտուրա, ինստիտուցիոնալ վերակառուցում, գիտական պարբերականներ, մասնագիտական խորհուրդ:

THE WAYS OF LEGISLATIVE REFORMS IN THE SYSTEM OF POSTGRADUATE EDUCATION OF

RA

Atom Mkhitarian

On the basis of international paramount practices, in the article is suggested ways to improve the system of postgraduate education in Armenia. In particular, it is considered urgent transition from graduate school system to a doctoral programs, taking into account the harmonization of training and

⁷ ԵրիցյանՍ., ՃուրլուրյանՍ., Բարձրագույն կրթության մարտահրավերները, “ԷդիթՊրինտ”, Եր. 2012 թ., էջ 125

⁸ ՃուրլուրյանՍ., ՄխիթարյանՍ., Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, հեղինակային հրատ., Եր., 2016 թ., էջ 119

research components of the Armenian and European post-graduate training programs. For this purposes, suggested ways to improve the legislation of Armenia's higher education system.

Keywords - post graduate education, doctorate, institutional restructuring, scientific journals, specialized council.

ПУТИ ЗАКОНОДАТЕЛЬНЫХ РЕФОРМ В СИСТЕМЕ ПОСЛЕВУЗОВСКОГО ОБРАЗОВАНИЯ

РА

Атом Мхитарян

На основе международного передового опыта, в статье предлагаются пути совершенствования системы послевузовского образования в Армении. В частности, считается актуальным срочный переход от системы аспирантуры к докторантуре, с учетом гармонизации учебных и исследовательских компонентов отечественных и европейских программ поствузовского обучения. С этой целью предлагаются пути усовершенствования законодательных актов в системе высшего образования Армении.

Ключевые слова: аспирантура, докторантура, институциональная перестройка, научные журналы, специализированный совет.

VOCATIONALLY EDUCATION ORGANIZATIONAL ISSUES IN ARMENIAN UNIVERSITIES

Nonna Khachatryan

At the launch of the Bologna process the difficulties which would have required a long time to overcome, weren't identified yet. At the starting point it was even predetermined that the process was possible to bring to an end within a decade. However, at present, the Bologna Process "romantics" does not seem to be thoroughly considered, and EHEA countries are well aware that they still have to pass a long way to achieve final results in this area.

Professional educational reforms and EHEA development directions are new challenges in reviewing the Bologna process tools. Currently, the transparency and access to information are highly in demand. If In the recent past it was important, what knowledge was obtained and stored by a graduate student, nowadays it is of importance what s/he can do with this accumulated knowledge, moreover, what skills are needed to use this knowledge.

At present, in the framework of evaluation of the Bologna Process tools implementation an urgent issue is the increasing of the competitiveness of educational services. No matter what importance we attach to the EHEA architecture formation, it will not be effective unless it is addressed to consumers of educational services. The core consumer of vocational education is the graduate student, who strives for education to achieve a better position in the society. Therefore, professional education reforms must first meet the demands of consumers of educational services.

Undergraduate and graduate students, still being university applicants should be confident that they will be in demand in the labor market of the given profession. In this regard, at the current stage of the Bologna process much attention is paid to organizing the targeted learning outcomes, when education is fully addressed to the needs of labor market.

Accordingly, the Bologna process starts to reconsider the traditional learning stereotypes aiming at preparation of creative, proactive and innovative graduates. That is to say that in near future in the framework of students' competitions much more attention must be paid to not only the acquired professional knowledge, but also the ability to manage its implementation. The aim is to attach to the "smart graduate" the characteristic features of a "creative and self-managing professional" as well.

Thus, at Paris summit ahead, there are many problems, some of which are common, to be solved within EHEA. However, each Bologna agreement member country also has some specific national educational reform issues, not excluding Armenia.

High School

The high school in Armenia does not meet its main purpose, that is, to develop graduate university education and vocational orientation to teaching in general university subjects handling. The current gap between high school and university admission systems led to the fact, that university admission testing is organized through databases which are not closely related to vocational orientation. The Testing Database knowledge cannot contribute to a proper introduction of vocational education.

In this regard, in the Armenian high school it will be reasonable:

- to organize academic orientation courses with consolidated directions in which universities can also participate presenting introduction to vocational programs,
- to organize university admission examinations not by standard and universal testing papers, but through the orientation programs to the introduction of vocational fields,
- to organize at high schools bachelor beginner courses and teaching of general subjects, that will allow to unload the university program on one hand, and, to accumulate academic credits, which will become recognized and transferable by universities, on the other hand.

Bachelor degree (BA)

BA has undergone only cosmetic changes and hasn't taken improvements (credit system, individual work, mid-term exams, etc.).

The main targets for considerate reforms in the the bachelor education field should be.

Curricula directed not only to accumulation of knowledge, but most importantly, to the acquisition of professional skills and abilities,

- the graduates' learning outcomes targeting and addressing to the needs of the labor market, as employers are more interested in recruiting skillful, and not only intelligent, graduates,
- the activation of academic credits mobility. Academic credits seem not comprehensive when they remain in universities, and when accumulated, are recorded in the diploma supplement. The credits when not passing from university to university, not only fail to contribute to the mobility of students, but also lose their role in the management system of educational services for which is their main objective.

Master's Degree

If, at present, the Bachelor graduates obtain specialized skills to solve problems in traditional professional fields and accepted in universities, the Master program concept is not completely perceived by Armenian universities, and therefore, does not stand-up in terms of content.

The international experience manifests that Master programs in higher educational institutions are mainly organized through two directions. The "vertical" approach to organization of Masters' education assumes a narrow specialization of a graduate of a Bachelor program, when the center of gravity is directed to deepening the process of the specialty learning. The "horizontal" master education is mainly aimed at not specialization, but the acquisition of a Master's flexible management skills with "researcher - manager - trainer - innovator" components.

The current MA course in Armenian universities has a widespread "vertical" dimension of education, and therefore definitely is not justified and should be subject to reforming in the following areas:

- the master's degree in education should be organized on the basis of scientific research during the whole study period, and not only in the final semester with graduate theses, which often have no practical significance,
- the quality control on Master's thesis has become simply uncontrollable even with a State Examination Commission. Therefore, under the Ministry of Education a "Centralized register of master theses", should be set up which will control plagiarism and monitor the quality,

And finally, a Master's degree should be market-oriented and should mainly take into account the labor market requirements. Otherwise, it loses its mission in society and is often regarded as a "two-year educational excessive burden", or just simply a tool for the entrance to a PhD program.

Postgraduate Education

The study of international and domestic experience in development of doctoral studies makes it obvious that the current post-graduate research and educational system needs radical reform in Armenia. Moreover, it is necessary, to expand the range of academic autonomy in post-graduate courses and give academic freedom to universities in this area, on one hand, and to put forward strict requirements for obtaining concrete results in addressing qualitative research, and for implementing and realizing the innovative proposals, on the other hand.

Traditionally, in Armenia postgraduate studies mainly serve for the intellectual capital formation and for personal career growth. However, time has changed, and science, as well as post-graduate education will strive for innovation market which puts forward requirements for fundamental improvements in the direction of research funding, researchers' learning outcomes, and formation of market-oriented scientific innovations.

Thus, the Bologna process member Armenia has two major directions of vocational education reforms. One is related to the interests of integration and international education services within EHEA, and, the other is linked to domestic issues connected with education, targeted to the needs of the labor market and the efficient realization of educational resources.

Traditionally, Armenian universities mostly viewed as an educational, but not research service providing entities, and therefore they were taking behind position within the former USSR Research institutions. But after independence of Armenia, it became necessary to the development research contained in university environment, because research institutional huge system in current simply collapsed in Armenia. In parallel, science motion developing reforms still is not implemented actively, and therefore the post graduating education and (aspirantura) are not become competitive in country. In the article is discussed ways of enhancing post graduating education system in Armenia.

Currently, in Armenian universities the quality of post graduate education mainly assessing by successfully defenses' dissertation testis. Consequently, the competitive positions of post graduating study is looking only from point of quantity defended dissertations.⁹ However, in Western universities this issue is discussing differently and consequently PhD programs competitive position assessing by following aspects:

- increase the range of more qualified applicant,
- expand the scope competent scientific supervisors,
- developing fundraising process and attracting alternative financial sources in research,
- make stronger the "academy-science market» interrelation,
- possibly harmonizing the skills and competent of post graduate researcher with labor markets needs,
- effectively organizing educational unit in postgraduate educational system,
- expand interdisciplinary postgraduate programs,
- internationalize higher education system,
- the more possible representative in the science market through publications, innovative proposals, research presentations.¹⁰

Let consider some of the factors competitive doctoral designer.

Applicants recruitment

In general, applicants postgraduate education system are included in individual or group research programs, which will be taken into account during the selection of doctoral candidates. Consequently, currently greater attention must to give on post-graduate students recruitment not for subsequent applying exams marks, but also interviews in order to determine the applicant oriented teamwork and group research skills and abilities.¹¹ And it turns out, that priority is to select not only "smart" but also "could well" applicants.

⁹Tshughurian A., Mchitaryan A., From aspirantura to doctorate, "Hysisayin Hamalsaran", Yerevan, 2016, page 25

¹⁰Yerichyan S., Challenges of professional education system in Armenia, "Edit Print", Yerevan, 2012, page 48

¹¹Lovitts, B. E. (2008), The transition to independent research: who makes it, who doesn't, and why. The Journal of Higher Education, 79 (3): pp. 296–297

In this regard, "could well" applicant recruitment responsibility falls on research supervisors, and they are taking into consideration post graduate applicants not only as a students, but also as a labor force during implementation research programs. As a result, science's competitive position in the third cycle education market is more important, than "dissertation testis composition". For this reason, is coming urgent to obtain qualified learning outcomes in PhD education, which are taking consideration by the following factors:

- as far as the applicant is familiar with the up coming research work framework ?,
- what kind of research trajectory he left in master program?,
- what academician and financial risks are in case of fail for doctoral program,
- what was the closely contact doctoral candidate and supervisor before applying to PhD

program.

And it's not accidental, that in Western countries is periodically making sociological surveys' among the PhD students and as a results is coming clear, that doctoral program candidates launch significant skills in their research substance framework, personal capabilities and abilities before applying to third cycle education.¹²

In Armenian reality, where postgraduate studies is not strongly competitive, the listed factors do not play a decisive role in the selection of applicants. Moreover, in general, the scientific supervisor is determined only after applicant applying to PhD program, and consequently above presented background factors is going the second plan, and as primary are presenting of foreign language skills, current grading marks, which from our point of view, are not critical to the quality assurance for post graduate student frontward research.

Supervisors competent

Not only in common cases the famous and well recognized researchers is having the opportunity for able-bodied supervising. The surveys' is determining, that the scientific reputation professors are not always successful scientific supervisors, because most of the time recourses and efforts they are spending on monographs and scientific papers composition, but not on innovation results implementation management process.¹³ Therefore, the supervisors, in addition of academics capabilities, should be also covered the management skills in PhD program framework, in order to support of:

- regulation for effective grouping research work,
- to identify marketing in science and organizing fund rising for PhD program implementation,
- to search for alternative sources of financing PhD programs and new partners from the business, in order to have special research contracts',
- promote interdisciplinary postgraduate programs and support internalization of research outcomes.

Listed skills are evidence, that the supervisor activities are practically targeted to fulfill the needs of the scientific market, in which involved also the young researcher. Therefore, the supervisor functions is not limited for keeping scientific quality assurance of PhD student dissertation, but also coming to support enhancing the competitive positions in doctoral study market.

Conclusion

In Armenia is coming urgent to make reforms in aspirantura organization framework, taking more attention not only to dissertation defense activity, but also to new approaches' of applicant recruitment process, primary making an allowance for sufficient skills and abilities for young researchers doing impending scientific work. Besides, in Armenian universities its time to review the supervisor selection process in aspirantura, and accordingly looking not only for professors, having high-quality reputation, but also young scientists, having excellent management skills in research programs and promoting PhD competitiveness positions in education market.

¹² Eurodoc Survey I, Descriptive Report, 2009, page 45

¹³ Thomas Ekman Jorgensen: Codoc –Cooperation on Doctorial Education Between Africa, Asia, Latin America and Europe, 2008, p.114

Key words: professional education, bachelor degree, supervising, learning outcomes, aspirantura, doctorate, science market

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Նոննա Խաչատրյան

Ավանդույթի ուժով Հայաստանում գործող բուհական համակարգը առավելապես իր գործունեությունը կենտրոնացրել է կրթական ծառայությունների մատուցման վրա, հետին պլան թողնելով հետազոտական ոլորտը: Հիմնականում, հետազոտական գործունեությունը կենտրոնացված էր նախկին ԽՍՀՄ-ում գործող գիտահետազոտական ինստիտուտներում, որոնք Հայաստանի անկախացումից հետո մեծամասամբ դադարեցին գործելուց: Ստեղծված իրավիճակում բուհերում հիմնախնդիր առաջացավ ակտիվորեն զբաղվել գիտական գործունեությամբ, որը հիմնականում պետք է իրականացվեր ասպիրանտուրայում:

Սակայն, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ բուհերում գործող ասպիրանտուրան դեռևս մրցակցային չէ և բարեփոխումների կարիք ունի ինչպես նպատակային, այնպես էլ կազմակերպչական առումներով: Այսպես, դեռևս չեն վերանայվում ասպիրանտի ընտրության մոտեցումները և ընդունելության ժամանակ հաշվի են առնում նրա քննական գնահատականները: Այնինչ, Արևմտյան բուհերում ասպիրանտի ընդունելության ժամանակ առաջնային են համարվում դիմորդի հետազոտական կարողությունները, պատկերացումները գիտահետազոտական խնդիրների լուծման շրջանակում, ինչպես նաև նրա ստեղծարար միտքը: Այսինքն, առավելապես ասպիրանտուրա են ընդունվում ոչ միայն բազմակողմանի զարգացած և խելացի, այլև հետազոտության ոլորտում կարող թեկնածուները:

Վերանայման կարիք է զգում նաև գիտական ղեկավարների նշանակման ինստիտուտը: Ուսումնասիրությունները վկայում են, որ որ գիտական համբավ ունեցող պրոֆեսորները միշտ չէ, որ հաջողված ղեկավարներ են լինում, քանի որ նրանք իրենց ժամանակի և ռեսուրսների մեծ մասը ծախսում են մենագրությունների, ձեռնարկների և հոդվածների շարադրման վրա, հպանցիկ անդրադարձ կատարելով ասպիրանտների գիտական ղեկավարմանը: Ուստի, առաջարկվում է գիտական ղեկավար նշանակել նաև այն երիտասարդ գիտնականներին, որոնք ասպիրանտական ծրագրերի կառավարման հմտություններ ունեն և կարողանում են մրցակցային դիրքերի հասցնել Հայաստանի համալսարաններում գործող ասպիրանտական դպրոցները:

Հիմնադրանք. գիտական ղեկավարում, մասնագիտական կրթություն, բակալավրի աստիճան, ուսումնառության վերջնարդյունքներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, գիտության շուկա:

ОРГАНИЗАЦИОННЫЕ ПРОБЛЕМЫ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В ВУЗАХ АРМЕНИИ

Нонна Хачатрян

Традиционно, действующая вузовская система Армении в основном сконцентрировала свою деятельность на образовательные услуги, оставляя сферу исследования и науки в заднем плане. Исследовательская деятельность была централизована в научно-исследовательских институтах бывшего Советского Союза, которые после независимости Армении практически не функционируют. В сложившейся ситуации в вузах возникла проблема активного наращивания научной деятельности, что особенно должна была проводиться в аспирантуре.

Однако исследования показывают, что система аспирантуры ныне не конкурентоспособна и нуждается в реформировании, как по целевым, так и по организационным аспектам. До сих пор не подвергаются пересмотру принципы подбора аспирантов и при приеме учитываются в

основном отметки вступительных экзаменов. Между тем, в западных вузах при приеме аспирантов первоначально учитываются исследовательские способности абитуриентов, их представления по проведению предстоящих научно-исследовательских работ, а также креативное мышление. Следовательно, в первую очередь в аспирантуру поступают не “умные” или “всесторонне развитые”, а именно способные к исследованиям студенты.

Также подлежит пересмотру институт назначения научных руководителей. Исследования показывают, что не всегда профессора, имея большой рейтинг в области науки, могут успешно руководить аспирантами, поскольку много времени тратят на писание монографий, учебников, научных статей, тем самым мало обращая внимания на деятельность аспирантов. Следовательно, предлагается назначать научных руководителей тех, которые имеют способности эффективного управления послевузовскими программами обучения и умеют поддерживать высокие конкурентно-способные позиции аспирантских школ в университетах Армении.

Ключевые слова: профессиональное обучение, степень бакалавра, научное руководство, конечные результаты обучения, аспирантура, докторантура, рынок науки.

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ ՄԱԿՐՈՀԱՇՎԵԼԿԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Արմեն Ճուղուրյան

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամային հատկանիշների արձանագրման արդեն սկզբնական փուլում անհրաժեշտություն ծագեց ներդաշնակություն ստեղծելու մակրո և միկրո ֆինանսական միջավայրերի համակարգային կարգավորման գործընթացում: Մինչ ճգնաժամը, ֆինանսական ոլորտի կարգավորման ավանդական մոտեցումը հիմնվում էր մակրոտնտեսական միջավայրի կայուն զարգացման ընթացքի սկզբունքների վրա, իսկ միկրոմիջավայրում այն լուծում էր կրեդիտորների, ավանդատուների իրավունքների պահպանման, տնտեսավարող սուբյեկտների անխափան զարգացման, ինչպես նաև բանկերի ֆինանսական կայունության ապահովման խնդիրներ՝ սակայն հաշվենկատության ոչ թե ամբողջական շրջանակի ուսումնասիրման, այլ ռիսկային սահմանափակ գործոնների վերահսկման կտրվածքով:

Ճգնաժամը եկավ ապացուցելու, որ մակրոտնտեսական կարգավորումը փոխլրացման կարիք ունի միկրոտնտեսական միջավայրից, և այն էլ ոչ թե առանձնացված բանկային սուբյեկտների ֆինանսական կայունության պահպանման, այլ դրանց համակարգված ֆինանսատնտեսական գործունեության ճանապարհով, որի թիրախը մակրոտնտեսական ֆինանսական կայունության երաշխիքների ձեռքբերումն է: Արդյունքում, ակտիվ շրջանառության մեջ դրվեցին այնպիսի տերմիններ, ինչպիսիք են «հակացիկլային կարգավորումը», «պրոցիկլայնության կրճատումը», ինչպես նաև «մակրոհաշվենկատության քաղաքականությունը»:

Մեր հազարամյակի սկզբի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում բացահայտվեցին ֆինանսական հատվածի գլոբալացման և միջազգայնացման «թույլ» կողմերը և ի հայտ եկավ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների փոխկապակցությունների իրատեսական գնահատման անհրաժեշտությունը: Փորձը ցույց տվեց, որ ֆինանսական ոլորտի դժվարությունները անմիջապես անդրադառնում են տնտեսական իրական հատվածի վրա: Տոկոսադրույքների տատանումները, բանկերում լուծարելիության պակասուրդը՝ փոխկապակցում են վարկառու կազմակերպությունների վճարունակության հետ: Ճգնաժամային կորուստները մեղմելիս բանկերը առաջնորդվելով սեփական շահերով, առաջին հերթին ձգտում են հաղթահարել սեփական դժվարությունները, խստացնելով վարկավորման, գրավադրման պահանջները, կրճատելով ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխումը: Դրանով, ֆինանսական սեկտորը ակամայից նպաստում է տնտեսական անկմանը, կարծես աջակցելով ճգնաժամերի ցիկլայնությանը: Վարկավորման պրոցիկլայ-

նությունը փոխառուների շրջանում ձևավորում է անվճարունակության շղթայական ռեակցիա և ֆինանսական հերթական մակրոտնտեսական ցնցումների աղիթ է տալիս¹⁴:

Այս առումով, ժամանակակից բանկային տեղայնացված վերահսկողությունը առաջնահերթություն համարվելով, այնուամենայնիվ փոխարացվելու կարիք է զգում մակրոտնտեսական ազդակներով, և ներկայումս ֆինանսական վերահսկողության միջազգային չափանիշների մշակման գործընթացում աստիճանաբար որոշիչ դերակատարում է ստանում մակրոտնտեսական համակարգային վերահսկողությունը: Վերջին շրջանում տնտեսական նորմատիվների սահմանման այնպիսի միտում է նկատվում, որպեսզի կայուն զարգացման առումով ներդաշնակ միջավայր ձևավորվի բանկային գործունեության մակրո և միկրո ֆինանսական վերահսկողության միջև, ուղղված տնտեսավարման ողջամիտ վարկավորման գործընթացին և ֆինանսատնտեսական ճգնաժամերի կանխարգելմանը, կամ առնվազն՝ դրանց վնասների նվազագույն չափերի կառավարմանը:

Հետևաբար, մակրոհաշվենկատության քաղաքականությունը նպատակ է հետապնդում համակարգային ֆինանսական կայունություն ապահովելու, քանի որ մեկ բանկի շրջանակում ֆինանսական ռիսկերի կառավարումը արդյունավետ չէ, և կարևորվում է բանկային ամբողջական ոլորտի վերահսկողությունը, որն էլ բանկերի պրոցիկլայնության կանխարգելիչ դերակատարում ունի¹⁵:

Ֆինանսական միջնորդները, որպես կանոն, աջակցում են տնտեսական աճին, սակայն թերվարկավորման միտումները կամ տնտեսության գերվարկավորումը սղաճային տատանումների պատճառ են դառնում: Ընդ որում, այստեղ կարևորվում է այն հանգամանքը, թե ինչ ամպլիտուդով է թեր կամ գերվարկավորումը ներագրում տնտեսական վերելքին կամ վայրէջքին:

Հետևաբար, պրոցիկլայնությունը հնարավորություն է տալիս բանկերին ազդելու ճգնաժամերի ցիկլայնության ակտիվացման կամ նվազման վրա՝ տնտեսության մեջ տեղաբաշխվող վարկային ռեսուրսների պակասության կամ ավելցուկի ձևավորման շնորհիվ: Այս հիմնախնդիրը քննարկման աղիթ է դարձել դեռևս կես դար առաջ, երբ գրականության մեջ բանկերի պրոցիկլայնությունը վերլուծվում էր երկու փուլից բաղկացած վարկավորման գործընթացի տեսանկյունից, որոնք էին վարկավորման բումը և անկումը¹⁶:

Առաջին փուլը բնութագրվում է տնտեսության մեջ վարկային էքսպանսիայով, իսկ երկրորդը՝ վարկային ռեսուրսների շեշտակի կրճատումներով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսական վերելքը ուղեկցվում է ֆինանսական նորամուծություններով, արժեթղթերի գնաճով, վարկային ցածր տոկոսադրույքներով, որով մեծանում են վարկող վարկային քաղաքականության ռիսկերը: Մակրոտնտեսական աճի պայմաններում, երբ տոկոսադրույքները բարձր չեն, մեծանում է վարկարժանության ռիսկայնությունը: Ցածր տոկոսադրույքները ազդում են դրամական հոսքերի և եկամուտների արժեքման վրա, որոնք կիրառվում են վարկունակության ռիսկերի կառավարման հաշվարկային մոդելներում: Տոկոսադրույքների նվազեցումով բարձրանում է գրավադրված ակտիվների արժեքը, քանի որ ապագա դրամական հոսքերը զեղչվում են ցածր դրույքաչափերով, որն էլ մեղմում է ռիսկայնության հավանական վնասների կանխատեսվող չափերը և պարտատերերի վարկունակության առավել դրական պատկեր է ներկայացնում: Բացի այդ, ցածր վարկային տոկոսադրույքների պայմաններում գրավիչ են դառնում պետական կարճաժամկետ պարտատուները, որոնց խոշորամասշտաբ ձեռքբերումները մի կողմից ավելացնում են բանկերի տոկոսային եկամուտները, մյուս կողմից, ձևավորում են կուտակվող պարտավորությունների «ավելցուկ», որն էլ ճգնաժամային իրավիճակի ստեղծման ռիսկային գործոն է համարվում:

Եթե վարկավորման բումի ժամանակ չեն ձևավորվում համապատասխան ռեզերվներ, ապա դրանով թուլանում է բանկային կապիտալի պաշտպանվածության աստիճանը, արդյունքում բանկերը տնտեսության անկման շրջանում ցուցաբերում են ռեսուրսների տեղաբաշխման գործառնությունների պասիվություն, անգամ ձեռնարկում են վարկավորման կտրուկ նվազեցումներ, որն էլ խորացնում է

¹⁴ Красавина Л.Н. «Системный подход к проблеме экономического роста без усиления инфляции» // Инфляция и экономический рост: теория и практика: Научный альманах фундаментальных и прикладных исследований. Москва 2007. с. 70

¹⁵ Speech by Dr Jens Weidmann, President of the Deutsche Bundesbank / Managing macroprudential and monetary policy – a challenge for central banks/Deutsche Bundesbank/ Berlin. November 2011. 5 pages.

¹⁶ Stiglitz J.E., Weiss A. // Credit rationing in Markets with imperfect information. American Economic Review, 1981. – vol.71. № 3, pp. 393-410.

տնտեսության հետագա անկումը, իրավիճակը ընդհուպ հասցնելով ֆինանսական ցնցումների: Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվարկներով, բանկային կապիտալի համարժեքության մեկ տոկոսով նվազեցումը պատճառ է հանդիսանում ՀՆԱ-ի 1.4%-ի կրճատման, որին հաջորդում է տնտեսական համակարգի զարգացմանը նպաստող անբավարար վարկային ռեսուրսների տոկոսադրույքների բարձրացումը:

Բնականաբար, բարձր տոկոսադրույքների պայմաններում բարեխիղճ վարկառուները հրաժարվում են թանկարժեք վարկերից, տնտեսապես նպատակահարմար չգտնելով վճարել խոշոր տոկոսներ, իսկ անբարեխիղճ վարկառուները մտնելով բարձր տոկոսային բեռի տակ, հետագայում չեն կատարում բանկի նկատմամբ իրենց պարտավորությունները և դրանով վարկարժանության ռիսկեր են ձևավորում: Արդյունքում, բարձր տոկոսադրույքները ոչ միայն նպաստում են տնտեսավարման պասիվացմանը, այլև խթանում են վարկավորման պրոցիկլայնությունը:

Պաշտոնապես, համաշխարհային վերջին ճգնաժամի առաջացման հիմնական պատճառ են համարվել ցածր տոկոսադրույքների առկայությունը և ֆինանսական միջնորդների պրոցիկլային վարքագծի դրսևորումները, որով «ժայթքեց» ԱՄՆ հիփոթեքային շուկայի բուրբ, և դրան հետևեց ռիսկերի կրիտիկական զանգվածի մակրոտնտեսական հաշվեկշռված միջավայրի խախտումները¹⁷: Ցածր տոկոսադրույքների առկայությունը ակտիվացրեց սպեկուլյատիվ գործարքները անշարժ գույքի շուկայում և զուգահեռաբար շուկային մոտ կանգնած «պրոցիկլային» հակում ունեցող ֆինանսական միջնորդները զանգվածային վարկավորման ինտերվենցիա կազմակերպեցին՝ թերագնահատելով ոչ բարեխիղճ ներդրողների կտրուկ աճը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամը բացահայտեց ֆինանսական միջնորդների գործունեության վերահսկողության լուրջ թերացումներ: Մասնավորապես պարզվեց, որ միջազգային կարգավորիչ չափորոշիչները և բանկային գործունեության վերահսկողության միջազգային հայեցակարգը ի գործու չէր կանխարգելելու ֆինանսական ռիսկերը, որոնք ձևավորվում էին վարկավորման բուրբ ժամանակ: Հիմնականում պարզաբանվեց, որ ֆինանսական կարգավորիչները ի գործու չեղան արդյունավետ վերահսկելու այսպես կոչված ոչ թափանցիկ բանկային աստիվների օգտագործումը և բանկային կապիտալի որակական կազմի ձևավորումը, որի արդյունքում ձևավորվեցին բանկային ոլորտի ֆինանսական կայունության թուլացման համակարգային և անհատականացված ռիսկեր:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցածր տոկոսադրույքների կիրարկման պարագայում տնտեսական աճը ձևավորում է դրամավարկային քաղաքականության ռիսկեր: Հիմնականում, նման իրավիճակներում ֆինանսական միջնորդները առավել զգուշավորություն չեն ցուցաբերում պարտատերերի վարկունակության իրատեսական գնահատման վրա, բանկային ոլորտում ձևավորելով համակարգային ռիսկեր: Ցածր տոկոսադրույքների ազդեցությունը մակրոտնտեսական կայունության վրա տեղի է ունենում հետևյալ կերպ: Առաջին հերթին, դրանք իրենց ներազդեցությունն են ունենում դրամական հոսքերի վրա, որոնք հաշվի են առնվում ռիսկերի գնահատման ժամանակ:

Իր հերթին, ցածր տոկոսադրույքները մեխանիկորեն բարձրացնում են գրավադրված ակտիվների արժեքային չափման արդյունքները, քանի որ ապագա դրամական հոսքերը զեղչվում են առավել ցածր գործակիցներով, որն էլ իր հերթին դրական ազդակներ է հաղորդում վարկավորման ռիսկերի գնահատման գործընթացին թուլացնում է բանկային զգուշավորությունը: Արդյունքում, բանկերը ավելացնում են տեղաբաշխվող միջոցների ծավալները, առանց հաշվենկատության կանոնների խստագույն պահպանման: Դրան նաև օժանդակում է այն հանգամանքը, որ ցածր տոկոսադրույքները բերում են ցածր տոկոսային եկամուտներ, և ֆինանսական շուկայում մրցակցային դիրքեր գրավելու համար բանկերում խրախուսվում է վարկային էքսպանսիան, միաժամանակ թուլացնելով վարկառուների վարկունակության գնահատման վերահսկողության գործընթացը:

Տեղաբաշխվող միջոցների զանգվածի կտրուկ աճի պարագայում բանկերը ներգրավվող միջոցների պակաս են զգում, և արդյունքում, ցածր տոկոսադրույքների պարագայում գնելով պետական կարճաժամկետ պարտատոմսեր և ներգրավվելով համեմատաբար էժան փոխառու միջոցներ, կուտակում են մեծածավալ և “հավելուրդային” պարտավորություններ ու նվազեցնում են իրենց ֆինանսական կայունության պաշարը, ձևավորելով ճգնաժամի առաջացման համակարգային ռիսկեր: Այդ գործընթացը

¹⁷ Симановский А.Ю., Кризис и реформа регулирования, //Деньги и Кредит, 12/ 2010, стр.7-8.

բացասական առումով ավելի է խորանում, երբ բանկային կապիտալը չի կրում այն որակական կազմը, որը որ կոդիմակայեր ֆինանսական ճգնաժամին: Արդյունքում, բանկերը վարկային բումի երկարաժամկետ հատվածում սկսում են զգուշանալ, և ի վերջո նվազեցնել միջոցների տեղաբաշխման ակտիվությունը, որն էլ իր հերթին ներագրում է տնտեսական աճի դանդաղեցման վրա: Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվարկներով, բանկերում կապիտալի համերժեքության միան 1% –ի իջեցման պարագայում միջին հաշվով երկրի համախառն ներքին արդյունքը նվազում է 1.4% –ով:¹⁸ Հետևաբար, բանկերում գործող ֆինանսատնտեսական նորմատիվների կարգավորիչ գործառնությունները պետք է միտված լինեն ոչ միայն միկրոտնտեսական, այլև մակրոտնտեսական միջավայրին:

Ճգնաժամի ընթացքում միջազգային ֆինանսական համակարգում պարզաբանումներ տրվեցին, որ միայն մակրոտնտեսական կարգավորման գործիքներով հնարավոր չէ կանխարգելել ֆինանսական շուկաներում ձևավորվող ցնցումները, և անհրաժեշտ է կիրառել նաև միկրոտնտեսական կարգավորող միջոցներ: Հատկապես, շեշտադրումներ պետք է իրականացվեն ֆինասաբանկային գործունեության միկրոկարգավորմանը այնպիսի տնտեսական նորմատիվների օգնությամբ, որոնք միտված են նաև մակրոտնտեսական հավասարակշիռ վիճակի ապահովմանը: Ներկայումս, ֆինանսատնտեսական նորմատիվների զարգացումներ են սպասվում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են “կոնտրեկվայնություն կարգավորումը”, “մակրոհաշվենկատության կարգավորումը”, “կայուն զարգացումը”: Հետևաբար, հատկապես բանկային գործունեության միկրոկարգավորումն է, որ հանդես է գալու ֆինանսական շուկաների կայունության առանցքային երաշխիք:

Առաջին հերթին, ճգնաժամային կանխարգելման պարագայում բանկային վերահսկողություն խնդիրը պետք է համոզմունքով “ֆինանսական պղպղակների” շուկա ներթափանցման արգելափակումը: Մակայն, հենց այդ բացասական երևույթների ձևավորման տնտեսական հիմքում ճգնաժամի տարիներին ընկած էր տոկոսադրույքների արհեստական իջեցումը, վարկավորման բումին աջակցումը ֆինանսական միջնորդների պրոցիկլայնության վարքագծով: Նման պայմաններում ձևավորվեց ֆինանսական շուկաներում անհավասարակշիռ իրավիճակ, որն էլ արդյունք հանդիսացավ բացասական ռիսկերի կրիտիկական զանգվածի կուտակման: Իսկ բանկային համակարգի միկրոկարգավորման գործիքակազմը ի գործու չեղավ կանխարգելելու ռիսկերից հետևող բացասական արդյունքները: Վարկային ցածր տոկոսադրույքները հրահրեցին հիպոթեկային շուկայում աննախադեպ աճ, որն էլ իր շուրջը համախմբեց ֆինանսական այնպիսի միջնորդների, որոնց համար գերագույնը տնտեսական շահն էր, անգամ կիրառելով ոչ սեքյուրիթիզացված վարկային ածանցյալ գործիքներ և կառուցելով ֆինանսական բուրգեր:

Հատկանշական էր, որ նախաճգնաժամային տարիներին բանկային գործունեության միկրոկարգավորման համակարգը կարծես հաշտվել էր ստեղծված իրավիճակի հետ, հույսը դնելով “Բազել-2” համաձայնագրով հաստատված հիմնադրույթների վրա, հաշվի չնստելով այն հանգամանքի հետ, որ վարկավորման բումը հիմնավորված չէր և նամանավանդ վտանգավոր էր՝ երկար ժամանակահատվածում ցածր տոկոսադրույքներ էր կիրարկում: Այս պարագայում, նախ և առաջ, միկրոկարգավորման գործիքները պասիվ դիրք գրավեցին հիպոթեկային ենթավարկավարման ռիսկային գործընթացների կանխարգելման նկատմամբ: Եվ երկրորդ, անգամ ճգնաժամի առաջին ալիքի ի հայտ գալուն պես հիպոթեկային վարկավորման միկրոկարգավորման գործիքակազմը լիարժեք իր կիրարկումը չստացավ, քանի որ բանկերը իրենց իսկ համակարգում ձևավորված ռիսկերը կանխարգելելու փոխարեն, դրանք “նետեցին” ֆինանսական շուկա, առանց հաշվի առնելու, որ միկրոկարգավորման նման վարքագիծը օժանդակում է պրոցիկլայնությանը և հետագարձ հարվածի ներուժ է պարունակում, ձևավորում է “ֆինանսական փուչիկներ” և անհավասարակշռություն վարկային շուկայում:

Ինչպես տնտեսության իրական, այնպես էլ ֆինանսական հատվածում տնտեսական աճի պայմաններում գերշահույթների ստացման մրցավազքը լայնածավալ բնույթ է կրում, որն ի վերջո ճգնաժամային իրավիճակներ է ձևավորում: Տնտեսական ճգնաժամի առաջին ալիքները առաջին հերթին հասնում են ֆինանսական միջնորդներին, ուստի հենց այստեղ առաջնահերթ է համարվում ճգնաժամային կանխարգելիչ միջավայրի ձևավորումը: Այստեղ, պետության կարգավորիչ միջամտությունը չի կարող լիարժեք դերակատարում ունենալ, ուստի բանկային գործունեության հակաճգնաժամային միկրոկարգավորումը ֆինանսատնտեսական նորմատիվների միջոցով էական նշանակություն է ձեռքբերում:

¹⁸ Tamim Bayuomi, Ola Melander // Credit Matters: Empirical evidence on U.S. Macro-Financial Linkages. IMF working paper. July 2008. 27 pages

Հետևաբար, ֆինանսատնտեսական ճգնաժամի ձևավորման պատճառների ցանկում, ցածր տոկոսադրույքների և սպեկուլյատիվ գերշահույթներ ապահովվող գործունեների ցանկին պետք է ավելացնել նաև ֆինանսատնտեսական նորմատիվների կիրառման գործիքակազմի թերությունները, որոնց արդյունքում կառավարելի դարձավ բանկային գործունեության պրոցիկլայնությունը: Ցանկացած պարագայում, պրոցիկլայնության կարգավորումը հանգում է վարկավորման բումի և դեֆիցիտի տատանման ամփոփողի մեղմմանը, որի գծով բանկերը կիրառում են ֆինանսատնտեսական կանխարգելիչ ցուցանիշներ:

Հատկանշականն այն էր, որ միկրովարկավորման վերահսկիչ համակարգը համակերպվելով ստեղծված իրավիճակի հետ, վարկային բումի կանխարգելիչ գործառույթներ չիրականացրեց և բավական երկար ժամանակ արտասովոր ցածր տոկոսադրույքների առնչությամբ պասիվ դիտորդի կարգավիճակ ստանձնեց: Ավելին, պարզվեց, որ վարկային ինտերվենցիան, որը ուղղված էր տնտեսական աճին, պրոցիկլայնություն է դրսևորել և նպաստել է ֆինանսական «փուչիկներ»-ի ձևավորմանը, որը ժամանակին չբացահայտվեց վերահսկողական համակարգի կողմից:

Միաժամանակ պետք է նշել, որ Բազել 2-ը միշտ էլ քննադատվել է իր կողմից սահմանված պահանջների պրոցիկլայնության պատճառով¹⁹: Սակայն, մեր կարծիքով, ռիսկերի վրա հիմնված նորմատիվային կարգավորման և պրոցիկլայնության միջև ժամանակի ընթացքում միշտ էլ գոյություն է ունեցել փոխդիզոմային խնդիր, քանի որ հաճախ հնարավորություն չի ստեղծվում ժամանակի կոնկրետ պահին չափելու կապիտալի «զգայունության աստիճանը» պրոցիկլային ռիսկերի նկատմամբ: Այս առումով, Բազելյան կոմիտեն մինչ ճգնաժամային ժամանակահատվածում իրականում սահմանել էր որոշակի գործիքներ՝ պրոցիկլայնությունը մեղմելու նպատակով: Մասնավորապես, անվճարունակության հավանականությունը հաշվարկելու համար սահմանվել էր երկարաժամկետ պատմական պահանջների օգտագործման պահանջ, որը հաշվի էր առնում տնտեսական ցիկլի բոլոր փուլերի արդյունքները և վիճակագրական շարքի միջին էր հաշվարկում: Սակայն այն վերաբերում էր միայն վարկային ռիսկի գնահատման ներքին վարկանիշային համակարգին (IRB approach) և իրականում չէր կանխարգելում պրոցիկլայնությունը վարկային ռիսկի հաշվարկման ստանդարտացված մոդելում:

Այս նկատառումներով Բազել 3-ով նախատեսվեց բուֆերային կապիտալ՝ ֆինանսական լարվածության պարագայում բանկի վնասների փոխհատուցման համար: Այն բացառապես պետք է ընդգրկվի բազային կապիտալի կազմում: Եթե բանկերը չձևավորեն բուֆերային կապիտալ, ապա կունենան շահաբաժինների և բոնուսների վճարման սահմանափակումներ: Բուֆերային կապիտալի կիրառումը նախատեսում է բանկերի կապիտալի ավելացում բարենպաստ գործարարության ժամանակահատվածում, որը հետագայում կօգտագործվի անկանխատեսելի վնասների փոխհատուցման նպատակով: Նման մոտեցումը կնվազեցնի ճգնաժամի պարբերաշրջանային էֆեկտը: Ընդ որում, կապիտալի կուտակումը հնարավոր է խնայողությունների հաշվին, մասնավորապես շահաբաժինների, աշխատակիցներին պարգևատրումների կրճատման ճանապարհով: Բուֆերային կապիտալի ձևավորմանը կարող են աջակցել մասնավոր ոլորտից ներգրավվող միջոցները: Թվարկված երկու աղբյուրների միջև հավասարակշռություն է սահմանելու ֆինանսական կազմակերպությունը: Եթե 8% կարգավորող կապիտալ ունեցող բանկը ապահովվելով առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի կամ երկրորդ մակարդակի կապիտալի բոլոր նվազագույն պահանջները, արձանագրի կապիտալի փոխհատուցման բուֆերային 0% մակարդակ, ապա պարտադրված կլինի 100% սահմանափակում դադարեցնել միջոցների տեղաբաշխումը:

Շահույթից կատարվող մասհանումների սահմանափակումները, երբ բանկի բուֆերային կապիտալի ձևավորման նորմատիվը չի հաղթահարվել, շարունակում են աճել՝ բուֆերային կապիտալի կրճատմանը զուգահեռ (տես աղյուսակ 1.): Հետևաբար, բանկերը պետք է հնարավորություն ունենան ապահովելու նորմալ գործարարության ընթացք՝ անգամ բուֆերային կապիտալի հաշվին վնասները փոխհատուցելիս:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ բանկային գործունեության վնասները ձևավորվում են դրան նախորդած վարկավորման բուռն աճով: Հետևաբար, ֆինանսական ոլորտի անկումը ազդում է տնտեսության իրական հատվածի վրա, որն էլ կարող է շրջափուլային դրսևորումներ ունենալ: Հակացիկլային կապիտալի ձևավորումը բանկային համակարգում նպատակ է հետապնդում լրացնելու բուֆերային կապիտալին և պահուստներ ձևավորելու տնտեսության ակտիվ

¹⁹ Michael B., Procyclicality in Basel II: Can We Treat the disease without killing the patient May 12, 2004, pages 44-46.

վարկավորման ժամանակահատվածում, ցույց տալով, որ բանկը պատրաստակամ է «պաշտպանելու» իր կապիտալը ակտիվ գործարարությանը հաջորդող հնարավոր ֆինանսական ճգնաժամի ընթացքում: Ընդ որում, բուֆերի նպատակը ոչ միայն ճգնաժամային ռիսկերի մեղմումն է, այլև վարկավորման գերաճին հակազդելը:

Շահույթի օգտագործման սահմանափակումների սանդղակը՝ բուֆերային կապիտալի ձևավորման նորմատիվները չապահովելիս²⁰

Աղյուսակ 1.

Բուֆերային կապիտալի չափը, %	Շահույթի բաշխման սահմանափակումները %
< 0,625	100
0,625-1,25	80
1.25-1.875	60
1,875-2,5	40
> 2,5	0

Սակայն դժվար է կանխատեսել ֆինանսատնտեսական ճգնաժամի գալուստը և դրանից ելնելով՝ հակացիկլային կապիտալի ձևավորման մեկնարկի պահը: Հետևաբար, պահանջ է դրվում տվյալ պահուստի ձևավորումը սկսել այն ժամանակ, երբ մասնավոր հատվածին հատկացվող վարկերի չափաբաժինը անցնում է ՀՆԱ-ում սահմանված նորմատիվային շեմը: Այս առումով նախատեսվում է համեմատել վարկավորում/ՀՆԱ ցուցանիշի դինամիկայի տրենդը փաստացի ցուցանիշի հետ, և ստեղծված շեղման հիմքով ձևավորել բուֆերային կապիտալ²¹: Այսպիսով, վերահսկիչ կազմակերպությունը պետք է մշտադիտարկման ենթարկի վարկավորում/ՀՆԱ ցուցանիշը և նախանշված սահմանագծի գերազանցման դեպքում, վարկային ռիսկի մեղմման նպատակով՝ պահանջ ներկայացնի բանկերին 12 ամիս հետո հակացիկլային կապիտալի ձևավորման համար: Հակացիկլային բուֆերը փաստորեն ընդգրկված է առաջին մակարդակի բազային կապիտալում և կարգավորում է բանկի շահույթի բաշխման գործընթացը:

Ֆինանսատնտեսական համաշխարհային ճգնաժամը եկավ ապացուցելու, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսության վարկավորումը դեռևս պրոցիկլայնության (procyclicality) վառ դրսևորումներ չունի: Այսպես, անգամ ճգնաժամի տարիներին, երբ տնտեսության ՀՆԱ-ն կտրուկ նվազում ապրեց, վարկավորում/ՀՆԱ ցուցանիշը աճման միտումներ արձանագրեց, որի պատճառը ճգնաժամային տարիներին վարկավորման ոչ թե կրճատումն էր, այլ հակառակը՝ ավելացումը:

Սակայն, միջազգային ֆինանսական համակարգում Բազել 3-ի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ կարճաժամկետ (18 եռամսյակ) և երկարաժամկետ (32 եռամսյակ) կտրվածքով բանկային համակարգի ազդեցությունը տարբեր կերպ է ազդում տնտեսության աճի վրա: Ենթադրվում էր, որ կարճ ժամանակաընթացքում բանկերը կարող են ընտրել տոկոսադրույքները բարձրացնելու և վարկավորման ծավալները կրճատելու տարբերակը, որպեսզի կարողանան հաշվի առնել վարկային էքսպանսիան զսպող պահանջները: Երկար ժամանակահատվածում այդ գործընթացը կարգավորվելու էր գործարար ակտիվության ցուցանիշներով (եկամտաբերություն, նորամուծական ծրագրերի իրագործում և այլն):

Հետազոտությունները վկայում են, որ ցուցանիշների վատթարացման վրա կարող է ազդել նաև միջազգային տարածման էֆեկտը (international spillovers), որը ֆինանսական և առևտրային ինտեգրացման ուղիներով մեծացնում է բացասական ազդեցությունը ՀՆԱ-ի վրա 0.03 տոկոսային կետով 18-րդ եռամսյակում, և 0.02 կետով՝ 32-րդ եռամսյակում²²: Հետևաբար հաշվի առնելով միջազգային ինտեգրացման գործոնը, կապիտալի նոր պահանջների ձևավորման արդյունքում ՀՆԱ-ի գուտ անկումը կկազմի 0.23%, իսկ իրացվելիության մասով՝ 0.13%:

²⁰ Юденков Ю.Н., «Финансовый менеджмент»./Внутренний контроль в кредитной организации, #4, 2011, стр. 24-27.

²¹ Хандруев А., «Базель III отобьет аппетит к риску», //Прямые инвестиции, #11 (127), 2012, стр. 75-76.

²² Basel III definition of capital - Frequently asked questions, December 2011 (update of FAQs published in October 2011), BCBS.

Սակայն, դրա հետ մեկտեղ, Բազել 3-ի կողմից սահմանվող պահանջները էականորեն կմեղմեն վարկավորման պրոցիկլայնության ազդեցությունը մի շարք պատճառներով:

Առաջին, քանի որ կապիտալը համարվում է բանկային ակտիվների ֆինանսավորման համեմատաբար թանկ եղանակ և հետևաբար ոչ ճգնաժամային պայմաններում կապիտալի բուֆերի ստեղծումը կբերի վարկավորման ծախսերի ավելացմանը, վարկերի թանկացմանը, որն էլ իր հերթին կզսպի վարկային էքսպանսիան տնտեսական բուռն զարգացման ժամանակահատվածում: Ընդ որում, Բազել 3-ի պահանջով բուֆերների ձևավորումը անհապաղ պետք է իրագործել, եթե վարկավորման աճի տեմպը գերազանցում է պատմական տրենդը:

Երկրորդ, համաձայն Բազելյան կոմիտեի պահանջի, յուրաքանչյուր երկիր ինքնուրույն պետք է հաշվարկի վարկավորման աճը և դրան առնչվող մակրոտնտեսական ցուցանիշների այն համախումբը, որոնք կարող են համակարգային ռիսկերի ձևավորման ազդակ հանդիսանալ:

Երրորդ, բուֆեր սահմանելու կամ դրա մեծությունը ավելացնելու որոշումը պետք է հրապարակվի այն ուժի մեջ մտնելուց առնվազն 12 ամիս առաջ, որպեսզի բանկերը հնարավորություն ունենան համալրելու իրենց կապիտալը: Հակառակ դրան, բուֆերի մեծությունը նվազեցնելը կամ այդ պահանջը չեղյալ հայտարարելը կարող է ուժի մեջ մտնել համաճարձի որոշման ընդունման պահից:

Չորրորդ, կապիտալի հակացիկլիկ բուֆերը կարող է սահմանվել ռիսկով կշռված ակտիվների 0-2.5%-ի չափով, հաշվի առնելով համակարգային ռիսկերի չափը:

Հինգերորդ, հակացիկլիկ բուֆերի ձևավորման գծով սահմանված պահանջների չկատարման հետևանքները նույնն են, ինչ որ բանկային կապիտալի պահպանման բուֆերի ձևավորման խախտումների հետևանքների, ինչպիսիք են շահաբաժիններ բաշխելու, սեփական նախաձեռնությամբ բաժնետոմսեր հետգնելու, աշխատակիցներին պարգևատրելու գործընթացում սահմանափակումներ մտցնելու որոշումները²³:

Այսպիսով, ֆինանսական ճգնաժամին նախորդող և գերաբազ տեմպերով աճող վարկավորման փուլը ապակայունացնում է բանկային համակարգը և ձևավորում է արատավոր շղթայական ռեակցիա, որտեղ ֆինանսական համակարգում առաջացող խնդիրները նպաստում են տնտեսության իրական հատվածի անկմանը, ինչն էլ իր հակադարձ բացասական ազդեցությունն է թողնում ֆինանսական համակարգի վրա: Հայրենական բանկային համակարգը կիրառելով Բազելյան կոմիտեի նոր պահանջները, հնարավորություն կունենա ոչ միայն լոկալացված վերահսկողություն սահմանելու բանկերի ֆինանսական կայունության վրա, այլև կարող է ճգնաժամային փուլում իրական տնտեսության վարկավորում իրականացնել, առանց վտանգելու բանկերի ֆինանսական կայունությունը և պրոցիկլայնության պասիվության պահպանումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ֆինանսատնտեսական վերջին գլոբալ ճգնաժամը բացահայտեց ֆինանսական միջնորդների գործունեության վերահսկողական համակարգի բացթողումները: Արդյունքում, միջազգային կարգավորիչ ստանդարտները ի գործու չգտնվեցին կանխարգելելու բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը, որոնք ոչ միայն հիմնավոր չգնահատվեցին հատկապես համակարգային և շղթայական փոխազդեցության տեսանկյունից, այլև վերահսկողության դիտակետում կարծես աննկատ մնացին մինչ ճգնաժամի սկիզբը: Բանկերում ձևավորվեցին մինչ այժմ չարժեվորված ռիսկային արդյունքային կուտակումներ, որոնք դուրս մնացին կառավարման և վերահսկողության ոլորտից:

Հիմնաբառեր. բուֆերային կապիտալ, ֆինանսատնտեսական ճգնաժամ, Բազելյան նորմատիվներ, մակրովերահսկողություն:

INTERPRETATION OF FINANCE – ECONOMIC NORMATIVES IN TERMS OF MACROECONOMIC PRUDENTIAL

Armen Tshuguryan

Already in the initial phase of shows signs of the global financial and economic crisis, it became necessary to harmonize the formation processes of micro and macro economic regulation in the financial environment. Before the

²³ Guidance for national authorities operating the countercyclical capital buffer, Basel Comity, BCBS, December 2010, pages 8-10.

crisis, the traditional approach of regulation of the financial sector came from the principles of a stable micro-economic regulation, not paying enough attention to the preservation of macroeconomic prudence. The article discusses issues for keeping macroeconomic prudence in terms of the Basel Principles.

Keywords: buffer capital, finance-economic crisis, Basel noramtivы. macrocontrol.

ИНТЕРПРЕТАЦИЯ ФИНАНСОВО – ЭКОНОМИЧЕСКИХ НОРМАТИВОВ С ТОЧКИ ЗРЕНИЯ МАКРОЭКОНОМИЧЕСКОЙ ПРУДЕНЦИАЛЬНОСТИ

Армен Джугурян

Уже в первоначальной фазе проявления признаков глобального финансово-экономического кризиса становилось необходимым гармонизировать процессы микро и макро экономического регулирования финансовой среды. До кризиса, традиционный подход регулирования финансового сектора исходил из принципов стабильного микроэкономического регулирования, не уделяя достаточного внимания на сохранение макроэкономической пруденциальности. В статье обсуждаются вопросы сохранения макроэкономической пруденциальности с точки зрения базельских принципов.

Ключевые слова: буферный капитал, финансово-экономический кризис, базельские нормативы, макро контроль.

TAX PLANNING DEVELOPMENT ISSUES IN UNIVERSITIES

Hamed Mirzaei

A **tax** (from the Latin *taxo*) is a financial charge or other duty imposed upon a taxpayer (an individual or legal entity) by a state or the functional equivalent of a state to fund various public expenditures. A failure to pay, or evasion of or resistance to taxation, is usually punishable by law. Taxes consist of direct or indirect taxes and may be paid in money or as its labour equivalent. Some countries impose almost no taxation at all, or a very low tax rate for a certain area of taxation.

Tax accounting is the accounting process that focuses on tax issues - including filing tax returns and planning for future tax responsibilities - as opposed to the preparation of financial statements. **Tax accounting** targeted to the preparation, analysis and presentation of tax returns and tax payments. The method of accounting that focuses on tax issues; this includes all activities related to filingtax returns and planning for future tax obligations.

Tax accounting is a specialized field of accounting where accountants focus on the preparation of tax returns as well as tax planning for future taxable years. Principles of tax accounting differ from the International Financial Reporting Standards (IFRS) principles. Tax accountants must understand the regulations contained within the Internal Revenue Code, which lists the rules for tax returns that all individuals and companies must follow. Tax accountants also must stay on top of changes in IRS regulations, which occur on a yearly basis.²⁴

Taxable income is computed under rules that differ materially from generally accepted accounting principles. Since only publicly traded companies are required to prepare financial statements, many non-public companies opt to keep their financial records under tax rules. Corporations that present financial statements using other than tax rules must include a detailed reconciliation of their financial statement income to their taxable income as part of their tax returns. Key areas of difference include depreciation and amortization, timing of recognition of income or deductions, assumptions for cost of goods sold, and certain items (such as meals and entertainment) the tax deduction for which is limited.

Currently in Armenia from point of view of enlargement of information flows of business activity, the accounting system is divided by following directions:

1. Financial accounting
2. Managerial accounting

²⁴Juguryan A., Khachatryan N., Economy of Professional Education Implementation, "Edit Print", Yerevan, 2010, pp 34-35

3. Tax accounting

Although, this three direction is performing in parallel in accounting system of universities and taking information on double entry bases by strongly interrelations, however, simultaneously there are functional specifics, considering the motivations of accounting information different users.

Managerial accounting purposes are providing information for inter companies decision making. In this scope is making cost flow analyzing, profitability performance, capital using outcomes analyzing. Information, providing from financial accounting, is mostly using from external decision makers, such as investors, suppliers', banks, when business partners is interested about financial stability level company or commercial activity indicators. Tax accounting, mainly providing information for using governmental tax services, giving information about taxation bases, calculation of deferent taxes, companies tax obligations and tax returns, and performing also statements according tax service forms.²⁵

Traditionally, university activity financing sources is mainly available by governmental supporting, such as subsidiaries, grand's, public finance and sponsorships. But in our days, the higher education providing is recognizing not only contrivance for improvement of human capital and thoughtful field from government, but mostly considering as a business, involving huge financial sources and results, which is going under taxation.

Education is the best means for the vast majority of people to improve their economic position. It is the most reliable means that people have to invest in themselves and improve their earning potential. Yet the tax system today "punishes" people who invest in education, virtually doubling its cost. According to countries tax legislations, higher education tuition expenses mostly is not tax deductible in students family incomes taxation system framework.

But in opposition to this, contributions to certain not-for-profit educational organizations are generally tax deductible. Salaries of teachers and others in education are subject to income and payroll tax. Further more, the current tax system, in stark contrast, treats education expenditures very unfavorably for many universities.

Consequently, the several Universities currently involving in large tax payers list and every year increasing their direct tax responses to government, related to payroll tax and profit tax. more to the point, it is not acceptable from effective taxation policy position, because at present tuition fees.

Is it necessary to ensure that a greater portion of the cost of higher education is borne by students in the form of higher tuition fees, which might or might not be coupled with loans? It is often argued that financing higher education through taxes is anti-redistributive. We show in a working document that from a life cycle perspective proportional taxation is not anti-redistributive.

The authors are attempting to deal with two contradictory economic dynamics.²⁶ On the one hand, a study allowance would help raise the general level of education, a factor in innovation and growth, while simultaneously fighting against social self-selection in higher education. In countries that have adopted it [the study allowance], disadvantaged social strata may have an opportunity to undertake lengthier studies even though their social origins have predestined them to short-term courses that provide quick entry into salaried employment. This is an important means of raising the general level of education and the qualifications of young people, which is a central concern of this report. But on the other hand, education benefits better-off strata, and being free makes it anti- redistributive: The fact that public higher education is virtually free leads, first, to a transfer of resources (the public cost of education) to young people who are in education the longest. This overwhelmingly means young people from better-off strata. This transfer is reflected ultimately in private returns to the beneficiaries: higher wages and then pensions, which benefit the most highly educated throughout their lives.... As things stand, higher education's free character has no redistributive value and even aggravates inequalities.

Indeed, even if the anti-redistributive character of free higher education is not the only argument made by advocates of higher tuition, it is one of their main arguments. This argument relies on a static and familialist vision of redistribution. We adopt a life cycle perspective instead. As highlighted in the second excerpt above, on average the beneficiaries of education spending enjoy a significant private benefit: they will have higher wages and pensions throughout their lives. Even assuming that tax (on income) is proportional to income (which is not the case: in reality, it

²⁵ "Income Taxes", International Accounting Standard No. 12 (IASCF), as mended effective January 1, 2009

²⁶USAID Technical Assistance to Support Tax Administration Reforms (TASTAR), Final Report, page 8

is progressive), they will pay much more tax, in absolute terms, than individuals who have completed shorter studies. Above all, tax allows for the financing of education by individuals who actually receive significant private benefits, and in proportion to this benefit. People who suffer discrimination in the labour market or who were oriented towards less profitable sectors and benefit from low returns to education reimburse society a lesser amount through their taxes than those who benefit more.

Financing through income tax leads people with higher incomes to contribute even when they have not had a lengthy education. The injustice would therefore lie in the transfer between persons with high incomes who are not highly educated and those who are highly educated. But if education is characterized to a great extent by significant social returns, thanks to its impact on growth, then people with high incomes are actually beneficiaries of spending on education, whether or not they are highly educated themselves (for instance, self-taught entrepreneurs benefit from the availability of skilled labour).

Adopting a life cycle perspective, we show in a working document that financing spending on non-compulsory education (beyond 16 years) by a proportional tax represents a net transfer from those with higher incomes during their careers to those with lower incomes during their careers. From a life cycle perspective, free non-compulsory education financed by taxes does not benefit individuals with more affluent parents (the transfer from individuals from better-off households to those from poorer households is not significantly different from zero). If individuals from the poorest households react to the increase in tuition fees by reducing their investment in education, even when this is financed by loans, then there can be little doubt that they will be the first victims of this type of reform.

Advocates of tuition increases generally argue for small increases in tuition fees and exemptions based on means-testing the parents. But recent developments in Australia, the United Kingdom and Canada show that, once the fees have been introduced, it is difficult to prevent governments that are seeking new funds from increasing the fees and reducing the exemption thresholds. In higher education, the leading injustice is the lack of access to people from modest backgrounds. The surest way to ensure equity in education is still to fund it through income tax and to reform education so that it is targeted at academic success for all rather than at selection.

Conclusion

Logical analysis of a financial situation or plan from a tax perspective, to align financial goals with tax efficiency planning. The purpose of tax planning is to discover how to accomplish all of the other elements of a financial plan in the most tax-efficient manner possible. Tax planning thus allows the other elements of a financial plan to interact more effectively by minimizing tax liability. Tax planning encompasses many different aspects, including the timing of both income and purchases and other expenditures, selection of investments and types of retirement plans, as well as filing status and common deductions. However, while tax planning is an important element in any financial plan, it is important to not let the "tax" tail wag the financial "dog." This can ultimately be counterproductive, as virtually all courses of financial action will have some tax consequences, and they should not be avoided solely on this basis.

Key words: taxation, tax planning, university activities, cash flow management.

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Համեղ Միրզայի

Հարկային պլանավորումը կարևոր գործոն է համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեությունում: Համարվելով ոչ առևտրային կազմակերպություններ, բուհերը հնարավորինս պետք է ձգտեն շահութահարկի գծով հարկային պարտավորությունների կրճատմանը, այդ գումարները ուղղելով կրթության որակի բարձրացմանը: Այս առումով, հոդվածում քննարկվում է հարկային պլանավորման նշանակությունը և բարելավման ուղիները համալսարանական համակարգում, առաջարկելով հարկային հաշվառման ներդրում, կրթավճարների հիմնավորվածության վերլուծություն, հարկային արտոնությունների սահմանում:

Հիմնաբառեր. հարկում, հարկային պլանավորում, համալսարանական գործունեություն, դրամական հոսքերի կառավարում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Նոննա Խաչատրյան

Ավանդական հաշվապահական հաշվառումը իր մեթոդաբանությամբ, սկսած 16-րդ դարից, հիմնարար փոփոխությունների չի ենթարկվել: Այն գործում է կրկնակի գրանցման հիմքով և հաշվեկշռում է գործարարության ակտիվները՝ սեփական կապիտալի և ստանձնած պարտավորությունների հետ: Հիմնական փոփոխությունները առաջ եկան 20-րդ դարի կեսերին, երբ հաշվապահական հաշվառման համակարգում առանձնացան ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառման ուղղություններ, որոնք իրենց դիրքորոշմամբ միտված էին գործարարության ռետրոսպեկտիվ տեղեկատվության ամփոփմանը: Սակայն, գործարարության կազմակերպման ներկայիս առանձնահատկությունները, և հատկապես մրցակցային ռազմավարությունը նոր պահանջներ դրեցին հաշվապահական հաշվառման տեղեկատվության ձևավորման նկատմամբ, այն ռետրոսպեկտիվ ոլորտից տեղափոխելով տեսանելի ապագային ուղղված ռազմավարական որոշումների ոլորտ:

Փորձը ցույց է տալիս, որ ավանդական հաշվապահական հաշվառման տեղեկատվությամբ ոչ միշտ է հնարավորություն ստեղծվում կատարելու կանխատեսումներ կազմակերպությունների մրցունակության դիրքերի ամրապնդման ոլորտում և առավել ևս՝ ընդունելու ռազմավարական բնույթի արդյունավետ հեռահար որոշումներ:²⁷ Այս հիմնախնդիրները էապես իրենց լուծումն են ստանում ռազմավարական հաշվառման օգնությամբ:

Ռազմավարական հաշվառումը հաշվապահական հաշվառման համակարգում համեմատաբար նոր ճյուղ է հանդիսանում: Գործնականում և տեսության մեջ այն մեկնաբանվում է երկու իմաստով:²⁸ Նեղ իմաստով հաշվառումը դիտարկվում է որպես ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության հավաքագրման միջոց՝ ուղղված ռազմավարական կառավարման հիմնական գործառնությունների սպասարկմանը, ինչպիսիք են պլանավորումը, կազմակերպումը, վերահսկողությունը, վերլուծությունը: Լայն իմաստով, հաշվառումը ներկայացվում է որպես գործարարության ներքին և արտաքին մրցակցային միջավայրի տնտեսական վերլուծության և վերահսկողության տեղեկատվական ապահովման համակարգ, որը կատարում է ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների արձանագրման և խմբավորման ինտեգրում:

Հետևապես, երկու դեպքում էլ հաշվառումը ռազմավարական կառավարման նպատակներ է հետապնդում և ուղղված է կազմակերպությունների տնտեսական հեռահար գործունեության արդյունավետության ռեզերվների բացահայտմանը: Ուստի, այն տեղեկատվական սերտ փոխկապվածության մեջ է գտնվում ինչպես ֆինանսական, այնպես էլ օպերատիվ, հարկային, և առավելապես՝ ավանդական կառավարչական հաշվառման համակարգերի հետ:

Սակայն, ի տարբերություն կառավարչական ավանդական հաշվառման, որի ուսումնասիրման օբյեկտը շատ ավելի ընդգրկուն է, ներառելով տնտեսավարման ամբողջ համակարգը (դրամական և ծախսային հոսքեր, գործարար ակտիվություն, ներդրումների արդյունավետություն և այլն), ռազմավարական հաշվառման ուսումնասիրման շրջանակը շատ դեպքերում կարող է նաև նեղ լինել, քանի որ այն «հասցեագրված» է ռազմավարական հանգուցային այն նշանակետերին, որոնք ապահովում են կազմակերպության տնտեսական գործունեության առաքելությունը և հիմնականում ունեն հեռահար թիրախային նպատակներ: Ի դեպ, հանգուցային այդ նշանակետերը ոչ թե համընդհանուր են բոլոր կազմակերպությունների համար, այլ խիստ տարբերվում են միմյանցից, ելնելով ոչ միայն գործարարության առանձնահատկություններից, այլև մրցակցային միջավայրի պահանջներից:

Այսպես, պահանջներ արտադրող կազմակերպությունը շուկայում մրցակցային լինելու համար, իր առջև խնդիր է դրել առաջիկա երկու տարում մրցակցային դարձնելու իր ֆինանսական կայունության և գործարար ակտիվության ցուցանիշերը (տես աղյուսակ 1): Այդ նպատակով, ռազմավարական

²⁷ Goran N., Managerial information for decision making, United Kingdom, Capstone Publishing, 2002, 22-24 pp.

²⁸ . Терехова, В. А., Стратегический управленческий учет: состояние и развитие в зарубежных странах, // Бухгалтерский учет в бюджетных и некоммерческих организациях. 2000. № 4, стр. 34

հաշվառման են ենթարկվում ընթացիկ իրացվելիության, ինքնավարության, շահութաբերության և դեբիտորական ակտիվների շրջանառելիության ցուցանիշների փոփոխման միտումները՝ ըստ եռամսյա կտրվածքի: Ի դեպ, թվարկած ցուցանիշների մրցակցային մեծությունները կարող են տարբեր լինել ագրոբիզնեսի այլ ոլորտներում:

Մասնագիտական գրականությունում նաև այլ տեսակետ է ներկայացվում՝ ռազմավարական հաշվառման շրջանակը գնահատելով առավել ընդգրկուն, սակայն էլնելով ոչ թե առաջադրվող նպատակներից, այլ ուսումնասիրման բազմաբնույթ տեխնոլոգիաներից ու տեղեկատվական աղբյուրների բազմազանությունից:²⁹ Իսկ, ուսումնասիրման տեխնոլոգիաների բազմազանությունը և տեղեկատվական աղբյուրների լայն շրջանակը գործնականում հիմնախնդիրներ են առաջացնում ռազմավարական հաշվառման կազմակերպչական ոլորտում, քանի որ անհրաժեշտ է դառնում մեթոդապես համակարգելու կառավարչական տարբեր եղանակներն և գործառնությունները՝ ստեղծելով հաշվառման ներդաշնակ և միասնական օրգանիզմ:

Ընդհանուր առմամբ, ռազմավարական հաշվառման նպատակը հեռահար կառավարչական որոշումների տեղեկատվական ապահովումն է, որը լուծում է մի շարք խնդիրներ, ինչպիսիք են.

- գործարարության ներքին և արտաքին միջավայրի վերլուծությունը,
- կազմակերպության ռազմավարության նպատակադրումների իրագործման գործընթացի վերահսկողությունը՝ ըստ պատասխանատվության կենտրոնների և գործոնների,
- հաշվապահական հաշվառման համակարգում օպերատիվ, մարտավարական և ռազմավարական կառավարման տեղեկատվական հոսքերի պատճառահետևանքային փոխկապակցումը և ներդաշնակեցումը:³⁰

Գործարար ակտիվության և ֆինանսական կայունության ցուցանիշները պահածոների գործարանում.

Աղյուսակ 1

Ցուցանիշներ	Փաստացի մեծություն	Ռազմավարական մեծություն	Մրցունակության հասկացիկություն
Ընթացիկ իրացվելիություն գործակից	1,8	2,2	0,4
Ինքնավարության գործակից	0,3	0,6	0,3
Շահութաբերության %	10	15	5
դեբիտորական պարտքերի շրջանառելիության օրեր	45	30	15

Հետևապես, կարևորվում է ռազմավարական հաշվառման տեղեկատվական հոսքերի համակարգումը, որպեսզի ներկայացվեն առանցքային ցուցանիշների փոփոխությունների պատճառահետևանքային գործոնային ինչպես որակական գնահատումները, այնպես էլ քանակական չափումները: Սակայն, նման համակարգումը կդիտարկվի անարդյունավետ, եթե տեղեկատվության շրջանակը համալիր չընդգրկի այն ոլորտները, որոնք արտացոլում են ռազմավարական նպատակադրումների իրականացման գործընթացը, ինչպես գործարարության ներքին միջավայրում, այնպես էլ մրցակցային արտաքին շուկայում՝ մատակարարման, իրացման, ներդրումային ոլորտներում:

Այս առումով, ռազմավարական հաշվառմանը հատուկ են տեղեկատվության հավաքագրման և մշակման բազմաչափ միջավայրեր, որոնք առնչվում ոչ միայն գործարարության ներքին և արտաքին մրցակցային ոլորտներին, այլև ֆինանսական և ոչ ֆինանսական առանցքային ցուցանիշներին,

²⁹ Стратегический учет, // под ред. В. Э. Керимова. – М. : Омега-Л, 2010., стр.102-103

³⁰ Щемелев, А. Н., Стратегический учет инноваций в коммерческих организациях: теория и методология: автореферат диссертации доктора экономических наук. Ростов н/Д, 2007, стр.14

գործարարության կայուն զարգացման կրիտիկական չափանիշներին, որոնց շրջանակում էլ կայացվում են ռազմավարական կառավարչական որոշումներ:

Պետք է ընդգծել նաև, որ տեղեկատվության գրանցման, հավաքագրման և մշակման բազմաչափ միջավայրերը հիմնախնդիրներ են առաջացնում ռազմավարական հաշվառման կազմակերպման գործընթացում:

Նախ, ռազմավարական հաշվառումը կարող է օգտագործել նաև ոչ արժեքային չափիչներ, ինչպիսիք են ֆինանսական գործակիցները, գործարար ակտիվության ցուցիչները, բնաիրային ցուցանիշները, որոնց պարզապես հնարավոր չէ բերել արժեքային մի ընդհանուր հայտարարի և հաշվառել միասնական համակարգով:

Երկրորդ, ռազմավարական հաշվառումը կարող է օգտագործել ինչպես ներտնտեսական, այնպես էլ արտաքին բիզնես միջավայրի տեղեկատվություն, որոնք կարող են համադրելի չլինել և համակարգված հաշվառման չենթարկվել:

Երրորդ, հիմնախնդիր է հանդիսանում նաև ռազմավարական հաշվառման մեթոդաբանության կիրառումը, որը կարող է փոփոխուն լինել՝ կապված բիզնեսի առանձնահատկությունից՝ և բնականաբար չձևավորվել ստանդարտ մոտեցմամբ:

Հետևաբար, առաջարկում ենք ռազմավարական հաշվառումը ուղղակիորեն չներառել կառավարչական հաշվառման կազմում և այն չինտեգրել գործող հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հետ: Այսպես, եթե ներկայումս ֆինանսական և կառավարչական հաշիվները ինտեգրված են մի համակարգի շրջանակում և թղթակցում են միմյանց հետ, ապա ռազմավարական հաշիվները լոկալացվում են հաշվային համակարգում և չեն ինտեգրվում ֆինանսական և կառավարչական հաշվառման հաշվային թղթակցություններում: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, թե կոնկրետ ինչ նպատակով է կազմակերպվում ռազմավարական հաշվառում: Եթե այն թիրախավորված է մրցունակության ամրապնդման որոշումների կայացմանը, ապա նպատակահարմար է իրականացնել շեղումների հաշվառում հետևյալ կտրվածքով.

Մրցունակ ցուցանիշ = փաստացի ցուցանիշ +/- շեղում


Նման սկզբունքով հնարավոր է ռազմավարական հաշվառման օբյեկտ ներկայացնել մրցունակության ցանկացած ցուցանիշ և ապագային միտված մրցակցային կառավարչական որոշումների կայացման նպատակով՝ կրկնակի գրանցման հիմքով իրականացնել շեղումների հաշվառում:

Ռազմավարական հաշվառման տեղեկատվական հոսքերի համակարգումը նույնպես հնարավոր է իրականացնել կրկնակի գրանցման օգնությամբ, սակայն ցուցանիշների հաշվեկշռման այլ սկզբունքով: Այսպես, դասական հաշվապահական հաշվառումը ցուցանիշները ներկայացնում է մեկ ստանդարտով և արժեքային տեսքով դրանք հաշվեկշռում է հետևյալ կտրվածքով.

Ակտիվներ = կապիտալ + պարտավորություններ

Իսկ ռազմավարական հաշվառումը չի ձգտում ցուցանիշների ստանդարտացման և դրանց հանրագումարային ամփոփման: Այստեղ, լոկալացված և անհատական հաշվեկշռված մոտեցում է ցուցաբերվում յուրաքանչյուր ցուցանիշի գծով, բնավ նշանակություն չտալով հաշվառվող բոլոր ցուցանիշների ամփոփմանը: Հետևաբար, կրկնակի գրանցմամբ փոխկապակցվում են ոչ թե առանձին չափիչներով հանդես եկող ցուցանիշների միջև տեղի ունեցող փոփոխությունները, այլ մեկ ցուցանիշի գծով փոփոխությունները՝ «մրցունակ ցուցանիշ = փաստացի ցուցանիշ +/- շեղում» կտրվածքով: Այս դեպքում, ռազմավարական հաշվառման կողմից հաշվառվող ցուցանիշների համակարգումն ու հաշվեկշռված ամփոփումը առաջարկում ենք ներկայացնել ոչ թե հանրագումարային՝ այլ լոկալ հաշվեկշռային կապերով:

Այս պարագայում, ռազմավարական հաշվառումը հաշվեկշռային փոխկապակցությունները կներկայացնի հետևյալ ձևաչափով.



Բնականաբար, վերոնշյալ փոխկապակցվածությունները հաշվեկշռվում կրկնակի գրանցմամբ հաշվային թղթակցություններով, որոնց համար կիրառվում են ռազմավարական հաշվառման համակարգում գործող հատուկ հաշիվներ: Այս նպատակով, առաջարկում են հաշվառվող յուրաքանչյուր ցուցանիշի գծով բացել հաշիվների խումբ՝ «ռազմավարական ցուցիչ-շեղում – փաստացի ցուցիչ» կտրվածքով: Ընդ որում, նշված հաշիվները համադրող են և հաշվետու ժամանակաշրջանի վերջում փակվելով՝ մնացորդ չեն ունենում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գործարարության ոլորտում ռազմավարական հաշվառման օբյեկտները նպատակահարմար է թիրախավորել մրցակցային դիրքերի ամրապնդմանը, մոնիտորինգի ենթարկելով մրցունակության ցուցանիշները: Այս նպատակով, կրկնակի գրանցման սկզբունքով և ենթախմբային հաշիվներով հնարավոր է իրականացնել լոկալացված հաշվառում յուրաքանչյուր ցուցանիշի գծով, արձանագրելով տեղեկատվություն «փաստացի ցուցանիշ = մրցունակ ցուցանիշ - շեղումներ» կտրվածքով: Հետևապես, կախված գործարարության մրցունակության ռազմավարական վերանայումներից, կարող են հարահունչ փոփոխության ենթարկվել նաև ռազմավարական հաշվառման օբյեկտները, և դրանց առնչվող կառավարչական ներխմբային հաշիվների ցանկը:

Ռազմավարական հաշվառման կազմակերպման առաջարկվող սխեման թույլ կտա կառավարիչներին թիրախավորելու մրցակցային ցուցանիշների փոփոխման գծով տեղեկատվությունը և վերլուծելու, թե որքանով են հասանելի կազմակերպության մրցակցային դիրքերը շուկայում: Տիրապետելով ռազմավարական հաշվառման կողմից ներկայացվող տեղեկատվությանը, կառավարիչները հնարավորություն կունենան գործարարության մրցունակության հիմնավոր կառավարչական որոշումներ կայացնելու՝ միտված դեպի տեսանելի ապագան:

Հիմնաբաներ. մրցակցային տեղեկատվություն, ռետրոսպեկտիվ հաշվառում, շեղումների հաշվառում, կառավարչական որոշումներ:

ISSUES OF STRATEGIC ACCOUNTING IMPLEMENTATION

Nonna Khachatryan

Traditionally accounting, having almost four hundred year history, dynamically has changed in 20th century presenting by financial, tax and managerial directions. However, following to the current business organization peculiarities, and particularly, the needs of strategic computation, is upcoming clear to present information for making diction making for perspective period. Consequently, it become's important execution of strategic accounting and implementation new managerial information collection methodology.

Keywords: strategic accounting, retrospective accounting, accounting of variances, managerial decision making.

ПРОБЛЕМЫ ВНЕДРЕНИЯ СТРАТЕГИЧЕСКОГО УЧЕТА

Нонна Хачатрян

Традиционный бухгалтерский учет, имеющий четырехвековую историю, стал динамично изменяться в 20-ом веке, имея финансовое, налоговое и управленческое направления. Однако, специфика нынешнего бизнеса, а именно стратегическая оценка позиций рыночной конкуренции, требуют оперативную информацию для принятия решений в перспективе. В этих условиях становится необходимым организация стратегического учета и применения новой методологии управленческого учета.

Ключевые слова: стратегическое управление, ретроспективный учет, учет отклонений, управленческие решения.

INFORMATION PROVIDING ISSUES IN MICROFINANCE EFFECTIVENESS ASSESMENT

Artak Yarazyan

Addressing the maximum socio-economic benefits of microfinance activity seems urgent for developing countries. In this context, information provision assess the effectiveness of microfinance primarily aims to promote the adoption of sound management decisions on the allocation of financial resources in areas such as micro-credit business, royalty-free reporting of assets, organization of trainings and training for start-ups of the poor. With the purpose to implement the factorial analysis of the effectiveness of microfinance, the article suggests ways to consolidate the socio-economic results of microfinance and on the basis of this information for calculating aggregate indices.

1. Information Providing Issues in Microfinance Activity Efficiency Assessment

In practice, the regulatory process of microfinance activities information providing is limited for the most part of the financial sector, targeted to keep MFI regulations indicators, established by the Central Bank of the Republic Armenia. In these circumstances, there are difficulties for comprehensive analysis for the actual impact of micro loans on the real economy development, since practically no effective system of registration, evaluating, and reporting the results because of business micro financing activity. As a result, it becomes impossible to determine exactly, how many new jobs positions, increased incomes of population, expanded strategic ways of business activities of the borrowers have been established as a consequence of micro financing.

The main reasons for such a situation, in our opinion, is the lack of information system consolidation of microfinance activities results in Armenia. Consequently, acting norms of national legislation regarding to microfinance institutions, as well as existing large-scale problems hindering the efficient development of microfinance activities, should be a priority for government regulation and control of the microfinance market in Armenia. At the same time, literature provides challenges and impediments to the effective development of legal microfinance business in Russia,³¹ which is also common to the microfinance market in Armenia. In particular, there are some obstacles for the consolidation of the microfinance actual results information performance:

- insufficient developed legislative and regulatory framework, which defines the status of the MFI and also considering specific different categories of microfinance institutions;
- lack of regulatory consolidation and approved rankings of MFIs activities;
- absence of parameters for assessing the behavior of social efficiency of MFIs;
- lack of approved methods and rules to determine wide-ranging outcomes of micro-loans;
- lack of legislative practice combining the functions of MFIs and major infrastructure institutions;
- low background information and the lack of a full and objective information about MFIs' activities.

In this regard, we propose a format of phased implementation process of the consolidation of microfinance activity results in Armenia, which is aimed to make management decisions in field (see. Fig1). Currently in the republic, we have a situation, where microfinance activities are not exposed to the cause and effect range. Often it is impossible to assess the real outcomes of micro loans, which is primarily due to the lack of executive - organizational tools of implementation for consolidation of micro finance through chain "micro credits - business - social and economic return."³²

2. The Ways of Microfinance Activity Results Information Consolidation

Therefore, the starting condition for development of the consolidated information system of micro financing results is the formation of such executive - organizational institutions, such us: implementation of the state register of microfinance activities, enforcement of legislation in order to control micro crediting objectives, organizations of accounting and reporting microfinance results. Incidentally, elements of the state register are already being under regulation of Russian Federation legislation,³³ but in our view, it is necessary to expand additional functions in this area.

In particular, in order to consolidate the microfinance activity cause and consequence information flows priorities is not only the introduction of the state register of microfinance, but also the use of legislation control over the

³¹Быковец М.В., Государственное управление. Электронный вестник Выпуск № 45. Август 2014 г.

³² The evaluation of microfinance //Economy and Business, October, 2011, pp.12-14

³³ Федеральный закон Российской Федерации О микрофинансовой деятельности и микрофинансовых организациях от 2 июля 2010 года, N 151-ФЗ, статья 4

target use of either micro loans. Moreover, along with the registration of the actual socio-economic results of microfinance activities, it is necessary to organize their evaluation and accountability that comes beyond the microeconomic management and concerns to statistics.


At the present time, in the Republic of Armenia there are no separately organizing statistics, concerning microfinance activities and as a result it not possible to make consolidation of socio - economical results of microfinance (see Fig. 1)

In addition to these problems, which are in the field of information consolidation flows microfinance activities, it is also necessary to solve the tasks undertaken in the following areas:


- establishing legal framework, that will control microfinance activities directions completely, by using legislative strengthening of regulatory instruments;
- the development of a specific mechanism with the purpose to control and enhance methods of financial supervision;
- ensuring harmonious development mechanism of information providing for the management of microfinance activities.

Consolidation of the micro financing socio-economic results creates an information basis for comprehensive analysis of the microfinance activities efficiency (see. Fig. 1). However, this raises the problem of measuring and evaluating microfinance outcomes. Micro loans, stimulating entrepreneurship and serving as an important conditions for financing start-up capital, ultimately leading to the improvement of borrowers' welfare, the development of human capital and social needs of the starting businessmen's family members, which is exposed to difficult economic measurement and evaluation.

First step



Second step



The third stage




Figure 1: Decision-making process based on the microfinance activity results consolidation³⁴

³⁴Composed by author.

As rightly pointed out in the literature, micro financing is not just a social program and in the narrow sense does not provide money in the form of social benefits to the very poor's, who don't have a regular source of income (for example, the homeless or unemployment). The purpose is to generate revenue from their activities, have such an opportunity, with a small financial "impulses" from the outside.³⁵

3. Socio-economic indicators of Microfinance Activity

Microfinance is primarily aimed at reducing poverty and inequality, increasing social and human development. This purpose is making financial resources accesses for poor layers of the populations to create profitable business, achieve revenue growth, and ensure food security and education of children. At the same time, with decreases of unemployment, people have hope for a better life and for the development of business confidence in the future; prevented the transition of the poor in the category of population to heavy socio-economic, moral and psychological conditions. Under mentioned circumstances', formed the factors contributing to smooth out economic differences between town and country, as well as the prevention of emigration from the country.

Therefore, in current becomes urgent representation indicators, performing socio-economic impact of microfinance activities, which are used in the process of a comprehensive analysis of the microfinance efficiency or in ranking micro crediting directions outcomes.³⁶ To this end, we propose a set of indicators of social and economic results of microfinance activities, which are a subject to the measurement and accounting in the micro and macro levels (see. Tab. 1)

Studies show, that microfinance is accompanied by both positive and negative results. For example, loans can be provided to not just one person, but also groups of four even to ten people. If the borrower fails to meet its obligations under the loan, penalties are imposed on the entire group, the members of which later cannot receive additional credits. Often, in practice, a group of micro borrowers includes relatives to create reasonable responsibility for repayment of the loan. However, it is possible, that the presence of family members in the group can lead to deeper conflicts of micro borrowers' interests.³⁷ Moreover, in the context of financial promotion retraining, different over qualifications, create the risk of outflow of labor force in more prosperous regions and the dissolution of accumulated human capital. Therefore, during a comprehensive analysis of the effectiveness along with positive indicators should also be considered unfavorable indicators.

Table 1: Information providing in order to assessing the effectiveness of microfinance activities³⁸

Socio-economic indicators	Symbol	Scope of information
Microfinance activity		
micro loans	МК	Credit organizations
No refundable microfinance	БК	Public organizations
Economic indicators		
number of micro loans per capita	ДН	Statistical services
the proportion of micro-loans in the amount of bank loans	УМ	Central Bank of Armenia
Revenue growth borrowers	РД	Households
the ratio of MFI clients to the number of poor population		Statistical services
growth of tax collection inflows	PH	Regional tax authorities
the share of micro - financing in GDP	УБ	Statistical services
Social indicators		

³⁵ Развитие микрофинансирования в Узбекистане // Центр экономических исследований, Ташкент, 2005, с. 11

³⁶ Jennifer Lindsay. An Evaluation on the Effectiveness of Micro Finance Institutions // SPEA Honors Thesis, 2010 pp. 24-26

³⁷ Milford Bateman. Microfinance as a development and poverty reduction policy: is it everything it's cracked up to be? // Overseas Development Institute, March 2011, p. 3

³⁸ Composed by author.

Creation of new jobs	HP	Statistical services
emigration reducing SE	CՅ	Statistical services
the level of gender equality	ԴՔ	Statistical services
satisfaction of minimal social needs norms	ՇԽ	Households
the share of the unemployed in the family	ԵՇ	Statistical services
number over qualified entrepreneurs	ԿՊ	Households
Loss of social capital	ՇԿ	Statistical services
the number of bankruptcy micro entrepreneurs	ՄԽ	Households

As can be seen from Tab.1, a part of the microfinance activity indicators are generated at the microeconomic level that can be obtained based on special reporting from micro business. Another part of the performance of microfinance activities is in macroeconomic nature, and thus, reports using statistics accounts. Therefore, in practice, number of organizational issues solutions in the field of microfinance that results information consolidation, in our opinion, must include:

- introduction of separate statistics reporting about microfinance activity,
- submission requirements of special outcome reporting forms of the microfinance business,
- coordination of information flow from the micro and macro - economic sector in the state register for microfinance activity.

In current situation, the sector of microfinance in Armenia almost ~~no~~ has no legislative levers in order to report the results of microfinance activities. Micro entrepreneurs provide reports only on their tax obligations, and credit organizations are limited only by preparing the financial statements, publishing or presenting special regulative statements forms to the Central Bank of RA. As a result, the key socio-economic indicators of microfinance do not come beyond reporting, which is required to compile reports on the special legal requirements. Enforcement of legislation on the preparation of financial statements will support the process of consolidation of microfinance results information flow (see. Fig. 1)

Traditional presented reporting forms, because of its adaptability, are not suitable for consolidating information on the results of micro finance activities, because they are aimed at satisfying any information needs of creditors, or have controlling destination in the field of micro businesses taxation. However, requirements for systematization and transparency through the development of simplified reporting forms, adapted to the specific microfinance activities, will be not successfully completed on a voluntary basis. Information support of microfinance in micro business, in our opinion, should be set by law and upcoming regulations circumstances. That should lead to the obligation to prepare and submit the state register of microfinance special reporting by the borrowers.

In sequence, the statistical records should provide information flows regarding the results of microfinance activities of macroeconomic sector that has not yet been implemented in Armenia. Publishing statistical yearbooks provide mainly the trends of unemployment, population income rising, emigration level and economic growth, but according of these data impossible to determine the proportion of microfinance impact on these figures. The same applies to reporting approaches of the Central Bank of Armenia, which is regarding to credit institutions or loans, issued by economy sector, without separation performance of microfinance.

Consequently, it is necessary to introduce a special statistics on micro financing, which will give opportunity to provide cause - result information and consolidate actual results of microfinance activities. Moreover, at present, in the Republic of Armenia does not apply the developed methods of preparation of the consolidated reports on the movement of micro-loans and consequently, current planning of future financial projection based on common standards, which in turn makes it difficult to conduct a comprehensive analysis of the effectiveness, efficiency of microfinance activities.

Indicators of micro finance activity efficient are presented by various research interpretations. In one case, those are taking analyzing from point of view clients serving results (see Tab. 2), from another, the nature is microfinance efficient is taking on consider percentage of residents in microfinance processing activity (see Tab. 3)

Table 2: Client Serving Indicators in Microfinance Field³⁹

³⁹ Microfinance barometry 2013, Survey Results: Establishing a Baseline for the World on Social Performance Management Implementation, part IV

Name of Indicators	
Diversification of micro financing organizations	
microfinance providing from non commercial organizations	33%
Microfinance providing from credit organizations	37%
Distribution of micro finance clients on different parameters	
share of agro borrowers	38%
share of women borrowers	73%
share of micro credits for business purposes	81%

However, in our opinion, to assess the effectiveness of micro financing it is advisable to present an integrated approach, since it is a sphere of activity that simultaneously generates both economic and social effects, as at the microeconomic and at macroeconomic level. Therefore, it becomes necessary to analyze the effectiveness of microfinance operations, both in terms of macroeconomic stability, and so as a result of business activities of micro entrepreneurs.

Table 3: Ranking of countries by accessing population in micro financing activity⁴⁰

Ranking	Country	Borrowers/ population
1	Bangladesh	25%
2	Bosnia and Herzegovina	15%
3	Mongolia	15%
4	Cambodia	13%
5	Nicaragua	11%
6	Sri-Lanka	10%
7	Montenegro	10%
8	Vietnam	10%
9	Peru	10%
10	Armenia	9%
11	Bolivia	9%
12	Thailand	8%

Moreover, the socio-economic effects of microfinance are always in a dynamic state, and therefore in need of index assessments. The performance of microfinance activities in the index structure also gives an opportunity for implementing factor analysis and to disclose the potential for raising microfinance separate ways.

On this basis, to assess the effectiveness of microfinance, we propose to apply the aggregate indexes, included components of the socio-economic indicators of microfinance activities. So, if we assume, that as a consequence of consolidation information flows results microfinance already calculated individual indexes of microfinance activities, it is possible not only to present an aggregate index of the effectiveness of microfinance as a whole, but also to calculate the strength of impact of each individual index and implement changes in the efficiency factor analysis in the following areas.

Economic effectiveness of microfinance (Ie)

$$I_e = I_{\text{ДН}} \times I_{\text{МБ}} \times I_{\text{РД}} \times I_{\text{РН}} \times I_{\text{УВ}}$$

Social returns of microfinance (Ic)

$$I_c = I_{\text{HP}} \times I_{\text{CЭ}} \times I_{\text{CH}} \times I_{\text{ГР}} \times I_{\text{БС}} \times I_{\text{КП}} \times I_{\text{СК}} \times I_{\text{МП}}$$

Conclusion

The use of aggregate indices for evaluating the effectiveness of micro financing, in our opinion, greatly enhances the quality of decision making in the field of microfinance.

First, aggregate indices coordinate components, while indicators of socio-economic results from both the micro and macro-economic spheres, which allows comprehensively assess the effectiveness of microfinance operations

⁴⁰Gonzalez A. Is Microfinance Growing Too Fast? // Washington, DC: Microfinance Information Exchange (MIX), 2010, p. 9

Second, using aggregate indexes is making possible general approaches measuring the socio-economic benefits of microfinance and consequently, to carry out comparative analysis in specific areas of micro crediting and microfinance to identify the reserves for raising activities efficiency.

Third, using aggregate indexes of microfinance, calculated through consolidated information, making possibility to carry out the factorial analysis of the effectiveness of microfinance, and on this basis to apply the reasonable management decisions to improve strategic directions of the development of micro business.

Therefore, information providing for evaluating the effectiveness of microfinance is primarily aims to promote the adoption of evenhanded management decisions on the distribution of microfinance in areas such as micro-crediting business, free refundable assets, organization of training and education by the pursuit of maximum socio-economic benefits from micro financing activities.

Keywords: consolidation of micro and macroeconomic data, factor analysis of the effectiveness, a comprehensive evaluation of the impact of microfinance.

ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԻՐՆԵՐԸ Արտակ Յարազյան

Միկրոֆինանսական գործունեության առավելագույն սոցիալ – տնտեսական օգտակարություն ապահովող խնդիրների լուծումը արդիական է զարգացող երկրների համար: Այս համատեքստում, միկրոֆինանսավորման արդյունավետության գնահատման տեղեկատվական ապահովումը նպատակ ունի խթանելու հիմնավորված կառավարչական որոշումների ընդունումը ֆինանսական ռեսուրսների բաշխման այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են միկրովարկավորման գործունեությունը, ակտիվների ազատ տրամադրումը, դասընթացների կազմակերպումը՝ բնակչության աղքատ շերտերից սկսնակ ձեռներեցների համար: Միկրոֆինանսավորման արդյունավետությունը գործոնային վերլուծություն ենթարկելու նպատակով՝ հոդվածում առաջարկվում են միկրոֆինանսավորման սոցիալ-տնտեսական ցուցանիշների համակարգման ուղիներ. և այդ տեղեկատվական հիմքի վրա տրվում են համախառն ցուցանիշների հաշվարկ:

Հիմնաբաներ. միկրո և մակրոտնտեսական տեղեկատվության համակարգում, արդյունավետության գործոնային վերլուծություն, միկրոֆինանսավորման արդյունավետության համակարգային գնահատում:

ПРОБЛЕМЫ ИНФОРМАЦИОННОГО ОБЕСПЕЧЕНИЯ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ МИКРОФИНАНСИРОВАНИЯ

Артагк Яразян

Решение проблем максимальной социально-экономической отдачи микрофинансовой деятельности представляется актуальным для развивающихся стран. В этой связи, информационное обеспечение оценки эффективности микрофинансирования, прежде всего имеет цель способствовать принятию обоснованных управленческих решений по распределению финансовых ресурсов по таким направлениям, как микрокредитование бизнеса, безвозмездное предоставление активов, организация тренингов и обучение начинающих предпринимателей из бедных слоев населения. С целью осуществления факторного анализа эффективности микрофинансирования, в статье предлагаются пути консолидации социально-экономических результатов микрофинансовой деятельности и на этой информационной основе расчета агрегатных индексов.

Ключевые слова: консолидация микро и макроэкономической информации, факторный анализ эффективности, комплексная оценка отдачи микрофинансирования.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վահան Պողոսյան

Ֆինանսական ռիսկերի համակարգային հաշվառում առևտրային կազմակերպություններում դեռևս չի կազմակերպվում: Ավանդաբար, եթե տարբեր մեթոդներով գործնականում գնահատվում են ռիսկեր, տեսության մեջ մշակվում են ռիսկերի մեղմման մեխանիզմներ, ապա դրանք արվում են ոչ թե համակարգված հաշվապահական հաշվետվություններով, այլ վերլուծական տեղեկատվական հոսքերով, որը չի նպաստում ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Որպես կանոն, առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի ձևավորումը դինամիկ բնույթ է կրում և տնտեսավարման գործընթացին զուգընթաց անընդհատ փոփոխությունների է ենթարկվում: Այս առումով, ֆինանսական ռիսկերի գծով որոշումներ կայացնելիս պետք է օգտվել այնպիսի տեղեկատվությունից, որն լինի տեղին և ժամանակին, ուղղակիորեն առնչվի կառավարվող օբյեկտին, և հաշվի առնի բիզնես միջավայրի վերջին փոփոխությունները: Որակական նման հատկանիշներով տեղեկատվություն կարելի է ստանալ հաշվապահական հաշվառման համակարգից, որտեղ սակայն ավանդույթի ուժով, ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքները դեռևս չեն թիրախավորվում:

Եթե առևտրային կազմակերպություններում գործող ֆինանսական հաշվառման նպատակը ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի, վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն է, որն օգտակար է օգտագործողների լայն շրջանակների կողմից տնտեսական որոշումների կայացման համար⁴¹, ապա կառավարչական հաշվառման հաշվետվությունները առևտրային գազտնիք են պարունակում և ծառայում են բացառապես ներքին սպառման համար, երբ մենեջմենթի կողմից կայացվում են կառավարչական որոշումներ:⁴² Սակայն, թե մեկը, և թե մյուսը խնդիր չեն դնում ֆինանսական ռիսկերի գծով հաշվետվությունների ներկայացման համար: Այսպես, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներում նշվում է, որ համընդհանուր կտրվածքով օգտագործողներին պետք է տրամադրել այնպիսի տեղեկատվություն, որպեսզի հնարավորություն ստեղծվի.

ա) որոշելու, թե երբ պետք է գնել, պահել կամ վաճառել բաժնային գործիքներում ներդրումը,

բ) գնահատելու դեկավարության կողմից միջոցների կառավարումը կամ հաշվետվողականությունը,

գ) գնահատելու աշխատակիցներին փոխհատուցելու և այլ արտոնություններ տրամադրելու կազմակերպության կարողությունը,

դ) գնահատելու կազմակերպությանը տրված փոխառությունների վերադարձելիության ապահովվածությունը,

ե) որոշելու հարկային քաղաքականությունը,

զ) որոշելու բաշխմանը ենթակա շահույթը և շահաբաժինները,

է) պատրաստելու ֆինանսական արդյունքների ձևավորման վերաբերյալ ԱՄՏ-ին տրամադրվող տվյալներ,

ը) կարգավորելու կազմակերպությունների տնտեսական գործունեությունը:⁴³

Ֆինանսական հաշվառման հաշվետվողականության նկատմամբ վերոնշյալ պահանջները չնայած իրենց ենթատեքստում ֆինանսական ռիսկերի գնահատումների պահանջ են ենթադրում, սակայն դրանցից ոչ մեկը չի նախանշում առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի գծով թիրախավորված հատուկ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտություն: Իսկ, քանի որ գործնականում բացակայում են կառավարչական հաշվառման տեղեկատվության ներկայացման համընդհանուր մոտեցումներ և սկզբունքներ, ապա առևտրային կազմակերպությունները իրենք կարող

⁴¹ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում», կետ 9

⁴² Եղիկյան Ա., Կառավարչական հաշվառման հիմունքներ, ուս. Ձեռն., 2013, էջ 9-10

⁴³ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ, «Նախաբան», // ՀՀՄՄԽ, 2010,

են որոշել, թե ինչ մոտեցմամբ պետք է ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքները ընդգրկվեն հաշվառման համակարգ և ներկայացվեն հաշվետվություններով: Իսկ դրա անհրաժեշտությունը բխում է օգտակար տեղեկատվության որակական բնութագրիչներից:

Այսպես, համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների, ֆինանսական տեղեկատվությունն ունի կանխատեսող արժեք և այն որպես մուտքային տվյալ կարելի է օգտագործել ապագային միտված որոշումների կայացման ժամանակ: Ընդ որում, տեղեկատվությունը, որն ունի կանխատեսող արժեք, հաճախ նաև ունենում է հաստատող արժեք: Այսպես, եթե ընթացիկ տարվա վերաբերյալ հաշվետվությունում արձանագրված շահույթը կարելի է կիրառել նախորդ տարիների նույն ցուցանիշի կանխատեսման համար, ապա այն կարելի է համեմատել ընթացիկ տարվա շահույթի նախորդ տարիների կանխատեսումների հետ, որի արդյունքում պարզ կդառնա կանխատեսման մեթոդների արդյունավետության աստիճանը:


Նույն մոտեցումը կարելի է դրսևորել ֆինանսական ռիսկերի նկատմամբ, եթե դրանց արդյունքները ընդգրկվեն համակարգված հաշվապահական հաշվառման համակարգ: Այս դեպքում տեղեկատվությունը կդառնա տեղին, այսինքն այն կուղղորդի օգտագործողներին վերանայելու իրենց իսկ կողմից ռիսկերի կառավարման գծով կայացրած որոշումները:

Օգտակար լինելու համար, ֆինանսական ռիսկերի գծով տեղեկատվությունը ոչ միայն պետք է լինի տեղին, այլև լինելով ժամանակին, հնարավորինս ամբողջական ներկայացնի այն երևույթները, որոնք անհրաժեշտ են օգտագործողին կառավարչական որոշումներ կայացնելիս: Այս առումով, եթե ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքները ընդգրկվեն հաշվապահական հաշվառման համակարգ, ապա մի կողմից, դրանք ուղղակի և անուղղակի կարտացոլեն ռիսկերի ձևավորման բազմաբնույթ գործոնների ազդեցությունները, մյուս կողմից դա կարվի ժամանակին, քանի որ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը առևտրային կազմակերպություններում իրականացվում է կանոնակարգված ժամանակացույցով:

Այսպիսով, ֆինանսական ռիսկերի համակարգված հաշվառման պարագայում կապահովվեն օգտակար տեղեկատվության որակական բնութագրիչները, ինչպիսիք են հավաստելիությունը, տեղին լինելը, ճշմարիտ ներկայացումը, հետևողականությունը: Սակայն, մյուս կողմից, համակարգված հաշվառում կազմակերպելու համար անհրաժեշտ է մշակել կառավարչական հաշվառման այնպիսի մի համակարգ, որ հնարավորություն ստեղծվի.

- ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքները արժևորելու դրամական չափիչներով,
- կիրառելու ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքների կրկնակի գրանցում,
- ռիսկերի գծով իրականացնելու ֆինանսական և կառավարչական փոխկապակցված

հաշվառում:



Գծապատկեր 1 Ռիսկերի ձևավորման արդյունքների արձանագրումների փոխկապակցումը ֆինանսական և կառավարչական ինտեգրված հաշվառման համակարգերում⁴⁴

⁴⁴ Կազմված է հեղինակի կողմից:


Դրամական չափիչներով ֆինանսական ռիսկերի ձևավորման արդյունքները հիմք են ստեղծում դրանց կրկնակի գրանցման համար, որն արվում է ավանդական հաշվապահական հաշվառման պարագայում: Միայն այս դեպքում լրացուցիչ հիմնախնդիր է ծագում, թե ինչ հաշիվներով է կատարվելու ռիսկերի հաշվառումը: Եվ քանի որ գործող հաշվապահական հաշվառման հաշվային պլանը չի նախատեսում կիրառել ֆինանսական ռիսկերի ձևավորման գծով հատուկ հաշիվներ, ապա մեր կողմից առաջարկվում է հաշվային պլանի կառավարչական հաշիվների բաժնում բացելու նոր հաշիվներ, որոնցում կրկնակի գրանցման եղանակով կարձանագրվի ֆինանսական ռիսկերի ձևավորման և մարման հետագիծը (գծապատկեր 1):

Առևտրային կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի գծով կառավարչական նոր հաշիվների վարման նպատակը պարբերականությամբ թիրախավորված տեղեկատվության ստացումն է, որը պետք է լուծի հետևյալ խնդիրները.

- ո՞ր ուղղությամբ են ֆինանսական ռիսկեր ձևավորվում,
- ինչպիսի՞ն է ռիսկայնության աստիճանը ժամանակի կոնկրետ պահին,
- ինչպիսի՞ն է ֆինանսական ռիսկերի ձևավորման և մարման դինամիկան:

Թվարկած նպատակադրումներին հասնելու համար առաջարկվում ենք միմյանց հակակշռող կառավարչական նոր հաշիվներ «Ֆինանսական կայունություն» և «Ֆինանսական փաստացի ռիսկեր» անվանումներով: Երկու հաշիվներն էլ համադրող են և հաշվետվու ժամանակաշրջանի վերջին մնացորդ չեն ունենում: Եվ եթե, «Ֆինանսական փաստացի ռիսկեր» հաշիվը ցույց է տալիս, թե առևտրային կազմակերպության ակտիվների ֆինանսավորման որ ուղղությամբ են ձևավորվել ռիսկեր (կապիտալի համարժեքության, պարտավորությունների), ապա «Ֆինանսական կայունություն» հաշիվը արձանագրում է այն շեղումները, որոնք պատճառ են հանդիսացել ֆինանսական միկրոհավասարակշռության խախտման համար:

Հետևաբար, դրան զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում բացելու լրացուցիչ կառավարչական հաշիվ, որը կամփոփեր սահմանված նորմաներից այն շեղումները, որոնք ֆինանսական ռիսկեր են առաջացնում և խախտում են առևտրային կազմակերպությունների ֆինանսական միկրոհավասարակշռությունը: Այս առումով մեր կողմից առաջարկվում է բացել «Ֆինանսական կայունությունից շեղումներ» հաշիվը, որը ոչ միայն դրամական արժեքներով իր մեջ ամփոփում է ֆինանսական ռիսկեր ձևավորող գործոնային արդյունքները, այլև փոխկապակցում է «Ֆինանսական փաստացի ռիսկեր» և «Ֆինանսական կայունություն» կառավարչական հաշիվները (տես գծապատկեր 2.):



Գծապատկեր 2. Ֆինանսական ռիսկերի արդյունքների կառավարչական հաշվառման առաջարկվող հաշիվների փոխկապակցման սխեման⁴⁵

Փաստորեն, առաջարկվող կառավարչական հաշիվներով առևտրային կազմակերպություններում ձևավորվում են «Ֆինանսական կայունություն-շեղումներ-ֆինանսական ռիսկեր» տեղեկատվական հոսքեր, որոնք ունեն անընդհատություն, հետևողականություն, հավաստելիություն, և ժամանակային

⁴⁵ Կազմված է հեղինակի կողմից:

տեսանկյունից տեղին են: Բնականաբար, նման պարագայում բարենպաստ տեղեկատվական միջավայր է ստեղծում ռիսկերի գծով արդյունավետ կառավարչական որոշումների կայացման համար:

Հատկանշական է, որ առաջարկվող հաշիվները պետք է խմբավորվեն նաև ըստ ֆինանսական ռիսկերի ձևավորման և ռիկայնության աստիճանի հատկանիշների: Այսպես, “ֆինանսական կայունությունից շեղումներ” հաշիվը այս դեպքում հանդես կգա հիմնական և ստորադաս կարգերով, որը հնարավորություն կտա առևտրային կազմակերպություններում հետևողական տեղեկատվություն ստանալու այն մասին, թե.

- ի՞նչ գործոնների հաշվին են ձևավորվել միկրոհավասարկշման ֆինանսական շեղումները (կապիտալի թերհամարժեքություն, ընթացիկ կամ ոչ ընթացիկ պարտավորությունների գերազնահատումներ),

- ի՞նչ ռիսկայնության գոտում են գտնվում բացահայտված այս շեղումները (բնականոն, բարձր ռիսկային, անթույլատրելի):

Բնականաբար, կառավարչական հաշիվների նման կտրվածքով կիրառումը կառավարման մարմիններին կտրամադրի ռիսկերի գծով որոշումների կայացման համար խմբավորված տեղեկատվություն, որով հստակ կներկայացվեն ֆինանսական ռիսկերի ձևավորման պատճառները և դինամիկան: Քանի որ “ֆինանսական կայունությունից շեղումներ” հաշիվը փոխկապակցված է գործում “ֆինանսական փաստացի ռիսկեր” և “ֆինանսական կայունություն” առաջարկվող հաշիվների հետ, ապա այն ժամանակի կտրվածքով ոչ միայն ներկայացնում ձևավորվող ռիսկային արդյունքների աճը, այլև նվազեցումները, դրանով իսկ կառավարչական հաշվառման տեղեկատվությունը դարձնելով համադրելի և համապարփակ:

Այսպես, “ֆինանսական կայունությունից շեղումներ” երկրորդ կարգի հաշիվները հստակ տեղեկատվական ազդակներ են հաղորդում ձևավորված ֆինանսական ռիսկերի սահմանաչափերի վերաբերյալ և եթե դրանք հայտնվում են կրիտիկական կամ անթույլատրելի գոտիներում, ապա առևտրային կազմակերպությունների ռիսկ մենեջմենթը վերանայում է ռիսկերի զսպման մոտեցումները և առավել կոշտ դիրքորոշում է ձևավորում ընդունվող կառավարչական որոշումների հանդեպ:

Եթե ընդունենք, որ հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության ընթացիկ պարտավորությունների մնացորդը կազմել է 420 մլն դրամ, ընթացիկ ակտիվների մնացորդը՝ 600 մլն դրամ, իսկ ընթացիկ իրացվելիության գործակցի նորման սահմանված է 2.0, ապա պարզ կդառնա, որ առկա է ընթացիկ պարտավորությունների փոխհատուցման ռիսկ՝ 240 մլն դրամի չափով ($420 \times 2 - 600$):

Այս դեպքում, օգտվելով գծապատկեր 2-ում ներկայացվող սխեմայից, մեր կողմից կառաջարկվեն հետևյալ հաշվային թղթակցությունները, որոնք կգործեն կառավարչական հաշվառման համակարգում և կրկնակի գրանցումներ կառաջացնեն առաջարկվող հաշիվներում (տես գծապատկեր 3):

1. Ձևակերպվել է կազմակերպության ընթացիկ ակտիվների փաստացի մնացորդը.

Դո “Ֆինանսական փաստացի ռիսկեր”.....600

Կո “Ֆինանսական կայունություն”.....600

2. Ձևակերպվել է կազմակերպության ընթացիկ ակտիվների նորմատիվային մնացորդը.

Դո “Ֆինանսական կայունություն”.....840

Կո “Ֆինանսական փաստացի ռիսկեր”.....840

3. Ձևակերպվել է կազմակերպության ընթացիկ ակտիվների նորմատիվային մնացորդից շեղումը.

Դո “Ֆինանսական կայունությունից շեղումներ”.....240

Կո “Ֆինանսական կայունություն”.....240


4. Կազմակերպության ընթացիկ ակտիվների նորմատիվային մնացորդից շեղումը վերագրվել է ձևավորված փաստացի ռիսկերին.

Դո “Ֆինանսական փաստացի ռիսկեր”.....240

Կո “Ֆինանսական կայունությունից շեղումներ”.....240

Գծապատկեր 3-ը ցույց է տալիս, որ ֆինանսական ռիսկերը հաշվառող առաջարկվող հաշիվները, կառավարչական հաշվառման ավանդական մոտեցումների համաձայն մնացորդ չեն ունենում, սակայն դրան զուգահեռ, ներկայացնում են արժեքավոր տեղեկատվություն: Այսպես, ֆինանսական ռիսկերի ձևավորումները, որոնք ներկայացվում են շեղումների տեսքով, ոչ միայն ամփոփ ներկայացվում են համապատասխան հաշիվներում, այլև փոխկապակցում են առևտրային կազմակերպությունների

ակտիվների փաստացի մնացորդներն ոչ ռիսկային նախընտրելի մնացորդների հետ, որը արժեքավոր տեղեկատվություն է ֆինանսական ռիսկերի մեղման գծով կառավարչական որոշումների համար:



Գծապատկեր 3 ֆինանսական ռիսկերի արդյունքների կառավարչական հաշվառման հաշիվներում կրկնակի գրանցումը⁴⁶

Կատարելով իրենց վերագրված ֆինանսական ռիսկերի արդյունքների արձանագրման և ամփոփման տեղեկատվական գործառնությունները, առաջարկվող կառավարչական հաշիվները փակվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նորից սկսում են գործել հաջորդող ժամանակաշրջանում, իրականացնելով նույն գործառնությունները: Դրանով իսկ, ապահովվում է տեղեկատվության որակական բնութագրիչները անընդհատության, ժամանակայնության և համադրելիության առումով:

Այսպիսով, ֆինանսական ռիսկերի գծով համակարգային հաշվառման մեթոդաբանությունը մեր կողմից առաջարկվում է կառուցել կրկնակի գրանցման հենքով և ձևակերպել ֆինանսական ռիսկերի ձևավորման ու բաշխման նոր հաշվային թղթակցություններ, որը հնարավորություն կտա ռիսկերի գծով փոխկապակցել ֆինանսական և կառավարչական հաշվառման տեղեկատվական հոսքերը, ներկայացնել ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման քաղաքականություն և դրան համապատասխան՝ հաշվետվական համակարգ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ֆինանսական ռիսկերը ներկայումս չեն համարվում հաշվապահական հաշվառման օբյեկտներ: Մինչդեռ, առևտրային կազմակերպություններում կիրառվում են ֆինանսական ռիսկերի կառավարման տարբեր մեթոդներ և կայացվում են որոշումներ, որոնք տեղեկատվական ապահովվածություն են պահանջում: Հնդվածում առաջարկություններ են արվում առևտրային կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի կառավարչական հաշվառման կազմակերպման ուղղությամբ:

Հիմնաբանը. կառավարչական հաշվառում, կրկնակի գրանցում, հաշվապահական հաշվետվություններ, որոշումների կայացում:

PROBLEMS OF METHODOLOGY OF THE SYSTEM ACCOUNT OF FINANCIAL RISKS

Vahan Pogosyan

Currently, financial risks are not considered as accounting items. Meanwhile, in commercial organizations, various methods of managing financial risks are adopted, which requires information providing. The article suggests ways of applying the methodology of management accounting for financial risks in commercial organizations.

Keywords: management accounting, double entry, accounting reporting, management decision-making.

ПРОБЛЕМЫ МЕТОДОЛОГИИ СИСТЕМНОГО УЧЕТА ФИНАНСОВЫХ РИСКОВ

⁴⁶ Կազմված է 1-4 հաշվային թղթակցությունների հիման վրա:

Ваган Погосян

В настоящее время финансовые риски не считаются объектами бухгалтерского учета. Между тем, в коммерческих организациях принимаются разные методы управления финансовыми рисками, что требует информационной обеспеченности. В статье предлагаются пути применения методологии управленческого учета по финансовым рискам в коммерческих организациях.

Ключевые слова: управленческий учет, двойная запись, бухгалтерская отчетность, принятие управленческих решений

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մարգարիտա Պողոսյան

Մարդկային կապիտալը կարելի է նաև բնորոշել որպես առողջության, գիտելիքների, ընդունակությունների, մշակույթի, փորձի կուտակված պաշար, որը նպատակաուղղված է ապրանքների և ծառայությունների արտադրությանը, մարդու, ձեռնարկության, հասարակության եկամուտների ավելացմանը:

Ինչպես նշում է Մարշալը. «Բնակչության ուժն ու առողջությունը արտադրողականության հիմքն են, որից կախված է նյութական հարստության ստեղծումը: Երբ իր հերթին նյութական հարստությունն է օգտագործվում խելամիտ, ապա նրա գլխավոր նշանակությունն այն է, որ վերջինս ավելացնում է մարդկային ցեղի ուժն ու առողջությունը՝ ֆիզիկական, մտավոր և բարոյական»:⁴⁷

Բնակչության առողջությունը՝ որպես մարդկային կապիտալի բաղադրամաս, դրա կորուստները ՀՀ-ում հանգամանորեն քննարկվել է Գ. Ղարիբյանի, Մ. Եղիազարյանի, Ռ. Իսահակյանի կողմից: Նրանք մասնավորապես նշում են. «Մարդկային զարգացման համաթվում գլխավոր ցուցանիշը կյանքի տևողությունն է, սակայն միաժամանակ նկատի է առնվում, որ մարդու հնարավորությունների ու ազատությունների ընդլայնման տեսանկյունից կարևոր է ոչ միայն կյանքի տևողությունը, այլև նրա առողջ ընթացքը, քանի որ հիվանդությունները խոչընդոտում ու սահմանափակում են մարդու ինքնահաստատման ու ինքնաիրացման հնարավորությունները»:

Այս առումով առողջական կարիքների բավարարումը հիմնարար նշանակություն ունի մարդկային զարգացման համար, և առողջապահական համակարգի խնդիրը ոչ միայն հիվանդությունների բուժումը պետք է լինի, այլև, առաջին հերթին, դրանց կանխարգելումը, քանի որ հիվանդությունն ինքն արդեն իսկ հնարավորության սահմանափակում է»:⁴⁸ Հետազոտությունը բացահայտում է ՀՀ-ում բնակչության առողջապահական ծառայություններից օգտվելու խիստ սահմանափակ հնարավորությունները և դրանցից բխող հետևանքները: Եկամուտների անբավարարությունը, ինչպես նաև, անվստահությունը բժշկների նկատմամբ հանգեցրել են հիվանդների ախտորոշման նպատակով բնակչության բժշկի չդիմելու (70%) խնդրին, ինչը ավելի հրատապ է դարձնում ֆիզիկական կուլտուրայի, որպես առողջության պահպանման միջոցի, դերի կարևորման հարցը: Սակայն, վերը նշված հետազոտություններում հիմնականում չի առանձնացվում ֆիզիկական ակտիվությունը՝ որպես բնակչության առողջությանը նպաստող գործոնի, որպես հիվանդությունների կանխարգելման և ակտիվ կյանքի երկարացման միջոցի:

Կյանքի սպասվելիք տևողության վրա ֆիզիկական կուլտուրայի ազդեցությունը քննարկվել է մի շարք գիտնականների հետազոտություններում: Վ.Մ. Զաքիդրսկու աշխատությունում (1988) կան արտասահմանյան հեղինակների ընդհանրացված տվյալներ: Ըստ ամերիկյան հետազոտողների 1828-1928թթ. թիավարող մարզիկների կյանքի միջին տևողությունը կազմել է 67.9 տարի, այն դեպքում, երբ նրանց համալսարանական ընկերներինը ընդամենը եղել է 61.6 տարի: Կարվոնների հետազոտության մեջ վերլուծության է ենթարկվել

⁴⁷ Маршал, Принципы экономической науки, М., 1993, с. 268.

⁴⁸ Ղարիբյան Գ., Եղիազարյան Մ., Իսահակյան Ռ., Բնակչության առողջությունը՝ մարդկային կապիտալի բաղադրամաս. կորուստները և կանխման հիմնախնդիրները, //ԵՊՀ Տարեգիրք, 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր.: ԵՊՀ հրատ. 2014, էջեր 180-193

Ֆինլանդիայի 1845-1910թթ. ծնված 396 դահուկասպորտի չեմպիոնների կյանքը, որոնք մինչև կյանքի վերջին տարիները ակտիվ մարզումներով են զբաղված եղել: Պարզվել է, որ նրանց կյանքի միջին տևողությունը կազմել է 73 տարի՝ գերազանցելով երկրում տղամարդկանց միջին տարիքը ամբողջ 4.3 տարով: Հետագայում, 45-64 տարեկան 600 տղամարդկանց շրջանում 20 տարի տևած մեկ այլ հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ակտիվ շարժողական կյանք վարողների կյանքի միջին տևողությունը 2.1 տարով գերազանցում է իրենց հասակակիցների ցուցանիշը ի հաշիվ ինֆարկտից մահացության կրճատման: Այստեղից հեղինակը գալիս է հետևության, որ շարժողական բարձր ակտիվությունը կարող է կանխել վաղաժամ մահացությունը ինֆարկտից, սակայն չի կարող մեծացնել կյանքի մաքսիմալ տևողությունը: Ամերիկյան հայտնի կարդիոլոգ պրոֆեսոր Ուայթն առաջարկում է. «Եթե մենք չենք կարող տարիներ ավելացնել մեր կյանքին, ուրեմն ավելացնենք կյանք մեր տարիներին»:

Հետաքրքիր տվյալներ են բերվում Դալլասի Կուպերի անվան աերոբիկայի կենտրոնի կողմից: 10 տարվա ընթացքում հետազոտելով 10000 մարդու, բացահայտել են առավել բարձր է ֆիզիկական ցածր պատրաստվածությամբ մարդկանց մահացության մակարդակը՝ 64 դեպք 10000 մարդ/տարում, և առավել ցածր է նույն ցուցանիշը ֆիզիկական պատրաստվածության ամենաբարձր մակարդակի մարդկանց մոտ՝ 18.6 մահվան դեպք: Ֆիզիկապես պատրաստված մարդկանց շրջանում ռիսկային այլ գործոնների առկայությունը, ինչպիսիք են արյան մեջ շաքարի կամ խոլեստերինի մակարդակի ավելցուկը, հիպերտոնիան, գիրությունը, մահացության մակարդակը բարձրացնում են 1.5-2 անգամ, այն դեպքում, երբ ֆիզիկական ցածր պատրաստությամբ մարդկանց մոտ դրանց առկայությունը նույն ցուցանիշն ավելացնում է 3,4 անգամ:⁴⁹

Պետք է նշել, որ ֆիզիկական կուլտուրան և սպորտը ոչ միայն առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման և ակտիվ կյանքի երկարացման միջոց են, այլև բազմաթիվ հիվանդությունների արդյունավետ բուժման միջոց: Շնորհիվ իր առողջարարական և վերականգնողական ֆունկցիաների ֆիզիկական կուլտուրան, առողջապահության մեջ կիրառման մեծ սպեկտր ունի՝ սկսած հենաշարժական համակարգի հիվանդություններից մինչև սրտանոթային հիվանդություններ, գեղձերի ախտահարում (շաքարախտ) և այլն:

Ընդհանրապես, ֆիզիկական կուլտուրայի (ՖԿ) և սպորտի ոլորտի առնչությունները առողջապահության համակարգի հետ կարելի է ներկայացնել հետևյալ կետերով.

➤ ՖԿ համակարգը այլընտրանք է առողջապահության համար, հիվանդությունների բուժման փոխարեն դրանց կանխարգելման, ֆիզիկական առողջության և դիմադրողականության բարձրացման հաշվին:

➤ Մարդկային կապիտալում ներդրումների հետազոտությունները, ընդհանուր առմամբ, կատարվել են միակողմանի՝ հիմնական ուշադրությունը սևեռելով կրթությանն ու նախապատրաստմանը արտադրությանը, շատ քիչ ուշադրություն դարձնելով մարդկային կապիտալում, թերևս, առաջնային՝ առողջության պահպանմանն ուղղված ներդրումներին: ՄԱԿ-ի տնտեսական հարցերով ղեկարավարվող մարդկային կապիտալի վրա կատարվող ներդրումները բնորոշում է որպես աշխատանքի արտադրողականության բարձրացման նպատակով կատարվող ներդրումներ՝ այս շարքում մեծ տեղ առանձնացնելով առողջության և կյանքի որակական չափանիշների բարելավմանը: Որպես առողջության պահպանմանն ու բարելավմանն ուղղված գործոն, կարծում ենք մեծ նշանակություն ունեն ներդրումները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում:

➤ Մարդկային կապիտալի դասակարգումը հնարավոր է ըստ տարբեր չափանիշների և տարբեր նպատակներով: Արևմտյան գիտնականները, սովորաբար, այս դասակարգման հիմքում դնում են մարդկային կապիտալում ներդրումների տեսակները: Գ. Շուլցը ներդրումային գործունեության տեսակներին դասում է դպրոցական կրթությունը, ուսուցումը աշխատատեղում, առողջության ամրացումը, տնտեսական տեղեկատվության ավելացող պաշարը:⁵⁰ Գործունեության այս բոլոր տեսակները նպատակաուղղված են մարդկային ունակությունների որոշակի խմբերի ձևավորմանը, որոնք կարող են կոնկրետ կապիտալային գնահատական ստանալ և կիրառվել որպես մարդկային կապիտալ:

➤ ՖԿ-ն նաև առողջապահության համակարգի բաղադրիչ է՝ լայնորեն կիրառվում է բազմաթիվ հիվանդությունների բուժման գործընթացում:

➤ Ֆիզիկական կուլտուրայի և առողջապահության ոլորտներն առնչվում են նաև սպորտային բժշկության հարթությունում՝ երբ բժշկությունը օգնում է հասնել սպորտային բարձր նվաճումների:

Ազգաբնակչության շրջանում սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զանգվածային արմատավորումը դրականորեն է ազդում կուտակված մարդկային կապիտալի որակական բարձրացման վրա ոչ միայն առողջ

⁴⁹ <http://www.km.ru/referats/EFAE7DBFA12F4C6F8183CB8E3EC50695>

⁵⁰ Schultz T. Investment in Human Capital/ - the Role of Education and of Research. H.Y., 1971. P. 62

ապրելակերպի մակարդակի բարելավման, այլև ժամանցի և հանգստի արդյունավետ կազմակերպման և դրանով իսկ՝ աշխատուժի վերականգնման առումով: Այս համատեքստում, անփոխարինելի կարող է լինել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գործոնի ազդեցությունը մարդկային կապիտալի որակական կազմի ներդաշնակ վերարտադրության գործում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկված են ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջապահության ոլորտների առնչությունները՝ որպես մարդկային կապիտալի ձևավորման և կուտակման բաղադրիչներ: Առողջական կարիքների բավարարումը հիմնարար նշանակություն ունի մարդկային զարգացման համար և առողջապահական համակարգի խնդիրը ոչ միայն հիվանդությունների բուժումը պետք է լինի, այլև, առաջին հերթին, դրանց կանխարգելումը, քանի որ հիվանդությունն ինքն արդեն իսկ հնարավորության սահմանափակում է: Այս համատեքստում առանձնապես կարևոր է ֆիզիկական կուլտուրան և սպորտը, որպես ոչ միայն առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման և ակտիվ կյանքի երկարացման, այլև բազմաթիվ հիվանդությունների արդյունավետ բուժման միջոց:

Հիմնաբաներ. մարդկային կապիտալ, առողջապահության համակարգ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, ներդրումներ առողջության մեջ:

RELATIONS OF PHYSICAL EDUCATION AND HEALTH IN THE CONTEXT OF HUMAN CAPITAL

Margarita Poghosyan

Meeting the demands of health care is of great importance for development of human potential. The problem of the health care system is not only the treatment of diseases, but above all, their prevention, as any disease limiting human opportunities. In this context, particularly important role of physical culture and sport not only as a means of maintaining health, preventing disease and prolonging the active phase of life, but also as a means of effective treatment of many diseases.

Keywords: human capital, physical culture and sport, health care system, investment in health.

СООТНОШЕНИЕ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И ЗДРАВООХРАНЕНИЯ В КОНТЕКСТЕ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА

Маргарита Погосян

В статье обсуждаются отношения физической культуры, спорта и здравоохранения, в качестве компонентов формирования и накопления человеческого капитала.

Удовлетворение потребностей здравоохранения имеет фундаментальное значение для развития человеческого потенциала. Проблемой системы здравоохранения является не только лечение болезней, но прежде всего их профилактика, так как любая болезнь есть ограничение возможностей. В этом контексте особенно важна роль физической культуры и спорта не только в качестве средства поддержания здоровья, профилактики заболеваний и продления активной фазы жизни, но и как средство эффективного лечения многих заболеваний.

Ключевые слова: человеческий капитал, система здравоохранения, физическая культура и спорт, инвестиции в здоровье.

ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ «ԹՈՒՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ» ՄԱՍԻՆ

Աշոտ Ներսիսյան

Հայ ժողովրդի հոգևոր և քաղաքական ընկալումներում «թուրք» հասկացությունը համարժեք է, մեղմ ասած, թշնամի հասկացությանը, ավելի խիստ ասած՝ ոճրագործ, մարդասպան եզրույթներն են ընկալվում դրան համարժեք: Պատճառների մասին ավելորդ է խոսել, քանզի պարզից էլ պարզ են և հիմքեր կան դրանք այդպիսին համարելու: Բայց շատ

ավելի կարևոր է հայության համար ընդհանրական դարձնել այն հայեցակարգը, որ թուրք ժողովրդին ցեղասպան դարձրին ոչ թե պանթուրքիստական գաղափարախոսական ինչ – ինչ դրույթների որդեգրումներ, այլ՝ Թուրքիան մասնատելու Արևմուտքի և Ռուսաստանի քաղաքական ցանկությունները, որոնց, որպես հակազդեցություն, փորձ արվեց ձևավորելու հիշյալ գաղափարախոսությունը, որի իրականացման գաղափարական և ռազմական բոլոր հիմքերը սպառնալից էին:

Այսպիսի հարցադրումներին Հայաստանում և Սփյուռքում արձագանքները միանգամայնորեն դատապարտելի են դիտարկվում, քանզի տարբեր քաղաքական անձեր, կառույցներ և կուսակցություններ ցանկանում են մեր հոգիներում միշտ վառ պահել թուրքի հավիտենական թշնամի լինելու կերպարը⁵¹, բնականաբար, իրենց տնտեսական և քաղաքական գերխնդիրներով պայմանավորված: Ցավոք, հայրենասեր ընկալվելու մարմաջը ստիպում է լռել այն քիչ թվով մարդկանց, ովքեր ավելի ճիշտ են ընկալել այն խորքային գործընթացները, որոնք հանգեցրին հայոց մեծ ողբերգությանը և առավել ճիշտ են ընկալում այն քաղաքական գործընթացների վնասակար հետևանքները, որոնք իրականացվում են այսօր ընդդեմ Թուրքիայի, որը չի առնչվում հոգուտ հայոց ցեղասպանության ճանաչմանը:⁵²

Այս ամենի իրավացիության մեջ համոզվելու համար անհրաժեշտ է թուրքական գործոնի ճիշտ գնահատումը չչփոթել թրքասիրության հետ, այլ՝ դրա անհրաժեշտությունը բխեցնել այն կորուստների պատճառների ճիշտ գնահատման ցանկությունից ելնելով, որոնք կրել ենք Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնավորումով մինչև 1923 թ. և կրում ենք մինչև օրս:

Ուստի անհրաժեշտ է որոնել և գտնել հետևյալ հարցերի ճիշտ պատասխանները.

1. Ի՞նչ էր թուրքական գործոնը Ռուսաստանի համար:
2. Ի՞նչ էր նույն գործոնը Արևմուտքի համար:
3. Ի՞նչ էր Հայկական գործոնը Թուրքիայի համար:

Առաջին երկուսի ճիշտ գնահատականի դեպքում մենք ստանում ենք երրորդի պատասխանը:

Ռուսաստանը մեր քաղաքական ընկալումներում, ընդհանուր առմամբ, դիտվում է որպես մշտական բարեկամ և այդ բարեկամի կերպարն այսօր էլ չի խամրել, չնայած, որ Արևմուտքի քաղաքական շահերին հետամուտ հայաստանյան որոշ ուժեր խիստ բացասաբար են տրամադրված Եվրասիական Միությանը ՀՀ անդամակցելուն, ինչպես նաև ուժեր, որոնք ազնվորեն ցանկանում են հաշվեկշռի ենթարկել դրան անդամակցելու օգուտներն ու վնասները՝ իսկապես ելնելով մեր պետականության անկախության ամրապնդման շահերից: Դրանց սահմանազատելն այլ խնդիր է: Փորձենք հասկանալ, թե Ռուսաստանի հակաթուրքական կամ Թուրքիան մասնատելու ցանկություններում ինչ դեր էր մեզ վերապահված, և արդյոք մենք ճիշտ էինք, երբ չէինք ընդդիմանում, երբ ռուսները մեր թևից բռնած մեզ բարձրացնում էին իրենց քաղաքական լաստի վրա, որը շատ վտանգավոր էր և այդ վտանգն զգացողները որակվում էին որպես թրքամետներ:

Հայտնի է, որ ռուսական քաղաքականությունն այս տարածաշրջանում ակտիվացավ 19 – րդ դարի սկզբներին, երբ այն փորձեց իր առջև դրված հիմնական խնդիրներից մեկը լուծել, որն էր՝ իջնել դեպի միջերկրականը: Այս ճանապարհի վրա Անդրկովկասն էր, ապա՝ Արևմտյան Հայաստանը, որոնց գրավելու հնարավորությունները նա ուներ, քանզի Օսմանյան կայսրությունը, որը թույլ պետություն էր տնտեսական և քաղաքական առումներով, ճնշման էր ենթարկվում՝ քրիստոնյա եղբայրներին, այդ քաղաքական արտահայտությունների քողի տակ թաքցնելով իր իրական ձգտումներն:⁵³ Սակայն, այն ինչ նա հասկանում էր, չէր հասկանում հայ ժողովրդի դեկավարությունը, որին թվում էր, սկսած Իսրայել Օրուց, որ Ռուսաստանը համակված է հայկական պետություն ստեղծելու անկեղծ ցանկությամբ: Ռուս – թուրքական պատերազմներում հայության օգնությունը ռուսներին պայմանավորված էր այս հավատով, իսկ ռուսների՝ այդ օգնության ակնկալիքը՝ հայությանն ընդդեմ Թուրքիայի տրամադրելով, որը

⁵¹ Թորիկյան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, Բեյրութ, 1976

⁵² Ալեքսանդր Խատիսեան, Հայաստանի Հանրապետության ծագումնական գաղափարը, Բեյրութ, 1968

⁵³ Ջոն Բրայան Է. Ա., Ս., 1920թ. Թուրք-հայկական պատերազմը և տեքնոլոգիան, Երևան, 1997

բխում էր նրա քաղաքական ցանկություններից: Հայերի քաղաքական ռոմանտիզմը պարզորոշ դարձավ թե՛ 1806-12 թթ., թե՛ 1828 – 29 թթ., թե՛ 1853-56 թթ և թե՛ 1877- 78 թթ. ռուս – թուրքական պատերազմներից հետո, որոնցում ռուսական ռազմական հաղթանակներին հաջորդում էր դիվանագիտական պարտությունը, քանզի Արևմուտքին ամենևին ձեռնտու չէր Ռուսաստանի կողմից նեղուցների գրավումը և հիմնականում Անգլիան նրա առաջխաղացման դեպքում հանդես էր գալիս թուրքիայի պաշտպանի դերում:⁵⁴ Արդյունքում՝ Ռուսաստանը կորցնում էր իր հաղթանակի պտուղները, իսկ չեզոքության փոխարեն նրան օգնած արևմտահայությունը թուրքիայի կողմից ընկալվում էր որպես անվստահելի տարր:

Ուրեմն, թուրքական գործոնը Ռուսաստանի համար նեղուցներին հասնելու դրույթի մի մասն էր, որում ըստ նրա՝ փոքր – ինչ դերակատարություն կարող էր ունենալ հայությունը, որն այդպես էլ չհասկացավ, որ քաղաքականության մեջ քրիստոնյա լինելը պայման չէ ազգային անվտանգության ակնկալիքի տեսանկյունից, որն ունես մեկ այլ քրիստոնյա հզոր տերության նկատմամբ:

Իր քաղաքական ծրագրերում հայության օգտագործման ռազմավարությամբ, այսպիսով, Ռուսաստանն աստիճանաբար թուրքիայի համար հասունացնում էր այն գաղափարը, որ պետք է ազատվել արևմտահայությունից: Ուրեմն, ցեղասպանության պատճառները գալիս են դեռևս 19-րդ դարի առաջին քառորդից, որը նախ դրսևորվեց հայերի ստիպողական գաղթի ձևով, առաջինը, 1830 թ.-ին, երբ Էրզրումը թուրքիային հանձնելուց հետո տեղի բնակչությունից 30000 հայեր Կարապետ եպիսկոպոսի գլխավորությամբ թողեցին իրենց հայրենիքը և բռնեցին դեպի Ախալքալակ և Ծալկայի շրջան գաղթի ուղին: Այս նույն երևույթը շարունակվեց Բեռլինի վեհաժողովից հետո, ապա իր դաժան դրսորդումներն ունեցավ 1914թ. վերջերից, երբ արևմտահայության բռնագաղթն իրականացվում էր ոչնչացման զուգորդությամբ:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեության ամենաեռուն շրջաններից մեկը՝ 1890 - ական թթ. առաջին կեսերն էր, երբ ազգային - ազատագրական դրվագների գլխավոր շարժառիթները մեծ տերությունների, և այդ թվում, Ռուսաստանի միջամտության ակնկալիքն էր, որը բերեց թուրքիայի վրա միասնաբար ճնշում գործադրելու հակասության: Այն ընկալելով, թուրքիան ձեռնամուխ եղավ արևմտահայության առաջին զանգվածային ջարդերին: Պետք չէ ուշադրությունից շեղել այն հանգամանքը, որ հայոց առաջին զանգվածային ջարդերը տեղի են ունեցել հենց այս շրջանում: Պատճառն այն էր, որ ազատագրական ձգտումները կախյալ էին մեծ տերությունների միջամտության թյուր հույսերից:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայության նկատմամբ տեղի ունեցածը նույնպես պետք է պայմանավորել **չեզոքության փոխարեն** ռուսական քաղաքականության հանդեպ ունեցած հույսերով, երբ հայության շահը պահանջում էր լուռ և անցնցում սպասել պատերազմի ավարտին, որի դեպքում ինքնաբերաբար կճշտվեր նրա կարգավիճակը: Հակաթուրքականության մերժումը 1908թ. երիտթուրքական սահմանադրությունից հետո պետք է շարունակվեր նաև պատերազմի ընթացքում, բայց այն կրկին խախտվեց Բալկանյան պատերազմի սկզբնավորմամբ, որի պայմաններում մասնավորապես Դաշնակցություն կուսակցությունը խզեց իր հարաբերությունները երիտթուրքերի հետ, կրկին տարվելով դաշնակիցներով, այն դեպքում, երբ ՀՀԴ - Երիտթուրք դաշինքը խելամիտ քայլերից մեկն էր ՀՀԴ պատմության ողջ ընթացքում և որը չէր ցանկանում Ռուսաստանը:

Պատերազմի ժամանակ չեզոքության պահպանումը արևմտահայության անվտանգության հիմնական երաշխիքն էր և ոչ մեկը չի կարող ապացուցել, որ հակառակ դեպքում էլ հայերը կկոտորվեին: Այդ անում են այսպես կոչված պանտուրքիզմի ծրագրի հարկի - անհարկի մեջբերողները, այն դեպքում, երբ նման ծրագրի առկայությամբ ցեղասպանության պայմանավորումը չհասունացած մտքի էժանագին վարժանք է:

Ընդհանրացնելով, շեշտենք՝ թուրքական գործոնը Ռուսաստանի համար ի հակադրություն Արևմուտքի, նեղուցներում և Մերձավոր ու Միջին Արևելքում ամրապնդվելու ցանկությամբ էր ծնվել, որը ցարերի դարավոր երազանքն էր, իսկ հայկական գործոնը

⁵⁴ Հայաստանի Հանրապետության պատմություն, 1918-1920թթ., (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագիր Գ. Գալոյան, 2000:

թուրքական գործոնը չեզոքացնելուն նվիրված լրացուցիչ միջոց էր՝ հայության քրիստոնյա լինելու շարժառիթներով հիմնավորված:

Առաջին Հանրապետության ավարտական փուլում թուրքական գործոնը ռուսների համար փոխեց իր իմաստն ու բովանդակությունը: Այս անգամ նա նեղուցներից դաշնակիցներին քշելու ցանկությամբ համակված նպաստեց նոր թուրքիայի ստեղծմանը: Հասնելով իր նպատակին, իսկ հայ քաղաքական առաջնորդներն էլ, չհասկանալով այդ կառչած մնացին Սևրի պայմանագրին, որն իր կնքման պահից իսկ անգործության դատապարտված փաստաթուղթ էր, փոխանակ գնալու թուրքերի հետ բանակցությունների, որոնք դրա կարիքն ունեին 1920թ. հունիս – հուլիսին:

Վերջին երկուհարյուր տարվա պատմության խորհուրդը հետևյալն է՝ հայության փրկության կարևորագույն երաշխիքը թուրքիայի հետ թշնամական հարաբերությունների մեղմումն է, որի գիտակցումն ունեն մեծ տերությունները, բայց որը խրախուսում կամ սառեցնում են իրենց քաղաքական ցանկություններից ելնելով: Թուրքիային մեզ թշնամի պահելու գիտացության սերմանումը բխում է Ռուսաստանի տնտեսական և ռազմական շահերից:

Արևմուտքի համար նույնպես թուրքական գործոնն հանդիսացել է եվրոպական և ասիական թուրքիայի վրա ռուսական ազդեցության չեզոքացման գործոն: Եթե նրան ձեռնադրել էր ռուսական առաջխաղացումը, ապա փրկել է թուրքիային, կասեցնելով այդ առաջխաղացումը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Արևմուտքը ավելի անկեղծ է եղել Հայկական Հարցի լուծման ցանկություններում, բայց Արևմտյան Հայաստանն ու նեղուցները նրանք խոստացել էին Ռուսաստանին: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի պատերազմից դուրս մնալով, նրանք ցանկացել են անկեղծորեն կայացած տեսնել ՀՀ անկախությունը: Սակայն հայ քաղաքական ղեկավարները չափավոր չեն եղել իրենց քաղաքական և տարածքային պահանջների մեջ, որը նպաստել է քչի փոխարեն կորցնելու առավելագույնը: Քեմալական շարժման ձևավորմամբ, նրանք ցանկացել են մերձենալ Քեմալին, քանզի անկարող էին նոր պատերազմ սկսելու Ռուսաստանի և թուրքիայի դեմ, դարձյալ այն պատճառով, որ Ռուսաստանի փոխարեն նեղուցների վրա տեսնեն թուրքիային: Այս իրավիճակում նրանք հայերին մատնանշել են թուրքերի հետ լեզու գտնելու ուղին, որը վերջիններս հասկացել են ուշացումով, երբ շուտ հասկանալով՝ կարող էին խուսափել 1920թ. թուրքական պատերազմից:⁵⁵

Փաստորեն, Ռուսաստան - Արևմուտք հակասությունները պատճառ են հանդիսացել թուրքիայի հաղթելուն կամ վերածնվելուն: Հայ քաղաքական ուժերը այդպես էլ չեն հասկացել, որ իրենց օգտագործել են՝ արդյունքում փոքր ժողովուրդներից հանդիսանալով ամենից շատ զոհեր տվողը, որը խորհել է տալիս, որ ունեցել են մարտավարական և ռազմավարական լուրջ սխալներ: Այս պայմաններում Հայկական գործոնը թուրքերն ընկալել են մեծ տերությունների կողմից թուրքիան մասնատելու միջոց, ինչի մասին նաև ակնարկել են հայերին: Այսօր էլ այդ գործընթացները շարունակվում են և հայերը պետք է ճկունություն ցուցաբերեն և կուլ չգնան թուրքական գործոնին, դրանով իսկ զոհասեղանին դնելով իրենց անկախությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը վերաբերում է այսպես կոչված «թուրքական գործոնին», որը ժամանակ առ ժամանակ առիթ է հանդիսացել Ռուսաստանին և Արևմուտքին ծառայեցնել իրենց քաղաքական շահերին՝ օգտագործելով Օսմանյան թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա փոքրամասնություններին, այդ թվում և հայերին իրենց կողմը գրավելու համար: Հայ քաղաքական միտքը տարվելով ներշնչված խաբկանքով՝ տանուլ է տվել իր դիվանագիտական ցանկությունները: Ջարգացվում է այն հայեցակետը, որ թուրքական գործոնի ճիշտ ընկալումն ուղիղ համեմատական չէ թուրքական ոճրագործությունների արդարացմանը:

⁵⁵ Ավետիս Ահարոնյան, Սարգսիսյանի մինչև Սևրի և Լոզան, քաղաքական օրագիր, 1919 - 1927, Կազմեց Լ. Գ. Մանուկյան, Երևան, 2001

Հիմնարաներ. Թուրքական գործոն, Հայկական գործոն, Հայկական հարց, Ռուսաստան, Արևմտյան Հայաստան, քաղաքականություն, քաղաքական շահեր, կողմնորոշում, նեղուցներ:

ABOUT SO – CALLED TURKISH FACTOR

Ashot Nersisyan

The article is devoted to the so-called "Turkish factor", which from time to time becomes an occasion for realization of political ambitions of Russia and the West countries in the circles of national minorities of christian peoples, including Armenians, who lived under the influence of the Ottoman Empire. Armenian political thought often loses due to the perception of this political deception, since for ever the the Turkish factor has a direct dependence with the convictions of Turkish crimes against nations.

Keywords: Turkish factor, Armenian factor, Armenian issue, Western Armenia, political dividends, political orientation, straits.

О ТАК НАЗЫВАЕМОМ ТУРЕЦКОМ ФАКТОРЕ

Ашот Нерсисян

Статья посвящена так называемому „турецкому фактору“, который время от времени становится поводом для реализации политических амбиций России и Запада в кругах национальных меньшинств христианских народов, в том числе армян, живших в составе Османской Империи. Армянская политическая мысль часто проигрывает из-за восприятие данного политического обмана, поскольку не всегда турецкий фактор имеет прямую зависимость от убеждений о турецких преступлениях против народов.

Ключевые слова: турецкий фактор, армянский фактор, Армянский вопрос, Западная Армения, политические дивиденды, политическая ориентация, проливы.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Նունե Մկրտչյան

Մեծ է Թումանյանի դերը ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած նյութական և մարդկային կորուստները արձանագրելու գործում: Առաջին համաշխարհային պատերազմում (1914-1918 թթ.) հայ ժողովրդի կրած վնասները հաշվելու և Փարիզի հաշտության խորհրդաժողովին (1919-1920 թթ.) ներկայացնելու նպատակով Հայ Հայրենակցական Միությունը ստեղծում է «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով», որը գլխավորում է Հայ հայրենակցական միությունների նախագահ Հ. Թումանյանը: Առաջին համաշխարհային պատերազմում հայերի կորուստը որոշող բյուրոյի խնդիրն էր շարադրել հայկական հարցի պատմությունը իր զարգացման բոլոր աստիճաններում, տեղական հետազոտության ճանապարհով մանրամասն վեր հանել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդին հասցված վնասների ու կորուստների չափերը, մանրամասն շարադրել հայկական ռազմական ուժերի և ընդհանրապես հայ ժողովրդի մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմում և պարզաբանել այդ մասնակցության նշանակությունը ռազմական և քաղաքական տեսանկյուններից: Թուրք պատմաբանների՝ Թաներ Աքչամի, Ալի Չեթինսոլուի վկայակոչված աղբյուրները, արխիվային վավերագրերը ևս ապացուցում են, որ հայերի ունեցվածքի յուրացման ճանապարհով թուրքերը լցրել են իրենց պետական դատարկ գանձարանը և ստեղծել Թուրքիայի հանրապետությունը:

Քննիչ հանձնաժողովը դիմում է զանազան կազմակերպությունների, անհատ անձանց՝ իր աշխատանքներին աջակցելու խնդրանքով: Դիմումներ էին ներկայացնում ոչ միայն տարածաշրջանների բնակիչներ, այլև անհատներ՝ նշանավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանը (գործում կա նաև ճարտարապետ Թորոս Թորամանյանին պատճառած վնասների ու բռնությունների ցուցակը՝ գրված ճարտարապետի կողմից)⁵⁶, անվանի հայագետ Երվանդ Տեր-Մինասյանը և ուրիշներ:

Կարդալով Սուրմալուի գավառի Թագազյուղի բնակիչների խնդրագրերը, կորուստների ցուցակները, բողոքները մարդկանց առևանգման փաստերով՝ Թումանյանը չէր կարող անտարբեր մնալ բնաջնջվող իր ժողովրդի ճակատագրին: Որդեկորույս հայրը ներկայացրել էր ասկյարների կողմից երկու մանկահասակ երեխաներին իրենց գյուղից գողանալու և չվերադարձնելու փաստը. խնդրում էր միջամտել և հետ վերադարձնել իր զավակներին⁵⁷:

Ինչ խոսքերով կարելի է նկարագրել այն զգացումները, որոնք բզկրտում էին Թումանյանի հոգին, երբ նա խորհում է իր դժբախտ և հերոսական ԱԶԳի մասին, որն աշխարհը զարմացրել է իր խիզախությամբ և անվեհերությամբ, երբ դեռ երեկ Օսմանյան կայսրության ազգերից առավել կենսունակ ու առաջավորն էր, որն այսօր դառնում է սոսկ անցյալի հուշ:

XX դարասկզբին Օսմանյան կայսրությունում ասպարեզ եկած երիտթուրքերը շարունակեցին Արդուլ Համիդի քաղաքականությունը, առավել խարդախ ու դաժան մեթոդներով՝ հաշվի չնստելով հայի համեստ պահանջների հետ: Արդուլ Համիդի ջարդերը դատարկ բան են թվում ժամանակակից թուրքերի իրականացրած կոտորածի համեմատությամբ: Գերմանացի գրող Արմին Վագները նշում էր, որ հայերը մեռնում էին ամեն տեսակի երկրային մահերով, բոլոր ժամանակների մահերով:

Այսքանով հայերի նկատմամբ թուրքական ոտնձգությունները չավարտվեցին: Երիտթուրքերի 1918 թ.-ին Անդրկովկաս կատարած արշավանքի ժամանակ կոտորվեց 500.000 հայ: Սկիզբ առան այս սարսափները, որոնք իրենց հավասարը չունեն պատմության մեջ: Արևմտահայերի բռնագաղթը այլ բան չէր, քան քողարկված սպանդ: Չկա աշխարհում որևէ լեզու՝ այնքան գունեղ և հարուստ, որով հնարավոր լիներ նկարագրել նման անմարդկային սարսափները:

Թումանյանը ուսումնասիրում է Էրզրումից բերված ռազմագերիների ցուցմունքները, Էրզրումում գերի գտնվող զինվորների ցուցակները, Կարսի հրաձգային դիվիզիայի ենթասպա Հակոբ Ապոյանի վկայությունը, որ «թուրքերը 480 սպաներից առանձնացրել են 40 հայ սպաների, որոնց տարբերել են ազգանվամբ ու արտաքինով, առաջին 5 օրերի ընթացքում նրանց հաց չէին տալիս և թույլ էլ չէին տալիս դուրս գալ գորանոցից ու հաց գնել, առանց որևէ պատճառաբանության և բացատրության սպանում էին հայ զինվորներին»:⁵⁸

Տեղահանության իսկական նպատակը թալանն ու ոչնչացումն էր: Իրականում դա բնաջնջման մի նոր եղանակ էր: Երբ թուրքական իշխանությունները հրաման էին տալիս, փաստորեն, նրանք ամբողջ մի ազգի մահավճիռ էին արձակում: Այս ամենը մտովի պատկերացնելն իսկ սահմանեցուցիչ է, իսկ ինչ էր զգում Մեծն Լոռեցին: Թումանյանը վերլուծում էր փաստերը և բնաջնջվող հայ ժողովրդի համար ելք փնտրում: Նա կարծում էր, որ ժողովրդին խոսքերով չես կերակրի, և ցավով նշում էր, որ փոքրաթիվ ժողովուրդը չի կարող բռնակալության դեմ պայքարել ու հաղթել: Նա գրում էր, որ առանց դրսի օգնության բոլոր ձեռնարկումները մահվան են դատապարտված, իսկ այդ օգնությունը նա տեսնում էր Ռուսաստանի կողմից. «Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է: Այն գերազանցապես ֆիզիկական գոյության խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կախված է եղել Ռուսաստանի հաջողությունից: Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել Հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանու-

⁵⁶ ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, 1918, գործ 53:

⁵⁷ ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, 1918, գործ 27:

⁵⁸ ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, 1918, գործ 87:

թյուններին ու հայկական սարսափներին: Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ»:⁵⁹

«Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը» հոդվածում մանրամասն նկարագրելով ռուս ժողովրդի և ռուսական զինվորականության վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ եզրակացնում է, որ «մենք հավատում ենք ռուսական պետությանը»: «Ռուսական մեծ պետությունը չի հրաժարվիլ Արևելքի մորթվող ժողովուրդներին պաշտպանելու սրբազան ավանդույթներից և հենվելով միջազգային դաշնագրերով իր ունեցած իրավունքների ու պարտականությունների վրա՝ կարտասանի իր «He боится»-ը. մենք կյանքի փորձով գիտենք ու հավատում ենք էդ մեծ ուժին ու կենդանի զգացմունքներին և հավատում ենք, որ նա վերջ կդնի հայ ժողովրդի էս անվերջ կոտորածներին, վայրենի ժողովուրդների անվերջ բարբարոսությանը, քաղաքակիրթ աշխարհի էս անվերջ խայտառակությանը»:⁶⁰

Ավելին, վերլուծելով իրականությունը՝ Թումանյանը կարծես դաս է տալիս ապագա դիվանագետներին, հուշում և զգուշացնում: Գրողը զարմանալի ճշգրտությամբ կանխատեսում էր Մեծ եղեռնը, իր ժողովրդի դառը ճակատագիրը: Աշխարհի լուռ ու անտարբեր հայացքի ներքո ոչնչացվում էր մի ողջ ժողովուրդ՝ իր իսկ պատմական հայրենիքում:

Հասկանալի է Թումանյանի մտահոգությունը. եթե Առաջին հանրապետության քաղաքական այրերը ճիշտ, շրջահայաց քաղաքականություն վարեին, ապա չէին լինի Ալեքսանդրապոլի և Կարսի պայմանագրերը, բովանդակային այլ հենք կունենար Մոսկվայի պայմանագիրը. «Մենք զարմացանք Բեռլինում կատարված էս ֆարսի վրա, թե ինչպես 16-ը դարձավ 61, ուրախացանք, որ դարձանք 6 մեծ պետության հոգածության առարկա և Բեռլինից գնացինք Լոնդոն, էստեղ էլ տեսանք ինչ գեղեցիկ ճառեր են ասում...»: Բանաստեղծը ցավով է նշում, որ «...տաճկահայ ժողովուրդն իր հարցով նույնպես եղել է եվրոպական պետությունների հակամարտության դժբախտ զոհերից մեկը, և անպայման ամենադժբախտը»:⁶¹

Գերմանացի գիտնական Ալբերտ Էյնշտեյնը ևս ցավով շեշտում է, որ հայ ժողովրդի ոչնչացումը մնում է և կմնա որպես ամենամեծ ողբերգություն, որը համայն մարդկության, այդ թվում եվ Գերմանիայի ամոթն է, քանի որ վերջինս լինելով Օսմանյան Թուրքիայի առանց-նաշնորհյալ դաշնակիցը՝ ոչինչ չի արել մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի կոտորածն արգելելու համար:

Թումանյանը հեզմանքով նշում է. «Ներեցեք մեզ, ո՛վ քրդեր, ո՛վ թուրքեր, որ 1878 թվականին մենք գնացինք Բեռլին ու զանգատվեցինք ձեր կատարած կոդոպուտների, բռնությունների, սպանությունների, հրդեհների ու ավերումների դեմ՝ ձեզ անվանելով բարբարոսներ ու զազաններ, իսկ նրանց՝ մարդասեր դատավորներ»:⁶²

Վերաքննիչ բյուրոն քննում էր Ալեքսանդրապոլի գավառի մի շարք գյուղերի բնակիչների կորուստների մասին ցուցակները, ինչպես նաև Ուլուխանլու կայարանում 1918թ.-ին օգոստոսի 22-ին թուրքերի կողմից գնացքի թալանման ու վայրագությունների մասին գրությունները:⁶³

«Լսենք ու պաշտպանենք» հրապարակախոսական հոդվածում մեծն Թումանյանը տալիս է Հայկական հարցի լուծման էական հարցադրումը. «Արդյո՞ք մի որևէ ձևով վճռվեց Հայկական հարցը: Արդյո՞ք վերացավ տաճկահայ ամբողջ կյանքի ու մեր հոգու վրից էդ կարմիր մղձավանջը, և կարո՞ղ ենք այսուհետև հանգիստ սրտով նվիրվել կուլտուրական աշխատանքի և ավելի լայն խնդիրների»:⁶⁴

Հովհաննես Թումանյանը ուսումնասիրում է Թիֆլիսի նահանգի Ղարաբյաջ գյուղի 8 հայ ընտանիքների խնդրագրերը, որում նշվում է, որ «35-40 տարվա դառը քրտինքով և տանջանքով վաստակը՝ ոսկյա և արծաթյա իրեր, կահ-կարասի, թուրքերը թալանել են, իսկ իրենք մի կերպ փախչել են: Եվ ահա 3 ամիս է ոչ ոք չի հետաքրքրվում նրանց անելանելի ու ծանր վիճակով»:⁶⁵

⁵⁹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 4, էջ 172-173:

⁶⁰ Նույն տեղում, էջ 138:

⁶¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 4, էջ 169-171:

⁶² Նույն տեղում, էջ 218-219:

⁶³ ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, 1918, գործ 89:

⁶⁴ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Ե., 1954, հ. 4, էջ 212:

⁶⁵ ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, 1918, գործ 26:

Համաշխարհային պատերազմի ընթացքում որևէ մեկ այլ վայրում չցուցաբերվեցին հրդեհելու, ավերելու, կողոպտելու այնքան մոլեգին արարքներ, ինչպիսիք տեղի ունեցան Հայաստանում. «Ալեքսանդրապոլի գավառի Ալուխան գյուղի բնակիչների խնդրում էին փրկել իրենց և ներկայացնում էին «գործի ձեռով և խուժանի ձեռով» կատարած ավերածությունների չափերը: Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում կային նաև գերիներ և մարդկային զոհեր: Կային մեծ քանակությամբ բռնաբարված կանայք և երեխաներ:»⁶⁶

Մեծ Լոռեցիին ցավով նշում է Գանձակի, Շուշիի գյուղերի բնակիչների կորուստների մասին և գրում. «Գանձակի նահանգի Շուշու գավառի Շոշ գյուղից հայտարարություն ստացվեց, որ 1918թ.-ի հոկտեմբերի 1-ին Շուշի քաղաքի գրավումից հետո Տաճկական և Ադրբեջանական 1-ին դիվիզիայի հրամանատար Ջեմիլ Ջեհիր բեյը, Հասան Էֆենդի Բասրի բեյը և Խոսրով բեկ Ֆուլատովը պահանջ դրեցին հայերին ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և հանձնել զենքերը»:⁶⁷

Հայ ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն էր մարդկության պատմության մեջ: Ամենայն հայոց բանաստեղծը չէր կարող չանդրադառնալ Ախլալաք քաղաքում մոլեռանդ բարբարոս սպանության պատկերներին, անմարդկային տառապանքների նկարագրությունը. «Ախլալաք քաղաքում պատահմամբ մնացել էին 1000 հոգու չափ ծերեր, կանայք և երեխաներ: Կանանցից և երեխաներից շատերին բռնաբարելուց հետո տաջիկները այդ 1000 հոգուն գավառից վռնդեցին Բաքուրիան, որ նրանցից շատերը, չդիմանալով իրենց կրած տառապանքներին, մահանում են Բաքուրիանի անտառներում, տաճիկները հապշտապ գավառը մաքրում էին հայերից, որ տիրանան նրանց թողած հարստությանը»:⁶⁸

Եղեռնը իրագործվում էր որոշակի դրոշմակերպով. բնակչությունը տարվում էր ամալի վայրեր, խուլ կիրճեր և այնտեղ կոտորվում էին կամ սովամահության մատնվում: Դա սպանող էր, ժողովրդի աննախադեպ ջարդ. «Ծալկայում ու Բաքուրիանում 70.000 փախստականներից 220-250 հոգի մեռնում են, և այդ թիվը օր ավուր աճում է: Կոտորվեցին 3000 անմեղ, անզեն ծերեր, կանայք, երեխաներ և քիչ թվով երիտասարդ տղամարդիկ: Մահն ամենից հեշտությամբ այդ պայմաններում հնձում էր ծերերին, և մանավանդ երեխաներին, որոնք կաթ չէին գտնում իրենց մայրերի չորացած ստինքներում: Ծալկան ու Բաքուրիան դարձան շատ հայերի գերեզմանը»:⁶⁹ Ախլալաքի գավառի հայ բնակչությունը կամենում էր Տաճկաստանից բաժանվել և իր բախտը կապել Հայաստանի Հանրապետության հետ ամենից առաջ այն պատճառով, որ ամեն մի հոգեպես չընկած ազգի համար ազատությունը գերադասելի է ստրկությունից. «Արդուլ Համիդը կոտորեց 200.000 հայ: Երիտասարդ թուրքերի սահմանադրական կառավարությունը այդ թիվը հասցրեց 2.000.000 և ազատեց Տաճկահայաստանը հայերից»:⁷⁰ Տաճիկները որոշել էին Ռուսահայաստանը ևս ազատել հայ ազգից: Հայությունը, տաճկահպատակությունը և օրհաս գաղափարները համագործ է համարում. «Մենք ուզում ենք խուսափել այդ օրհասից»:⁷¹

Կյանքը գունաթափվել ու իմաստազրկվել էր: Անկումների ուղին տեսանելի էր առավել քան երբևէ: Մահվան ճանապարհով գնացող, բայց կյանքի հույսով շնչող հայ փախստականները համոզված են, որ «Եվրոպական ազատ և լուսավոր ազգերի ներկայացուցիչները, ինչպես և ողջ հայությունը, այնպես էլ նրա անբաժան մասնիկը կազմող Ախլալաքից հայի դատին կմոտենան ոտնատակ եղած արդարությունը և ազատությունը վերականգնելու նպատակով»:⁷²

Որտե՞ղ էր ավարտը: Մի՞թե վերջ չէր ունենալու դժբախտությունների այդ շղթան, որ խեղդալար դարձած՝ սեղմում ու սեղմում էր կյանքի պարանոցը՝ ապրելը վերածելով դժոխային տառապանքի:

Զարմանալի լավատեսություն ուներ մեծն բանաստեղծը, նույնիսկ այն ժամանակ, երբ եղեռնը արդեն իրողություն էր, նա գրում էր. «Էս ամենը լավ պետք է իմանա ամեն մի հայ ու միշտ հիշե, ոչ ոք հուսահատի ու վիհատի խոսքեր չպետք է անի, որ հատուկ է ձախորդ

⁶⁶ ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, 1918, գործ 89:

⁶⁷ ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, 1918, գործ 88:

⁶⁸ ՀԱԱ, ֆոնդ 245, ցուցակ 2, 1918, գործ 3:

⁶⁹ ՀԱԱ, ֆոնդ 245, ցուցակ 2, 1918, գործ 3:

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Նույն տեղում:

վայրկյանին, փորձությունը, ինչքան էլ մեծ լինի, պետք է տանենք արիությամբ ու վեր կենանք միասին, միահամուռ ուժերով դիմագրավելու մեր վատթար թշնամիներին և դարման տանենք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիքը՝ մոտիկ լավագույն ապագայի անսասան հավատով»:⁷³

Հովհ. Թումանյանի անսահման հավատը հայ ժողովրդի «լավագույն ապագայի» նկատմամբ արտահայտություն է գտել նաև իր բանաստեղծություններում (Մենք միշտ անսասան առաջ պիտի գնանք, Ինչքան մեր ճամփան լինի ահարկու):

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեծ է Թումանյանի դերը ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած նյութական և մարդկային կորուստները արձանագրելու գործում: Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասները հաշվելու և Փարիզի հաշտության խորհրդաժողովին ներկայացնելու նպատակով ստեղծվում է Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով, որը գլխավորում է Հայ հայրենակցական միությունների նախագահ Հ. Թումանյանը:

Մեծն Լոռեցին հավատում էր հայ ժողովրդի վաղվա օրվան և նշում, որ անհնար է միշտ բարուն, լույսին, սուրբ բարձունքներին ծառայած մի ժողովուրդ վերանա աշխարհի երեսից: Հ. Թումանյանը համոզված էր, որ թեպետ Հայաստանը վերջին շունչն է փչում, բայց նա կվերածնվի, կհառնի որպես փյունիկ և աշխարհին կապացուցի, որ մի ժողովուրդ, որը չի ցանկանում մեռնել, չի մեռնում, նրանից դեռ ծնվելու է մի հերոսական ծնունդ:

Հիմնաբաներ. Վերաքննիչ բյուրո, եղեռն, նահատակվող ժողովուրդ, բեկորների փրկություն, կհառնի որպես փյունիկ:

THE ARMENIAN HOLOCAUST AND THE WORK OF APPELATE BUARAU Nune Mkrtchyan

The role of Tumanyan is too great in human and material losses during the Holocaust. In order to accumulate the great human losses of Armenians during the Holocaust and in order to represent in Paris Solidarity Council is formed "The investigating Council of Armenian Human losses during the World War".

The great Lorets believed in the coming day of armenian nation and mentioned, which is impossible for the light and kindness to the nation which served to the wholly heights. H. Tumanyan was sure that in spite of the fact that Armenia gives its last breath, but it will survive and will prove the hole world, that a nation which doesn't like to die, doesn't die, from which a new heroic nation is going to be born.

Key words – Appeleate Bureau, Genocide, extincting nation, the save of remnants, it will glisten as a lantern.

АРМЯНСКИЙ ГЕНОЦИД И РАБОТА АПЕЛЛЯЦИОННОГО БЮРО Нуне Мкртчян

Огромную роль сыграл Ованнес Туманян для армянского народа, записав материальные и человеческие потери вследствие геноцида. В это время была создана следственная комиссия по подсчету потерь армянского народа во время первой мировой войны, которой руководил президент армянского отечественного союза Туманян, с целью предъявления их на Парижском

⁷³ Հախվերդյան Լ., Թումանյանը և իր ժամանակը, Ե., 1995, էջ 50:

госсовете. Он был уверен, что несмотря на то, что Армения испускала последний вдох, она возродится как феникс и миру докажет, что та нация, которая не хочет умирать, не умрет. От них еще родится целое героическое поколение.

Великий лориец верил в завтрашний день армянского народа и отмечал, что невозможно, чтобы исчез с лица земли тот народ, который всегда служил добру, свету и святым вершинам.

Ключевые слова: Апелляционное Бюро, геноцид, мученический народ, спасение обломков, возродится как феникс.

ՄԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Անի Խեչոյան

Միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի պատմական զարգացումը միջազգային իրավունքի գիտության մեջ սովորաբար կապվում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հիմնված՝ Նյուրնբերգի և Տոկիոյի ռազմական դատարանների գործունեության հետ: Այդուհանդերձ, Առաջին աշխարհամարտից հետո Դաշնակից պետությունների կողմից ընդունված մի շարք կարևոր փաստաթղթերի, մասնավորապես 1920թ.-ի օգոստոսի 10-ին Թուրքիայի հետ կնքված Սևրի պայմանագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում ամրագրված միջազգային քրեական արդարադատությանը վերաբերող սկզբունքները ընկած են ներկայումս գործող Միջազգային քրեական դատարանի 1998թ.-ի Հռոմի կանոնադրության և ընդհանրապես միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի պատմական զարգացման հիմքում:

Դեռևս մինչև Առաջին աշխարհամարտը միջազգային հարաբերություններում ընդունված էր միջազգային տարբեր իրավախախտումների գործերով միջպետական մարմինների կողմից դատաքննության անցկացումը, սակայն դրանք քրեական արդարադատություն իրականացնող մարմիններ չէին և իրավասու էին միայն հաստատել կամ ժխտել անհատների կողմից միջազգային իրավախախտում կատարելու փաստը, որի համար պատիժը այդուհանդերձ պետք է սահմանվեր ազգային դատարանների կողմից:

Օրինակ, 19-րդ դարի առաջին կեսին Մեծ Բրիտանիայի և այլ պետությունների միջև կնքված երկկողմ պայմանագրերի հիման վրա ստեղծված դատարանները իրավասու էին բռնագրավել ստրկավաճառության նպատակով օգտագործվող նավերը, սակայն դրանց անձնակազմի անդամները պետք է հանձնվեին որոշակի պետությունների՝ վերջիններիս օրենքներին համապատասխան պատիժներ կիրառելու համար:

Այդ դատարանների կողմից արդարադատության իրականացմանը խոչընդոտում էր քրեական արդարադատությանը վերաբերող համընդհանուր միջազգային քրեաիրավական նորմերի բացակայության հարցը, իսկ ոլորտում պետությունների նորմաստեղծ գործունեությունը սահմանափակվում էր միայն հանցագործների հանձնմանը վերաբերող նորմերի ստեղծմամբ:

Ընդհանրապես, մինչև Առաջին աշխարհամարտը միջազգային համընդհանուր քրեաիրավական նորմերի ստեղծման գաղափարը միջպետական հարաբերություններում քննադատվում էր՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միջազգային իրավունքի համակարգում գոյություն չունեին դրա իմպլեմենտացիայի մշտական մեխանիզմ, մասնավորապես՝ չկար համընդհանուր և համապարտադիր իրավասությամբ օժտված որևէ միջազգային դատական մարմին:

Մինչև Առաջին աշխարհամարտը պատերազմի կանոնների խախտման վերաբերյալ բոլոր դատավարությունները իրականացվում էին պատերազմող կողմերից մեկի (որպես կանոն՝ հաղթող պետության) կողմից հատուկ այդ դեպքերի համար ստեղծված ad hoc դատարանների կողմից:

Պետությունները մշտապես վերապահումով էին մոտենում միջազգային հանցագործություններ կատարած սեփական քաղաքացիներին պատասխանատվության ենթարկելու խնդրին, իսկ պետությունների իրավական համակարգերի միջև գոյություն ունեցող տարբերությունները խոչընդոտում էին քրեական արդարադատություն իրականացնող միասնական մարմնի ստեղծմանը:

Կարծում ենք, Սևրի պայմանագրի պատմաքաղաքական նախադրյալների ձևավորմանը զուգահեռ, միջազգային իրավունքում ձևավորվել էին նաև միջազգային հանցագործությունների կատարման համար ֆիզիկական անձանց միջազգային իրավական պատասխանատվության սկզբունքի՝ միջազգային պայմանագրային ձևակերպման նախադրյալները, ինչը և իրականացվեց Սևրի պայմանագրով: Որպես այդպիսին՝ առաջին հերթին պետք է նշել միջազգային հարաբերություններում պետությունների, այսպես կոչված, միջազգային իրավագիտակցության ձևավորումը: Սևրի պայմանագրի կնքման պահին գործող միջազգային իրավունքում պետությունների կողմից առանձնացվել էին միջազգային հանցագործությունների առանձին տեսակներ, որոնց համար պատասխանատվության հարցը դարձել էր ողջ միջազգային հանրության մտահոգության առարկա (օրինակ, ստրկավաճառությունը, պատերազմական հանցագործությունները և այլն):

Այդուհանդերձ, միջազգային քրեական դատարանի միջոցով միջազգային հանցագործություններ կատարած անհատներին պատասխանատվության ենթարկելու սկզբունքի միջազգային իրավական համընդհանուր ճանաչմանը խոչընդոտում էր նաև այն հանգամանքը, որ միջազգային հանցագործությունների կատարման համար պատժի կիրառման հարցերը միջազգային իրավունքը թողնում էր պետությունների հայեցողությանը, որոնք նման դեպքերում ղեկավարվում էին սեփական օրենքներով:

Հաագայի 1899 և 1907 թթ.-ի խաղաղության կոնֆերանսներում ընդունված որոշ կոնվենցիոն դրույթներ նպաստեցին քրեական արդարադատության ոլորտում միջազգային նորմաստեղծ գործընթացի զարգացմանը:

Պատերազմի օրենքների և սովորույթների խախտման համար պետության պատասխանատվության խնդիրը առաջին անգամ դրվեց 20-րդ դարասկզբին Հաագայի 1907 թ.-ի՝ «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» IV կոնվենցիայում, որտեղ ամրագրված էր, որ «պատերազմող կողմը պատասխանատու կլինի իր ռազմական ուժերի կազմում գտնվող անձանց կատարած բոլոր գործողությունների համար»: Թեև Կոնվենցիայում նշվում էր պետությունների պատասխանատվության մասին, այն անուղղակիորեն լուծում էր նաև պատերազմական հանցագործություններ կատարած անհատների պատասխանատվության հարցը: Այդուհանդերձ, Հաագայի կոնվենցիան չէր նախատեսում այդ պատասխանատվության իրագործման նպատակով միջազգային դատարանի ստեղծում:

Առաջին աշխարհամարտում Գերմանիայի և նրա դաշնակիցների կատարած հանցագործությունները աննախադեպ էին իրենց ծավալներով և դաժանությամբ: Դրանք միջազգայնորեն դատապարտելու և հետազայում նման հանցագործությունների կատարումը կանխելու անհրաժեշտությունը հրատապ դարձրին միջազգային քրեական արդարադատություն իրականացնող մարմնի ստեղծման խնդիրը:

1918թ. նոյեմբերի 11-ին պատերազմական հանցագործների պատասխանատվության հարցը քննարկելու նպատակով Գերմանիայի դեմ պատերազմած պետությունները ձևավորեցին Դաշնային հանձնաժողով, որն իրավասու էր քննել հետևյալ հարցերը՝

1. պատերազմի սանձազերծման համար մեղավոր անհատների միջազգային պատասխանատվության հարցը,
2. պատերազմի այն օրենքների և սովորույթների խախտման վերաբերյալ փաստերի քննությունը, որոնք տեղի էին ունեցել Գերմանիայի և նրա Դաշնակիցների կողմից,
3. միջազգային հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անհատների պատասխանատվության հարցը:

Այլ հարցերի թվում Հանձնաժողովի քննությանը դրված հարցերից էր հանցագործներին պատասխանատվության ենթարկելու նպատակով համապատասխան միջազգային դատական ատյանի ստեղծման և դրա կողմից իրականացվելիք դատավարության կարգի հաստատման հարցը:

Հանձնաժողովի նախապատրաստական զեկույցում առաջարկվում էին միջազգային հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ քրեական արդարադատության իրականացման մի քանի ձևերի ստեղծում՝ հաղթող տերությունների ներկայացուցիչներից կազմված միջազգային դատարանի, միջպետական խառը (հիբրիդային) դատարանների և այլն: Ընդ որում, միջազգային քրեական դատարանի ստեղծման գաղափարը միանշանակ չէր ընդունվում Դաշնակից պետությունների ներկայացուցիչների կողմից, այն նկատառումով, որ պետությունների համար պարտադիր իրավագործությամբ օժտված միջազգային քրեական դատարանի ստեղծումը հակասում էր պետությունների ինքնիշխանության սկզբունքին: Պատերազմական հանցագործություններ կատարած անձինք բարոյական պատասխանատվություն էին կրում մարդկության առաջ, սակայն իրավական տեսակետից ենթակա էին պատասխանատվության ազգային դատարանների կողմից:

Միջազգային քրեական դատարանի ստեղծմանը խոչընդոտող մյուս հիմնախնդիրը վերաբերում էր միջազգային հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության համապատասխան միջազգային իրավական հիմքերի բացակայությանը: Հանձնաժողովի կողմից նկատի էր առնվում այն հանգամանքը, որ Հաագայի 1907թ.-ի կոնվենցիան, որը սահմանում էր միջազգային հանցագործությունների համար անհատների պատասխանատվության սկզբունքը, չունեւ համապարտադիր բնույթ բոլոր պետությունների համար:

Այդուհանդերձ, Հանձնաժողովի վերջնական զեկույցի եզրափակիչ դրույթներում նշվում էր միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կոպիտ ոտնահարումների գործերով քրեական արդարադատություն իրականացնող և մշտապես գործող միջազգային դատական մարմնի ստեղծման անհրաժեշտության մասին:

Հանձնաժողովի զեկույցում ամրագրված դրույթները հիմք հանդիսացան 1919թ.-ի Վերսալի և 1920թ.-ի Սերի հաշտության պայմանագրերում քրեական դատարանի մասին համապատասխան դրույթների ընդունման համար:

Սերի պայմանագրի առաջադիմական նշանակությունը միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի զարգացման տեսակետից ընդգծելու նպատակով հարկ ենք համարում նշել այն, որ Առաջին աշխարհամարտից հետո կնքված հաշտության մյուս պայմանագրերը, մասնավորապես Ավստրիայի հետ կնքված Սեն-ժերմենի, Բուլղարիայի հետ կնքված Նեյի պայմանագրի համապատասխան հոդվածները ընդամենը վերաբարտադրում էին Վերսալի պայմանագրի՝ միջազգային հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ արդարադատության իրականացմանը վերաբերող հոդվածների դրույթները:

Կարծում ենք՝ Սերի պայմանագիրը առաջադիմական նշանակությունը Վերսալյան համակարգի մյուս պայմանագրերի՝ քրեական դատարանի ստեղծմանը վերաբերող դրույթների համեմատությամբ կայանում էր հատկապես միջազգային քրեական դատարանի ստեղծման նպատակի և անհրաժեշտության պայմանագրային իրավական ձևակերպման առումով:

Վերսալի պայմանագրում միջազգային դատարանի ստեղծման նպատակը բացառապես միջազգային բարոյականությանը և պայմանագրերի սրբազան ուժին բարձրագույն անարգանք հասցնելու համար մեղավոր Գերմանիայի քաղաքացիներին պատասխանատվության ենթարկելն էր: Վերսալի պայմանագրի 227-րդ հոդվածում նշվում էր. «Դաշնակից և միավորված պետությունները նախկին գերմանական կայսր Վիլհելմ II Հոհենցոլերին ներկայացնում են միջազգային բարոյականությանը և պայմանագրերի սրբազան ուժին բարձրագույն անարգանք հասցնելու հրապարակային մեղադրանք:

Պետք է ստեղծվի հատուկ դատարան, որպեսզի դատի մեղադրյալին...»:

Ընդ որում, Պատասխանատվության և Պատժի հանձնաժողովը նկատի ուներ ոչ թե Վերսալի պայմանագրի կնքման պահին գործող համընդհանուր միջազգային պայմանագրերը, այլ Բելգիայի և Գերմանիայի միջև կնքած՝ 1839 թ.-ի ապրիլի 19-ի Լոնդոնի պայմանագիրը չեզոքության մասին, ըստ որի՝ Գերմանիան պարտավորվել էր չխախտել Բելգիայի չեզոքությունը, և 1867 թ.-ի մայիսի 11-ի Լոնդոնի պայմանագիրը Գերմանիայի և Լյուքսեմբուրգի միջև չեզոքության պահպանման մասին:

Պատերազմական հանցագործությունների և իր քաղաքացիների դեմ գործած միջազգային հանցագործությունների համար Թուրքիային ներկայացվող մեղադրանքը միջազգային

իրավական ձևակերպում ստացավ 1920 թ.-ի օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրում:

Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածում տրված է թուրքական հանցագործների այն արարքների իրավական որակումը, որոնց պատասխանատվության ենթարկելու համար սահմանվում էր միջազգային քրեական դատարանի ստեղծման նպատակը: Հոդվածում նշվում է. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է Դաշնակից տերություններին հանձնել այն անձանց, ովքեր պահանջվում են, որպես այն կոտորածների համար պատասխանատվություն կրողներ, որոնք պատերազմական դրության ընթացքում կատարվել են Օսմանյան կայսրության մաս կազմող ցանկացած տարածքի վրա» (այս հանցագործությունները Պատասխանատվության և Պատժի հանձնաժողովի՝ Փարիզի կոնֆերանսին ներկայացված զեկույցում որակվում էին որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություններ):

Թուրքիայի քաղաքացիների կողմից իրականացված հանցագործությունների իրավական այս որակումը Սևրի պայմանագրում, կարծում ենք, ունի կարևոր նշանակություն՝ նախ քրեական իրավունքի տեսակետից հստակ ձևակերպված են այն իրավախախտումները, որոնք որակվում են որպես միջազգային հանցագործություններ, մյուս կողմից՝ պայմանագրում տրվում է Առաջին աշխարհամարտի ընթացքում թուրքական իշխանության և դրա ներկայացուցիչների կատարած հանցագործությունների համարժեք իրավական գնահատականը, և առավել որոշակի է պետության պարտավորությունը մեղավոր անձանց միջազգային դատարանին հանձնելու հարցում:

Սևրի պայմանագրով նախատեսվում էր միջազգային քրեական արդարադատություն իրականացնող ինչպես ժամանակավոր, այնպես էլ մշտական մարմնի ստեղծման հնարավորությունը: Այսպես, Սևրի պայմանագրում նշվում էր 1914 թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ թուրքական կայսրության մաս հանդիսացող տարածքում իրականացված կոտորածների համար մեղադրվող անհատների դատական հետապնդման համար Դաշնակից տերությունների և Ազգերի լիգայի կողմից միջազգային դատարանների ստեղծման և պետությունների համար դրա պարտադիր իրավագործության ընդունման մասին: Պայմանագրի 230-րդ հոդվածում մասնավորապես նշվում էր. «Դաշնակից տերությունները իրենց իրավունք են վերապահում ստեղծել դատարան վերը նշված մեղավոր անձանց դատելու համար, և թուրքական կառավարությունը պարտավորվում է ընդունել այդ դատարանի իրավագործությունը»:

Պայմանագրի 230-րդ հոդվածը նախատեսում էր նաև միջազգային քրեական արդարադատություն իրականացնող մշտական մարմնի ստեղծման հնարավորությունը. հոդվածում մասնավորապես նշվում էր. «Եթե Ազգերի լիգան բավարար ժամանակում ստեղծի դատարան, որն իրավասու կլինի քննել կոտորածներին վերաբերող գործերը, Դաշնակից պետությունները իրավունք կունենան մեղավոր անձանց պատժի ենթարկել այդ դատարանի միջոցով, և թուրքական կառավարությունը պարտավորվում էր ընդունել այդ դատարանի իրավագործությունը ևս»:

Համեմատության համար պետք է նշել, որ Վերսալի պայմանագրով նախատեսված միջազգային դատարանի ստեղծումը պատերազմում հաղթող պետությունների կողմից միջազգային քրեական իրավունքի գիտության մեջ ներկայումս էլ ընկալվում է որպես հաղթողների արդարադատություն: Նույնիսկ Երկրորդ աշխարհամարտում հաղթող պետությունների կողմից ստեղծված Նյուրնբերգի և Տոկիոյի զինվորական դատարանները ևս, որոնք կազմված էին Երկրորդ աշխարհամարտում հաղթող պետությունների ներկայացուցիչներից, միջազգային իրավունքի գիտության մեջ հաճախ որակվում են որպես հաղթողների արդարադատություն: Դրանք մեղադրվում էին օբյեկտիվության բացակայության մեջ՝ որպես *post factum* դատարաններ⁷⁴:

Փաստորեն, Սևրի պայմանագրով Թուրքիան ստանձնում էր միջազգային դատարանի պարտադիր իրավագործությունը ճանաչելու պարտավորություն, ինչը նոր երևույթ էր միջազգային իրավունքի կիրառման պրակտիկայում:

⁷⁴ E. Greppi, The evolution of individual responsibility under international law, International Review of the Red Cross, 1999, p. 53; L. Synanyan, The International Criminal Court, University of South California, 1997, p. 1083.

Կարծում ենք՝ միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի զարգացման տեսակետից առաջադիմական նշանակություն ունեցան նաև Սևրի պայմանագրի այն հոդվածները, որոնք միջազգային հանցագործություններ կատարած անձանց դատական հետապնդման հնարավորություն էին նախատեսում ոչ միայն Դաշնակից, այլև երրորդ պետությունների համար, որոնց տարածք էր անցել կամ պետք է անցներ նախկին Օսմանյան կայսրության տարածքից:

Սևրի պայմանագրի 229-րդ հոդվածում մասնավորապես նշվում էր. «226-228 հոդվածների դրույթները հավասարապես պետք է կիրառվեն այն պետությունների նկատմամբ, որոնց տարածք է անցել կամ պետք է անցնի նախկին թուրքական կայսրության տարածքից, այն անձանց նկատմամբ, ովքեր մեղավոր կճանաչվեն պատերազմի օրենքներին և սովորույթներին հակասող գործողությունների կատարման մեջ, եթե այդ անձինք հայտնվել են այդ պետությունների տարածքում կամ դրանց իրավագործության ներքո»:

Եթե պահանջվող անձինք ստացել են նշված պետություններից որևէ մեկի քաղաքացիություն, այդ պետության կառավարությունը պարտավորվում է շահագրգիռ պետության կամ պետությունների պահանջով ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները այդ անձանց հետապնդումը կամ պատիժը իրականացնելու համար:

Սևրի պայմանագրի վերը նշված հոդվածը զարգացնում էր նաև միջազգային հանցագործների հանձնման վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային իրավական պրակտիկան, քանի որ մինչև Սևրի պայմանագրի կնքումը միջազգային հարաբերություններում տարածված չէր հանցագործների հանձնման մասին հատուկ պայմանագրերի կնքումը միջազգային հարաբերությունների մասնակիցների՝ պետությունների միջև:

Այսօր միջազգային իրավունքը պարտավորեցնում է յուրաքանչյուր պետության դատական հետապնդում սկսել կամ հանձնել իր տարածքում կամ իր իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց, ովքեր մեղադրվում են ցեղասպանության, պատերազմական, խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ իրականացնելու մեջ: Ունիվերսալ իրավագործության սկզբունքը թույլատրում է յուրաքանչյուր պետության կիրառել քրեական պատասխանատվության միջոցներ միջազգային իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարումների դեպքում, եթե մեղադրյալը գտնվում է այդ պետության տարածքում: Այդ սկզբունքի իմաստով՝ միջազգային որոշ հանցագործություններ այնպիսի վտանգավորություն են ներկայացնում միջազգային հանրության համար, որ յուրաքանչյուր պետություն, որի տարածքում գտնվում է մեղադրյալը, կարող է դատական հետապնդում սկսել և պատասխանատվության ենթարկել դրանց կատարման համար մեղադրվող անձանց միջազգային հանրության անունից՝ անկախ մեղադրյալի կամ տուժողի ազգությունից կամ հանցագործության վայրից: Կարծում ենք, Սևրի պայմանագիրը կարևոր նշանակություն ունեցավ նաև այս սկզբունքի ունիվերսալիզացիայի տեսակետից:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Սևրի պայմանագրում միջազգային քրեական դատարանի ստեղծումը և դրա գործունեության օբյեկտիվ և արդյունավետ հիմքերի սահմանումը ոչ միայն օբյեկտիվ անհրաժեշտություն էին միջազգային քրեական իրավունքում, այլև առաջադիմական նշանակություն ունեին Վերսալի պայմանագրի համեմատությամբ, որի հետ միջազգային իրավունքի գիտությունը կապում է միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի պատմական զարգացումը: Սևրի պայմանագրում միջազգային քրեական արդարադատության օբյեկտիվ իրականացման տեսակետից կարևոր էր միջազգային արդարադատություն իրականացնող մարմնի ստեղծումը ոչ միայն պատերազմում հաղթող, այլև պետությունների համընդհանուր կազմակերպության՝ Ազգերի լիգայի կողմից:

Սևրի պայմանագրում արտահայտված պետությունների վճռականությունը միջազգային կայուն իրավական հիմքերի վրա դնել միջազգային հանցագործությունների համար անհատների պատասխանատվության հարցը, էապես ազդեց հետագայում՝ 1998 թ.-ին մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարանի ստեղծման համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է Սևրի պայմանագիրը, որպես միջազգային իրավունքի պրակտիկայում առաջին անգամ միջազգային հանցագործություններ կատարած անձանց

պատասխանատվության ենթարկելու նպատակով մշտական հիմունքներով գործող միջազգային քրեական դատարանի ստեղծում նախատեսող իրավական փաստաթուղթ:

Հոդվածում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Սևրի պայմանագրով նախատեսված միջազգային քրեական դատարանի գործունեության առանձնահատկություններին, մասնավորապես դատարանի ստեղծման նպատակին, գործունեության իրավական հիմքերին, բացահայտվում է Սևրի պայմանագրի դերը ընդհանրապես միջազգային քրեական իրավունքի և դատավարության զարգացման տեսակետից:

Հիմնաբառեր. միջազգային հանցագործություններ, միջազգային քրեական իրավունք, պետությունների և ֆիզիկական անձանց միջազգային իրավական պատասխանատվություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, միջազգային քրեական դատարան:

SEVRS CONTRACT AND DEVELOPMENT OF INSTITUTE OF INTERNATIONAL CRIMINAL JUSTICE

Ani Khechoyan

The article is devoted to the Sevr treaty, the first document in the history of international law which defined the creation of international permanent criminal court for the responsibility of persons who have committed international crimes.

The article also concerns to the specifics of the aim, legal basis of the jurisdiction of the court and other important issues that contributed to the development of international criminal law and procedure in general.

Keywords: international crimes, international criminal law, international legal responsibility of states and individuals, crime against humanity, international criminal court.

СЕВРСКИЙ ДОГОВОР И РАЗВИТИЕ ИНСТИТУТА МЕЖДУНАРОДНОГО УГОЛОВНОГО ПРАВОСУДИЯ

Ани Хечоян

Статья посвящена Севрскому мирному договору как международно-правовому документу, впервые в истории международного права предусмотревшего создание международного уголовного суда, действующего на постоянной основе.

В статье особо подчеркиваются особенности деятельности международного уголовного суда, предусмотренного Севрским договором: в частности договорное закрепление цели создания суда, правовые основы деятельности и т.д.

Ключевые слова: международные преступления, международное уголовное право, международная правовая ответственность государств и физических лиц, преступление против человечества, международный уголовный суд.

ՀԱՅ ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՀԵԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Աելիտա Դոլուխանյան

Ոսկեդարյան հայ գրականությունը Մաշտոցյան գրերի ստեղծումից հետո երևան հանեց ազգային հարուստ գրականություն՝ փայլելով քրիստոնեական մատենագրության ամենատարբեր ժանրերով: Դրանք են՝ պատմագրություն, ներբողյաններ, թղթեր, շարականներ,

ճառեր, վարքագրություններ ու վկայաբանություններ, դավանաբանական և աստվածաբանական երկեր, փիլիսոփայական քերթվածներ: Ազգայինը սերտորեն կապվեց միջազգային քրիստոնեական, նաև հունահռոմեական և այլ ազգերի անտիկ մատենագրության հետ՝ ցուցաբերելով մեծ հետաքրքրություն թարգմանության ասպարեզում:

Այս երևույթը XIX դարի սկզբին շատ բարձր գնահատեց ֆրանսիական հայագիտության հիմնադիրը՝ Ժ.Ա.Սեն-Մարտենը, որի 1818 թվականին Փարիզում լույս տեսած «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» գրքի նախաբանում կարդում ենք. «Առաջին հերթին դժվար էր մտածել, թե ժողովուրդ, որի ամենաստվար մասը գտնվում է մահմեդական լծի տակ, մյուս մասն աստանդական ցրված է հին աշխարհի տարբեր երկրներում, զբաղվում է մատենագրությամբ, որ շատ վաղուց ունի գիտական լեզու և տարբեր ժանրերով ստեղծված բազում գործերով կիրթ գրականություն:»⁷⁵

V դարի և հետագայի հայ պատմագրությունը արդեն XIX դարում և XX դարասկզբին ամբողջովին թարգմանվեց ֆրանսերենով, այն դեպքում, երբ դրանց գրաբարյան բնագրերի մի մասը արդի հայերենի վերածվեց ընդամենը XX դարի 40-ական թվականներից սկսած: Ֆրանսիացի մեկ այլ հայագետ՝ Ֆրեդերիկ Ֆեյդին, խիստ արժևորելով հայ միջնադարի մատենագրության նվաճումները, եզրահանգում է. «V դարի կեսերին հայ գրականությունը հասնում է իր Ոսկեդարին: Աստվածաբանություն, հոգևոր քնարերգություն, վկայաբանություն, պատմագրություն, միջնադարի գրականության բոլոր այն տեսակները, որոնք ծանոթ էին Միջերկրականի ավազանի քրիստոնեական գրականությանը, մեծարժեք գործերով երևան եկան հայ գրականության մեջ: Հայերը կանգնեցին հույների, լատինացիների և ասորիների կողքին:»⁷⁶

Ֆրանսիական, նաև եվրոպական հայագետները ուշադրության կենտրոնում են պահել հայ հին թարգմանական գրականությունը՝ հատկապես փաստելով այդ մատենագրության միջազգային արժեքը: Մեր նախնիների հարուստ թարգմանական գրականությունը պահպանել է հունարեն, ասորերեն, ֆրանսերեն, եբրայերեն, վրացերեն մատենագրության այնպիսի գանձեր, որոնց բնագրերը այժմ կորած են, և հայերեն թարգմանությունները ստացել են բնագրի արժեք: Մխիթարյան հայրերից Գարեգին Զարբհանալյանը, որը կազմել է Պլատոնի, Փիլոն Եբրայեցու հայ հին թարգմանությունների բնագրերը, միաժամանակ իրականացրել է շնորհակալ մի հետազոտություն. համառոտ ձևով ներկայացրել է V-XIII դարերում հայերեն թարգմանված այլ ազգերի երկերի մատենագիտությունը: Նրա աշխատության մեջ համառոտ բնութագրվում են բազմաթիվ թարգմանական գրչագիր մատյաններ, որոնք գիտական շրջանառության մեջ են գտնվել ողջ միջնադարում, արտագրվել, բազմացվել տարբեր վայրերում, վանական տարբեր միջավայրերում: Դրանց կարելի է հանդիպել աշխարհի տարբեր գրապահոցներում, որոնցում կան հայկական ձեռագրեր: Թվարկենք այդ թարգմանությունների մի չնչին մասը. Անտիոքի օրենսգիրք, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Դիոնիսիոս Արեոպագոսի, Դիոնիսիոս Թրակացի, Եվսեբիոս Կեսարացի, Լաբուրնա, «Կայսերաց պատմություն», Կյուրեղ Ալեքսանդրացի, «Հարանց վարք», Միխայիլ Ասորի, Հովհան Ոսկեբերան, «Շարադրությունք ինքնակալացն Հռովմա», Ողոմապիանոսի առակներ, Պլատոն, Պորփյուրի ներածությունը, Ջուանշիրի «Վրաց պատմություն», «Վարք Ալեքսանդրի», Փիլոն Եբրայեցի:

Գարեգին Զարբհանալյանը նշում է, թե որոշ թարգմանությունների բնագրեր անհետ կորել են, ուստի եվրոպացիները երախտագիտությամբ են լցված մեր նախնիների կատարածի հանդեպ: Եվսեբիոս Կեսարացու պատմական ժամանակագրության բնագիրը կորած է: Գիտությանը հայտնի է միայն այդ երկի հայերեն թարգմանությունը: Զարբհանալյանը վկայում է, թե իմաստուն Եվրոպան որքան երախտապարտ շնորհակալությամբ ընդունեց Եվսեբիոսի պատմական երկի հայերեն թարգմանությունը, և գրվեցին մեծարանքի բազմաթիվ խոսքեր: Ահա դրանցից մեկը. «Մատենագրական աշխարհի մեջ երկար դարեր ի վեր այդպիսի բազմահոշակ և նշանավոր գյուտ չէր եղել, որ հանդիպեց Պոլսում՝ հին գրչագրերի մեջ, որ ամփոփում է այս

⁷⁵ Saint-Martin J-A, Mémoires historique et géographique sur l'Arménie, t. I, Paris, 1818, p.19

⁷⁶ David de Sassoun, Épopée en vers, Traduit de l'Arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit, Paris, 1964, p. 37

գրվածքի հայկական թարգմանությունը, որ անդառնալի ձևով կորած էր համարվում, որից որոշ հատվածներ պահպանվել էին, և գիտական աշխարհը դրանցից օգտվում էր զգուշությամբ և վերապահությամբ»:

Եվսեֆիոս Կեսարացու ժամանակագրության մեջ կան բազմաթիվ հատվածներ Բերոսոսի, Կեփաղիոսի, Բազմավեպ Ալեքսանդրի, Մանեթոսի, Կաստորի, Գրիգոր Միկիլացու, Պորփյուրի և ուրիշ այլևայլ պատմագիրներից, որոնց երկասիրությունները հիմա կորած են»:⁷⁷

Մեկ ուրիշ օտար աղբյուր ենթադրում է, թե Եվսեֆիոսի պատմությունը հայերեն թարգմանողը եղել է V դարի անվանի պատմագիր Մովսես Խորենացին:⁷⁷

Գարեգին Զարբհանալյանը բերում է փաստեր, որոնք ներկայացնում են նույնություն Եվսեֆիոս Կեսարացու պատմական երկի որոշ հատվածների և Մ.Խորենացու «Հայոց պատմության» առանձին մասերի միջև: Նա նշում է նաև, թե Եվսեֆիոսի գիրքը ծանոթ է եղել Ղազար Փարպեցուն և Թովմա Արծրունուն:⁷⁸

Զարբհանալյանը նշում է, թե Փիլոն Եփրայեցու որոշ աշխատություններ էլ պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Փիլոն Եփրայեցին հսկայական ազդեցություն է թողել հայ միջնադարի աստվածաբանության, փիլիսոփայության և ընդհանրապես մատենագրության վրա: Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են նրա աշխատությունները պարունակող բազմաթիվ գրչագիր մատյաններ:

Հայ թարգմանական գրականության վերաբերյալ հիացական խոսքեր ու բնութագրումներ կան մեր օրերի նշանավորագույն ֆրանսիացի հայագետ, արևելագետ, վրացագետ Ժան-Պիեռ Մահեի մեծարժեք հետազոտություններում:

Ժան-Պիեռ Մահեն Ֆրեդերիկ Ֆեյդիի արժանավոր աշակերտն է, և նրա անունը իրավամբ կանգնած է ֆրանսիական հայագիտության մեծերի՝ Սեն-Մարտենի, Վիկտոր Լանգլուայի, Մարի Բրոսսեի, Էդուարդ Դյուլոբեի, Անտուան Մեյեի, Ֆրեդերիկ Մակլերի, Ֆրեդերիկ Ֆեյդիի կողքին: Լեզուների քաջիմացությունը, բազմազիտակությունը և եռանդուն հետազոտական մղումները տարիների ընթացքում ստեղծել են Ժան-Պիեռ Մահեի հսկայածավալ գիտական ժառանգությունը: Նա ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է, միաժամանակ ընտրվել է Եվրոպայի շատ ակադեմիաների կազմում: Ժան-Պիեռ Մահեն հայ դատի ու Արցախյան ազատագրական շարժման ջերմ պաշտպաններից է:

Հայ թարգմանական գրականության նկատմամբ իր հիացմունքը նա արտահայտել է բազմաթիվ հայագիտական աշխատություններում: Հայագիտության մեջ նրա գլուխգործոցը կարելի է համարել «Գրիգոր Նարեկացին և իր «Մատենան ողբերգութեան» երկը, որը հեղինակել է կնոջ՝ Աննի Մահեի հետ»:⁷⁹

Ժան-Պիեռ Մահեն հայ թարգմանական գրականության մասին գնահատանքի եզակի խոսք է հնչեցրել 2002 թվականին Սորբոնի համալսարանում կազմակերպված հանդիսությանը, երբ նրան շնորհվել է Ֆրանսիայի Արձանագրության և գրականության ակադեմիայի ակադեմիկոսի սուրբ: Գիտնականը հանդիսության ժամանակ խոստովանում է, թե ինչն է իրեն հասցրել գիտական այդ բարձունքին: Նա խոսում է այն թարգմանությունների մասին, որոնք հունարենից, ասորերենից կամ արաբերենից թարգմանվել են հայերեն, և ունեն բնագրի արժեք՝ միայն գրաբարով պահպանված լինելու պատճառով:

Գիտնականը երկար տարիներ զբաղվել է Հերմես Եռամեծի երկերի հետազոտմամբ: Հերմես Եռամեծի «Առ Ասկղեպիոս Մահմանք» երկը ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի բնագրով գրաբար ու ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսել 1956-ին «Բանբեր Մատենադարանի» պարբերականում: Մանանդյանը շեշտում է գրվածքի եզակի արժեքը. Բոլորովին նոր մի գրվածք է ներկա հրատարակչությամբ լույս տեսնող «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանք»-ը: Այս հետաքրքիր հատվածը, որի հունարեն սկզբնագիրը, ըստ երևույթին, մեզ չի հասել՝ խմբակից է, ինչպես երևում է նրա բովանդակությունից, վերոհիշյալ

⁷⁷ Զարբհանալյան Գար., Հայկական թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 441

⁷⁸ Նույն տեղը:

⁷⁹ Մահե Աննի և Ժան-Պիեռ, Գրիգոր Նարեկացին և իր <<Մատենան ողբերգութեան>> երկը>>, Երևան, 2004

հունարեն գրված երկերի շարքին: Հայերեն թարգմանության կարևորությունը, անշուշտ, խիստ մեծ է, որովհետև սրա հունարեն սկզբնագիրը հավանորեն կորած է:⁸⁰

Ժ.Պ.Մահեն Եվսեփոս Կեսարացու ժամանակագրությունը համարում է հին Արևելքի հելլենիզմի դրսևորում: Նրանում առկա են կարևորագույն մտքեր Բերեսուսից, Մանեթոնից: Գիտնականը թվարկում է Փիլոն Ալեքսանդրացու կամ Երրայեցու միայն հայերենով պահպանված գործերը: Պահպանվել են նաև քրիստոնեության երկրորդ դարի քրիստոնյա հեղինակ, սուրբ նահատակ Իրենուսի գործերը: Դրանք հոգատար ձևով պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում:⁸¹

Նա խանդավառանքով է խոսում Մեսրոպ Մաշտոցի աշակերտների՝ սուրբ թարգմանիչների մասին, որոնք խնամքով հայերենի թարգմանեցին այլ ազգերի հեղինակներին և չի մոռանում այն գրիչներին, որոնք խնամքով արտագրեցին այդ հին թարգմանությունները ու հասցրեցին մինչև մեր օրերը: Ժան-Պիեռ Մահեն շեշտում է հին հայ թարգմանիչների կատարածի գիտական ճշգրտությունը:

2005-ին է լույս տեսել Աննի և Ժան-Պիեռ Մահենների "L'Arménie à l'épreuve des siècles" հրաշալի գիրքը, որը պերճախոս բնութագրականներով և տպավորիչ պատկերներով աշխարհին ներկայացնում է դարերի աղետների միջով անցած Հայաստանի պատմության ճշգրիտ ուղին՝ սկսած Ուրարտուից մինչև մեր օրերը:⁸² Այն գրված է գիտական բարեխղճությամբ, փաստական հզոր հիմքով և դեպի Հայաստանն ունեցած անզուգական սիրով:

Պատահական չէ, որ գրքի սկզբում որպես յուրօրինակ բնաբան ֆրանսերենով դրված է Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» հանճարեղ քերթվածը: Գիրքը ներկայացնում է հայերի դերը աշխարհի քաղաքակրթության մեջ և բնականաբար ժամանակագրական կարգով ներկայացվում են հայերի մշակութային նվաճումները: Գրքի երկրորդ գլխի մի հատվածը կոչվում է «Հին աշխարհի բոլոր գիտությունները»: Այստեղ պատկերված է, թե ինչ եռանդով հայ հոգևորականները հունարենից ու ասորերենից սկսում են թարգմանել հունահռոմեական, ասորական մտքի լավագույն դրսևորումները, որոնք նոր օրերում բնագրի արժեք ունեն: Բացի աստվածաբանական գրքերից, հենց V դարում թարգմանվել են նաև աշխարհիկ ստեղծագործություններ, ինչպես օրինակ՝ Կեղծ Կալիսթենեսի «Ալեքսանդրի վարքը»: V-VII դարերում հայ գիտնականները ստեղծեցին քրիստոնեական ազգային ու թարգմանական գրականության հրաշալի գրադարան:

Հայագետ Ֆրեդերիկ Մակլերը համոզված է, թե Ալեքսանդր Մակեդոնացու վարքի հայկական թարգմանության նկարագրողումները նպաստել են հայ աշխարհիկ մանրանկարչության զարգացմանը:⁸³

Ժան-Պիեռ Մահեն չի մոռանում նշել, թե հայ թարգմանիչները հայերեն են թարգմանել նաև Հին ու Նոր կտակարանների հետ կապվող բազմաթիվ պարականոն գրվածքներ, որոնք քաղել են հին աշխարհի մատյաններից ու հռետորական գրվածքներից. «Որոշ հայկական ձեռագրեր պարունակում են ասորերենից, արաբերենից, վրացերենից, թուրքերենից ու մոնղոլերենից թարգմանված կարևոր փաստաթղթեր»:⁸⁴

Ժան-Պիեռ Մահենի հայագիտական հետազոտությունները հիմնված են ձեռագրական ու գիտապատմական շատ հարուստ նյութի վրա և իրենցով նշանավորում են ֆրանսիական հայագիտության նոր ժամանակահատվածը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն-Մարտենից սկսած բոլոր նշանավոր հայագետները հատուկ ուշադրություն են դարձրել հայ միջնադարի թարգմանական հարուստ

⁸⁰ Մանանդյան Հ., <<Հերմեյ Եռամեծի առ Ասկղեպիոս Մահմանք, <<Բանբեր Մատենադարանի>>, №3, Երևան, 1956, էջ 289

⁸¹ L'épée de Jean-Pierre Mahé, Paris, 2002, էջ 54

⁸² Mahé Annie et Jean-Pierre, L'Arménie à l'épreuve des siècles, Paris, 2005

⁸³ Macler F., Documents d'Art Arméniens, l'Enluminure Arménienne profane, Paris, 1924

⁸⁴ Mahé Annie et Jean-Pierre, L'Arménie à l'épreuve des siècles, Paris, 2005

գրականության վրա և նշել դրա միջազգային նշանակությունը: Պատճառն այն է, որ հունարենից, ասորերենից, պարսկերենից, արաբերենից, ֆրանսերենից և այլ լեզուներից կատարված բազմաթիվ թարգմանական գործերը ժամանակի ընթացքում կորել են, և մնացել են միայն դրանց հայերեն թարգմանությունները, որոնք ստացել են բնագրի արժեք: Այդ թարգմանությունները դարձել են թանկարժեք նվեր միջազգային գիտությանն ու բանասիրությանը: Այս իրողությունը բազմաթիվ օրինակներով իր մեծաքանակ աշխատություններում փաստում է մեր ժամանակների մեծագույն ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահեն:

Հիմնաբառեր. միջազգային, բնագիր, թարգմանություն, թանկարժեք, բանասիրություն, ճշգրիտ, հայագետ, հարուստ, զբաղված, հունարեն:

ANCIENT ARMENIAN TRANSLATED LITERATURE AS APPRECIATED BY JEAN-PIERRE MAHÉ

Aelita Dolukhanyan

Beginning with Saint-Martin, the founder of Armenian studies in France, all armenologists have paid special attention to the richest medieval Armenian translated literature and noted its international importance. The reason is that originals of numerous translations made from Greek, Latin, Syriac, French, Georgian and other languages were lost during centuries, and only their Armenian translations were preserved. Nowadays they have the value of originals. These translations are a valuable gift to the international science and philology. This fact is proved through numerous examples by Jean-Pierre Mahé, a great armenologist of our time, in his more than one works.

Key-words: international, original, translation, valuable, philology, precise, armenologist, rich, Grabar (Ancient Armenian), Greek.

ДРЕВНЕАРМЯНСКАЯ ПЕРЕВОДНАЯ ЛИТЕРАТУРА

В ОЦЕНКЕ ЖАН-ПЬЕРА МАЭ

Аэлиита Долуханян

Начиная с основателя арменоведения во Франции Сен-Мартена, все арменоведы особое внимание обращали на богатую армянскую средневековую переводную литературу и отмечали ее международное значение. Дело в том, что оригиналы многочисленных переводов с греческого, латинского, сирийского, французского, грузинского и других языков были утеряны в течение веков, тогда как сохранились только их армянские переводы, которые приобрели ценность оригиналов. Эти переводы стали драгоценным подарком для международной науки и филологии. Этот факт аргументируется многочисленными примерами во многих трудах большим французским арменоведом нашего времени Жан-Пьером Маэ.

Ключевые слова: международный, оригинал, перевод, ценный, филология, точный, арменовед, богатый, грабар (древнеармянский), греческий.

ՄԱՆԱՀԻՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Հովսեփյան Լիլիթ

Սանահինի վանքը դարեր ի վեր հայտնի է եղել որպես «մեծահոշակ», «գերահոշակ», «երկնահանգետ» կենտրոն: Հաղպատի հետ միասին այն վայելել է նախ Բագրատունյաց, Կյուրիկյանների, ապա՝ Զաքարյանների հովանավորությունը, որի արդյունքում

միաբանությունը բովանդակալից և փարթամ կյանք է ունեցել: Այդ է վկայում Գրիգոր Մագիստրոսի⁸⁵ սանահինցիներին ուղղած թուղթը, որտեղ վարդապետարանը բնութագրվում է որպես մայրաքաղաքի շքեղություն ունեցող փառավոր կենտրոն՝ «բոլոր արվեստներով և գիտություններով հմտացած մարդկանցով» (նա միաբաններին ջերմությամբ ու գործով է հիշում և կոչում է նրանց՝ «ճշմարիտ հարազատ», «եղբայր»), ինչպես նաև Սանահինի ընծայամատյան-Քեթուկի⁸⁶ Նախադրությունը. «... բնաւ ծախք եւ պիտոյք սոցա (իմա՛ միաբանության) յարքունուստ էր շնորհեալ առաւել քան զկարիս ազնուագնս եւ բարեպաշտուհի դշխոյն եւ բամբիշն ամենայն Հայկազեան զարմից Խոսրավանոյշն՝ առ ի պարապեցուցանել զնոսա յաղաւթս ձիզս եւ երկարս վասն կենաց արքային Աշոտոյ եւ ազատորդեաց նորա Սմբատայ եւ Գագկայ եւ Գուրգենայ»⁸⁷:

Կիրակոս Գանձակեցին Գրիգոր Գ. Պահլավունու կաթողիկոսության ժամանակ Կիլիկիայի և Արևելյան Հայաստանի հոգևոր կենտրոնները թվարկելիս Արևելյան Հայաստանը ներկայացնում է միայն Սանահինի ու Հաղպատի վարդապետարաններով և նրանց հեղինակավոր ուսումնականներով՝ որպես «անուանի մարդկանց» և «լուսաւորիչ գիտնականների»⁸⁸: Ահա Բագրատունյաց Հայաստանի հոգևոր այս կենտրոններն ապրում էին աշխույժ դավանաբանական, գիտա-ուսումնական կյանքով, ուստի մատենադարանների գոյությունը Սանահինի, ապա նաև Հաղպատի վանքային համալիրների համար ժամանակի հրամայականն էր:

Սանահինի վանքի կառույցների մեջ իր յուրահատկությամբ աչքի է ընկնում գրատունը կամ նշխարատունը⁸⁹ կառուցված Դավիթ Անհողինի դուստր Հրանուշ թագուհու միջոցներով 1063թ.: Այն կոչվել է նաև «մեծ գանձարան»⁹⁰: Գրատունը հայտնի է եղել իր ձեռագրական հավաքածուով, որի լրացումը հետևողականորեն իրականացվել է վանահայրերի կողմից ինչպես աշակերտների ընդօրինակությունների, այնպես էլ նվիրատվությունների և գնումների միջոցով: Մատենադարանը դարեր ի վեր շարժել է մարդկանց հետաքրքրությունն ու երևակայությունը: Սանահինի դպրոցի զարգացմանը նպաստել են բաբունապետներ Անանիան, Դիոսկորոսը, Հակոբ Սանահնեցիները, Գրիգոր Տուտեռոդին, Գրիգոր Աբասորդին, Վարդան Արևելցին, գրիչներ Մաթևոսը, Կարապետը, Խաչատուր և Ավետիք վարդապետները, Ղազարը, Հովհաննեսը, Ստեփանոսը: Սանահինի ընտիր ձեռագրերը հիմք են եղել նորանոր ընդօրինակությունների համար:

Ունենք վկայություն, որ տակավին ԺԱ. դ. (1006թ.) Սանահինի վանքն արդեն «համբավաւոր» էր և ուներ ընտիր և հին գրչագրեր: Պաղտասար Բաղիշեցին հնագույն օրինակներից ընդօրինակած-ժողոված Ճառընտիրում (Բաղեշ/ Ամլորդոյն և Առաքելոց վանքեր, Վենետիկ,

⁸⁵ Ավանդույթը Գրիգոր Մագիստրոսի անունը կապում է Սանահինի հետ, որտեղ առ այսօր կանգուն է «Մագիստրոսի ձեմարան» անունով հայտնի շինությունը: Տե՛ս Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքերը և նրա արձանագրությունները (այսուհետև՝ Սանահինի վանքը...), Երևան, 1957: Նույնի Սանահին և Հաղպատ վանքերը (Հիմնադրման 1000-ամյակի առթիվ), «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԻԴ (Ձ), 1968, էջ 12:

⁸⁶ Սանահինի պատմության, մասնավորապես՝ մատենադարանի ուսումնասիրության համար բացառիկ կարևորություն ունի Սանահինի Քեթուկ ընծայամատյանը. այն պարունակում է բազմաթիվ պատմական տեղեկություններ, փաստաթղթերի և վիմական արձանագրությունների պատճեններ, վկայություններ շինարարական աշխատանքների և վանական կյանքի մասին ընդհանրապես: Օգտագործել ենք՝ Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի Քեթուկ). (այսուհետև՝ Սանահինի Քեթուկ), աշխատասիրությամբ՝ Պարոյր Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, բնագիրը:

⁸⁷ Սանահինի Քեթուկ, էջ 54:

⁸⁸ Այդ մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը. Հայ-վրացական հարաբերություններ (Պատմագրական հետազոտության փորձ), վրացերենից թարգմանեց Հրաչ Բայրամյանը, Ս. Էջմիածին, 2016:

⁸⁹ Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը..., էջ 32:

⁹⁰ Իս. Հարությունյանն այն բնորոշում է որպես մի «հրաշակերտ», «փառաշէն» հաստատություն. «Նշխարատան ներսի կողմից պատերի մեջ եղած դարաններն ենթադրել են տալիս, որ այս շենքը պետք է ծառայելիս լիներ իբրեւ ձեռագրերի պահեստի տեղ եւ այդ պատճառով էլ կոչուել է նեւ մատենադարան կամ գրատուն». տե՛ս «Ազգագրական հանդէս», Գ. գիրք, երրորդ տարի, 1898, էջ 300:

ձեռ. 227, 1846թ.) գաղափարել է Հովհաննես Մանդակունու «Ի փոխումն Աստուածածնին» ճառի մասին հետևյալ նախագաղափար տեղեկությունը. «Ձայս ցանկալի Պատմութիւնս բազում ըղձիւ եւ ցանկական յուզմամբ գտեալ մեծ հեռետորն Մովսէս, որ կոչի Խորենացի, եւ էր ընդ աղաւտ ասացեալ ի մերոյ յարկաց, եւ ուր (ոչ) ուրեք գտանէին մինչեւ ի ձեռն կրանաւորի միոջ գտեալ՝ որ էր յերկրէն Խոր հայոց, ի գաւառէն, որ կոչի Ձորոյ գետ, ի համբաւեալ ուխտին Սանահին անուանեալ, պատահումն բարի եղեւ... եւ հրամայեաց Ատոմ... գրել մեծաւ յուսով...»⁹¹: Փաստորեն, Հովհաննես Մանդակունու Աստվածածնի փոխմանը նվիրված ճառը 1006թ. Ատոմ Արծրունու հրամանով ընդօրինակվում է *համբաւեալ* Սանահինի վանքի օրինակից:

Համբավավոր է եղել նաև Սանահինի ճաշոցը, որի՝ որպես լավագույն գաղափար օրինակի մասին հիշատակությունները պահպանել են հայերեն մի շարք ձեռագրերի հիշատակարաններ. գրիչ Հովհաննեսը Կաթ գյուղում ընդօրինակում է ճաշոց «ի Սանահնոյ արինակէն»⁹²(Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) ձեռ. 3758): 1500 թ. Մելիք Աւանը՝ Գոշ վարդապետի թոռը, Գրիգոր եպիսկոպոս գրչին պատվիրում է ընդօրինակել ճաշոց հե՛նց Սանահինի օրինակից (ՄՄ ձեռ. 4557. Գեղարքունիք, Խորոտիկ ուխտ)⁹³:

Գրիգոր Տղա կաթողիկոսը (ԺԲ. դ.) Կիլիկիայից դիմում է Հաղպատ-Սանահինի միաբաններին (Գրիգոր Տուտեորդուն)՝ խնդրելով «մաշկալաթ» (մագաղաթ) հին գրքեր⁹⁴: Եվ դա օրինաչափ էր, քանի որ Սանահինում իր գործունեությունն էր ծավալում գրչական կենտրոն, որն իր գոյությունը պահպանել է բավականին երկար ժամանակ, և մատենադարանի համար ձեռագրեր են գրել, ընդօրինակել և ծաղկել ուսուցիչ-աշակերտների մի քանի շնորհալի սերունդներ⁹⁵: Սանահինի հետ են կապվում մի շարք բեղուն և շնորհալի գիտնական-ուսուցիչների՝ Հովհաննես գիտնականի, Անանիա Սանահնեցու, Գրիգոր Մագիստրոսի անունները: Սանահինի հայտնի գործիչներից էր Գրիգոր Տուտեորդին (մհ. 1185թ.), նրանից հետո որպես վանքի ղեկավար և ուսուցիչ հայտնի էր Գրիգոր Աբասորդին, որից մեզ է հասել իր տեսակի մեջ եզակի «Գիրք պատճառաց»-ը: Սանահինի հայտնի գործիչներից էին նաև Սարգիսը, Գևորգը, Բարսեղը (այս վերջինիս հովանավորում էր Թամար թագուհին), Գրիգորիսը և Հովհաննես Խաչենցին:

Այն, որ ավելի ուշ շրջանում էլ Սանահինի գրատունը հայտնի էր, վկայում է 1621թ. Մեսրոպ Կաֆայեցու Մեջովում (Պողոտան) գրած հիշատակարանը: Տքնաջան որոնումներից հետո Մեսրոպ Կաֆայեցին գտնում է Երեմիայի մեկնության մի հին՝ Մխիթար Գոշի գրած մեկնությունից ընդօրինակած կամ հեղինակած («Մեկնութիւնս նորա արարեալ է»), սակայն «հին եւ փտեալ ու եղծեալ» օրինակ: Նոր օրինակի որոնումները նրան Կաֆայից հասցնում են Էջմիածին և այլ հայտնի վայրեր: Մեր կարծիքով Մեսրոպ Կաֆայեցին Երեմիայի մեկնության լավագույն օրինակը նախ պետք է փնտրեր ժամանակի հանրահայտ գրադարաններում:⁹⁶

⁹¹ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ (այսուհետև՝ Ցուցակ Վենետիկի), հ. երկրորդ, յօրինեց Հ. Բարսեղ Վ. Մարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 430: Ա. Մաթևոսյանն այս ձեռագրի թվական ՆՁԲ. (1033) սրբագրում է ՆՕԵ. (1006)՝ նկատի ունենալով Ատոմ Արծրունու մասին արված հիշատակությունը. տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.-ԺԲ. դդ., Աշխատասիրությամբ Ա.Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 81:

⁹² ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն երկրորդ (1451-1480), Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան 1958, էջ 230:

⁹³ «Ըստ այսմ պայմանի, ամենագովելի եւ երջանիկ, ընտրեալ եւ պատուելի, աստուածահաճոյ եւ ամենագովութեանց արժանաւորին Մելիք Աւան՝ թոռն Գոշ վարդապետին, որդի տէր Մա[թ]էոսին, գրել ետուր գտորբ տառս ի Սանահնոյ արինակէն...». տե՛ս ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն Գ (1481-1500), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 294:

⁹⁴ Մնացականյան Աս., Սանահին և Հաղպատի մենաստանների մշակութային կյանքի պատմությունից, «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԻԴ (2), 1968, էջ 25:

⁹⁵ Մաթևոսյան Ա., Սանահինի և Հաղպատի գրչության կենտրոնները, «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԻԴ (2), 1968, էջ 31-40: Նույնը Պարույր Մուրադյանի խմբագրությամբ տե՛ս Սանահինի Քեթոնիկ, Յուլեւում Բ., էջ 264-278:

⁹⁶ «...եղեալ եմ ի խնդիր Կաֆայու մինչեւ ի Էջմիածին՝ Վաղարշապատն, ի Խոր Վիրապն, եւ Մաղմուսավանքն, ի Սանահին եւ Հաղպատն, ոչ գտի». տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. չորրորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 118: Հմմտ.՝ Հայերեն ձեռագրերի ԺԵ.

Կնշանակի տակավին 1621թ. Սանահինի մատենադարանը հայտնի էր իր հինօրինակ ձեռագրերով:

Որպես մատենադարան ծառայող գանձատան (նշխարատան) շենքը, սակայն, ապահովված չէր ո՛չ բնական աղետներից և ոչ էլ հարձակումներից (մանավանդ որ այդ հարստությունների համբավը նախապես արդեն տարածված է եղել), ուստի ձեռագրական հավաքածուն տեղափոխվել է անառիկ վայրեր՝ քարայրներ, որտեղ էլ մինչև 18-րդ դ. նրանք պահպանվելիս են եղել:⁹⁷ Այդ վկայում են նաև ձեռագիր աղբյուրները:

1437թ. Սանահինում՝ որպես համեմատաբար անվտանգ վայր, ապաստանած «Սինեաց գրիչ» Շմառնն ընդօրինակում է Շարակնոց (ՄՄ ձեռ. 8979), որի հիշատակարանում ցավով գրում է. «...տարտամեալ անձամբ վասն դառնության ժամանակիս եւ բազում վշտաց եւ աւերման աշխարհիս Հայոց, զի գալն անիծեալ չար բռնաւորին եւ կարապետ Նեոխին... որդի Լանկ-Թամուրին, յազգէն պարսից ելաւ եւ բազում զաւրաւք եւ անթիւ հեծելաւք ի կողմանս հարաւու, տապալեաց զաշխարհս մեր... զկոչեցեալն Ասկանդար՝ զորդին Յուսուֆին...զի բնաջինջ աւեր ածին եւ առհասարակ, զտներն այրեցին եւ զստացուածքն զամենայն կողոպտեցին եւ վասն այս պատճառիս բնակեցաք ի սուրբ ուխտս Սանահին»⁹⁸:

Ընդամենը մեկ տարի հետո՝ 1438-ին, Հաղպատում գրիչ Յովնանի կողմից ընդօրինակված Ճաշոցի հիշատակարանն (հիշատակարանն ըստ Փիրղալեմյանի և Ղ. Ալիշանի) ավելի տխուր պատկեր է արձանագրում՝ նշելով նաև ձեռագրերի կողոպուտի մասին⁹⁹:

1652թ. ժամանակի և երկրաշարժի պատճառով տուժած վանքը, այդ թվում և գրատունը, նորոգվում են: Սարգիս արքեպիսկոպոս Արղությանցը (1646-1681) միաժամանակ իրականացնում է նաև մատենադարանի ձեռագրական հավաքածուի «նորոգման» շնորհակալ աշխատանքը. անհրաժեշտ գրքերը լրացվում են, իսկ հները՝ նորոգվում, որոնց մասին, բարեբախտաբար, Սարգիս Արցությանցը հանվանե վկայություններ է թողել¹⁰⁰. «Մովսէս գիրք (Իմա՝ Մովսէս Խորենացի), եւ Յովհաննէս գիրք (Իմա՝ Հովհաննէս Դրասխանակերտցի), Միխայէլ գիրք (Միքայէլ Ասորի), Վարդան (Վարդան Արևելցի), Ստեփանոս (Ստեփանոս Օրբելյան), Ռըստակէս (Արիստակէս Լաստիվերցի), Կիրակոս (Կիրակոս Գանձակեցի), Բ. կանոնք, Աւետարանի լուծմունք, Շարակնոց, Աղթարացոց: Գնեցի այսոքիք եւ ետու Սուրբ Աստուածածնի դուռն վախմ եւ այլ Բուն Սաղմոսարան եւ այլ ժամագիրք գնեցի եւ այլ հին գրեանք նորոգել տվի, որ ոչ գոյ համար»¹⁰¹: Ընդամենը՝ 14 միավոր ձեռք բերված ձեռագրերի:

Այս տվյալները ենթադրում են.

ա. 17-րդ դ. կեսերին Սանահինն արդեն ուներ պատմագրքերի պակաս, որը հետևողականորեն լրացվել է:

բ. Ծիսական մատյանները ևս լրացված են գնումների միջոցով:

գ. Սանահինի սեփականություն «հին գրեանք», որոնց «ոչ գոյ համար», նորոգված են:

Սանահինի Քեթոսկը պահպանել է քարայրներում ամբարած հարստությունների և դրանց թալանի մասին հիշողությունները:¹⁰²

դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), Հատոր Բ., Կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 30:

⁹⁷ Հիշատակարանային տվյալների համաձայն Սանահինի Քեթոսկը քարայր մտել և դուրս է եկել 18-րդ դ.:

⁹⁸ ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն առաջին (1401-1450 թթ.), Կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 469-470:

⁹⁹ «...աւերեցաւ աշխարհն մեր, եւ դրունք երկնաման տաճարաց փակուեցան, եւ լոյսք եւ կանթեղք շիջան եւ խաւարեցան, եւ խունկք եւ նուրքք պակասեցան... եւ ամենայն սրբութիւնք եկեղեցոյ *խաչ եւ աւետարան*, եւ ամենայն հանդերձեղեն, սպասք եկեղեցոյ ի ձեռն այլազգեաց գերի մատնեցան». տե՛ս նույն տեղում, էջ 485:

¹⁰⁰ Ասվածը հիմք է մեզ հասած ձեռագրերի ստացողների կամ նորոգողների անունների մեջ փնտրել նաև Սարգիս Արղությանի անունը:

¹⁰¹ Սանահինի Քեթոսկ, էջ 113: Հիշատակարանը տե՛ս նաև Աս. Մնացականյանի նշվ. հոդվածում, էջ 26:

¹⁰² «Ի ժամանակս անաւրէն բռնաւորացն Զաղաթայիցն, զոր բոլոր աշխարհս տիրելով եւ աւերելով շրջէին, զաւրագլուխ մի զաւրաւք եկեալ ի ձորն Սետրդեաց վասն աւերելոյ վանորէիցն Հաղբատու եւ Սանահնոյ եւ կարմունջէրացն քանդելոյ. ի նոյն զաւրացն յիսնապետ մի առաջ գնացեալ, հասեալ

Եթե փորձենք Սանահինի մատենադարանի գոյության ժամանակահատվածը կոնկրետացնել, ապա պետք է հիմք ընդունել Սանահինի մատենադարանից մեզ հասած ձեռագրական վաղագույն տեղեկությունը Սիմեոն գրչի 972թ. հիշատակարանից՝ գրված Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնաւորաց» աշխատության հայերեն թարգմանության առիթով, որի ընդօրինակությունը մեզ չի հասել¹⁰³։ Սանահինի մատենադարանի վերջին շրջանն է ազդարարում 1909թ. հոկտեմբերին 21 Մաթեոս Երկրորդ Իզմիրյան կաթողիկոսի թիվ 218 Կոնդակն ուղղված ռուսահայ թեմերի առաջնորդներին և վանահայրերին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնել ձեռքի տակ եղած ձեռագրերը, որի արդյունքում Էջմիածին բերվեցին նաև Սանահինի մատենադարանի 27 ձեռագիր։ Սանահինի հայերեն ձեռագրերի մասին հաղորդումներ հրատարակեցին «Լուսման» և «Արարատը»։ «Ս. Էջմիածնից մեզ հաղորդում են, որ Սանահինի վանքում գտնված քսանկյոթն հատ բավական կարևոր ձեռագիրներ... ուղարկվել են վեհափառ կաթողիկոսին Ս. Էջմիածնի մատենադարանում պահելու համար»¹⁰⁴։ Իսկ «Արարատը» գրում է. «Վրաստանի և Իմերեթի առաջնորդ Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Սաթունեանից ստացանք հետևեալ ձեռագիրները Ս. Էջմիածնի Մատենադարանում պահելու համար»։¹⁰⁵ Սանահինի մատենադարանի վերոհիշյալ 27 ձեռագրերի հետև 7-ը (2375 (1873թ. Ալ. Երիցյանի միջոցով), 2532, 2802, 3031, 3201, 4331, 4465) հանգրվանեցին Մաշտոցյան Մատենադարանում¹⁰⁶։ Թերևս միջնադարյան հայ մատենադարանների մեջ Սանահինինը պետք է համարել երկարակյացներից, քանի որ այն իր գոյությունը պահպանեց շուրջ 930 տարի՝ 972-1904թթ.։

Սանահինի քարայրների մասին հիշողությունների հետքերով 1797 թ. Հովսեփ Արղությանը թողնում է հիշատակություն Սանահինի ընծայամատյանում Քեթուկը գտնելու հանգամանքների վերաբերյալ¹⁰⁷։ Այս տեղեկությունը մեզ հուշում է, որ Սանահինի քարայրների մասին հիշողությունները 18-րդ դ. տակավին կենդանի էին և որ 1795թ. Մահմեդի արշավանքից հետո էլ Սանահինի ձեռագրերից *բազում գրեանք*, այդ թվում և հանրահայտ Քեթուկը պահպանված են եղել։ Դժվար է գուշակել, թե «բազում գրեանք» ասելով ինչ նկատի ունի Հովսեփ Արղությանը, հատկապես եթե նկատենք, որ Մաշտոցյան Մատենադարան մտած վեց ձեռագրեր հենց իր իմացությամբ են հանվել Աջառաց այրից։

18-րդ դ. Վախուշտի Բագրատիոնին Քարթլիի պատմության մեջ նույնպես գրում է Սանահինի ձեռագրապահոց-քարայրների մասին¹⁰⁸։ Որ Լոռվա վանքապատկան տարածքների շրջակայքում պտտվելիս են եղել հիշողություններ քարայրներում պահված հարստությունների

Սանահին՝ ի այն տեղն, որ Գ. կրանաւորք եւ ԲԺ. սարկաւաքունք *վանից անաւթն, սուրբ նշանք եւ ըսգեստք տարեալ ի արեւմտեան կողմն պահեալ* եւ եկեալ [էին] հասեալ ի մէջ տափին, պատահեալ անաւրէն զաւրացն, *բազում նեղութիւն ետուն՝ թէ սրբութեանց տեղիքն նշանց տան։ Եւ միաբանքն ոչ կամեցան...*»։ տե՛ս Սանահինի Քեթուկ, էջ 61։

¹⁰³ «Եւ անարժանս ի կրանաւորաց փցուն գրիչս Սիմեան ի թուականութեանս Հայոց ՆԻԱ. (421/972) ի նորաշէն վանքս կոչեցեալ Սանահին, հրամանաւ հաւր իմոյ Յովհաննիսի, որ էր վանիցս շինութիւնն ամբ Զ. (6)...»։ Սանահին Քեթուկ, էջ 55։ Հմմտ. Մաթևոսյան Ա. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե.-ԺԲ. դդ., էջ 60-61։

¹⁰⁴ «Լուսմայ», 1904, հմր. 5, էջ 218։

¹⁰⁵ «Արարատ», 1905, հմր. 4, էջ 391։ Այդ մասին տե՛ս նաև Օ. Եգանյան, Սանահինի ձեռագրատան հայերեն ձեռագրերի հավաքածուն, «ՊԲՀ», հմր. 3, 1970, էջ 292-294։

¹⁰⁶ 34 ձեռագրերից 8-ը բերված են Աջառաց այրից, որոնցից 6՝ 1797թ.՝ Հովսեփ Արղությանի և Առաքել վարդապետի ձեռքով (ՄՄ 2532, 2660, 2802, 3031, 3050, 3201), մեկը (3352) 1829թ.՝ Հովհաննես քահանայի, ևս մեկը (2375) 1873 թ. Ալ. Երիցյանի միջոցով. այդ մասին՝ Օ. Եգանյանի նշվ. հոդվածում, էջ 293։

¹⁰⁷ «Թիւն 1797 յամի Տեառն եւ Հայոց ՌՄԽԶ. (1246), յապրիլի 10։ Ես՝ Յովսեփ արքեպիսկոպոսս Սանահնեցի... մինչ ընդ հզօր զօրացն եկի ի հայրենի երկիրն իմ Թիֆլիզ յետ աւերութեանն նորին, առաքեցի զՍանահնեցի Մուրադենց Առաքել վարդապետն ի Սանահին, *վասն որոնելոյ գրեանց ի յայրս նորին*։ Բացեալ Աջառա[ն]ց այրն, ընդ բազում գրեանս եւ զանհալկայ, գտեալ էր եւ այս Քեթուկ գիրքս, որ ունի զօրինակս ամենայն հարկաւոր թղթոցն նոյնոյ վանիցն։ Հետեւելով նախնեացն՝ եւ ես յայլ ուրեք գրելոց ի սմա, զոր նուիրեցի տոյն վանիցն»։ տե՛ս Սանահինի Քեթուկ։

Այստեղ բարձր ժայռում կան բազմաթիվ այրեր, և այդ այրերում գտնվում են բազմաթիվ հին գրքեր, որոնք [սակայն] անգործածելի են՝ մարդկանց համար»։

մասին վկայում է Գ. Աղանյանը. նախ՝ հիմք ունենալով 1873թ. Ա. Երիցյանի կողմից այստեղերից քարացած ձեռագրերի հայտնաբերումը, ապա նաև Լոռվա մի քահանայի պատմածն այն մասին, թե իրենց գյուղից վեր անմատչելի մի այրից սաստիկ քամու ժամանակ հայերեն ձեռագիր թղթի կտորներ էին դուռ թռչում¹⁰⁹: Աղանյանն այստեղ գտնում է «մագաղաթե ամեն տեսակ և թղթե հնագույն ժամանակի գրչագիրների բազմաթիվ կտորներ, խոշոր-խոշոր կազմի կաշիներ, գրչագիրների պատկերների կտորտանք... մագաղաթե մի տետր: ... այրում ինչպես քարացած ձեռագիրների կտորներ, այնպես էլ նոր քարացող, փտող, նույն իսկ՝ փտած, այլև մաքուր՝ կարծես այսօրույն նոր գրած մագաղաթի և թղթի վրայ, ամենահին երկաթագրից մինչև թղթեայ բոլորագիր գրչագիրները»¹¹⁰: Չառնի էրից Աղանյանը նույնպես որոշ փշրանքներ է հանում՝ հետագայում իմանալով, որ իր ուղեկից Ալիխանն այդ այրից գրչագիրներ է հանել և վաճառել:¹¹¹

Սանահինի պահոցների մասին հիշատակություն ունի նաև Ռոստոմ-Բեկ Երզնկյանը:¹¹²

Սանահինի այրերի ուսումնասիրության ժամանակագրությունը 1797թ. Հովսեփ Արղության, 1887թ. Ռոստոմ-Բեկ Երզնկյանց, 1900թ. Գ. Աղանյանց, 1959թ. Ս. Քոլանջյանի գլխավորությամբ՝ ՄՄ հնագիտական արշավախմբի պրպտումներ են¹¹³: 1761 և 1800 թթ. Սանահինի և Հաղպատի այրերում գտնված մատյանների մասին հաղորդում է Երզնկյանցը, թե հովիվները, գտնելով անհասկանալի ձեռագրեր, ցույց են տալիս անծանոթ անցորդի, որը չկարողանալով ընթերցել «գիրն երկաթագիրս» ասում է, թե հունարեն են, սրանք այրում են ձեռագրերը, բացի 1451 թ. նոտրգրով գրված մի մագաղաթեա Գանձարանի և «կիսամեռ» Հայսմավուրքի: Որ այդ մասին իսկապես իմացել են տեղաբնակները, ակնարկում է նաև Երզնկյանցը, թե Աբրահամ վարդապետ Թեքիրդաղցու Պետրոս անունով աշակերտը «ի ծերունեաց տեղոյս» իմանալով այրերի թաքստոցների մասին՝ Թիֆլիսից հնարագետ վարպետներ է բերում, բացում այրի մուտքը: Միայն երեք անարատ գործ են գտնում՝ «գերգերգոց մեկնութիւն Գրիգորի Նիսացոյն գրեալ ի Տուրօն ի թուականիս Հայոց Ն. (951), զկարմիր կոչեցեալ Աւետարանն ականակապ եւ զՄեկնութիւն Յովհաննու Աւետարանին»¹¹⁴:

Երզնկյանցը ցավով նշում է՝ Ալեքսանդր Երիցյանց Սանահինեցին 1873 թ. «հետաքրքրութեամբ և մեծաջան աշխատութեամբ ի ձեռն քարագնաց երիտասարդաց եհան ի ծակ քարայրէն Չառնի բազում հնաձեռագիր մատեանս, զորս եցոյց... ի 1875 ամի, բայց ափսոս, զի ի հնութենէ ժամանակին զճճեալ, և ի խոնաւութենէ անձրևածեծ և կրաշաղախ տեղոյն աղիւսանման քարացեալ էին անգին մատեանքն և մնացին մեզ իսպառ անվերծանելիք»¹¹⁵:

Սանահինի մատենադարանի հարուստ և բովանդակալից պատմությունն առաջացնում է հարցեր, որոնց լուծումը կարող է լույս սփռել նաև հայ այլ մատենադարանների պատմության լուսաբանման վրա: Դրանցից թերևս ամենակարևորը՝ ի՞նչ կարգով են լրացվել մատենադարանի գրքերը: Արդյոք եղել է որևէ ցանկ, ըստ որի մատենադարանները լրացրել, ուռճացրել են իրենց գրապահոցները: Իսկ որ դրանք լրացվել են, վկայում են թե ձեռագրերի հիշատակություններն ու նրանցում եղած հետագայի նշումները, թե՛ Սանահինի ընծայամատյանը և թե՛ վիմագիր արձանագրությունները:

Գրիգոր Աբասորդու «Գիրք պատճառացի»՝ որպես «գրադարանների համալրման անհրաժեշտ մատյանի» առիթով արված մի դիտողություն Լ. Խաչերյանի կողմից, թե «Գլաձորի համալսարանում յօրինուած գրչագիրները լիովին համապատասխանում էին «Պատճառաց

¹⁰⁹ Աղանեանց Գ., Մի օր Սեւորդեաց աշխարհում, «Լումայ», Գիրք Բ., Չորրորդ տարի, Յուլիս, 1899, էջ 254-55:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 256:

¹¹¹ Աղանեանց Գ., Հնից-նորից, «Լումայ», Գիրք Ա., Հինգերորդ տարի, Յունուար, 1900, էջ 252:

¹¹² Ռոստոմ-Բեկ Երզնկեանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ, Արարատ, 1887, էջ 68-69:

¹¹³ Քոլանջյան Ս., Հին ձեռագրական բեկորներ Սանահինի և Հաղբատի քարայրներում, «Բանբեր Մատենադարանի», հմր. 5, 1960, էջ 535-538:

¹¹⁴ Ռոստոմ-Բեկ Երզնկեանց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ, էջ 69:

¹¹⁵ Նույն տեղում:

գրքի» մատնանշած հիմնական աշխատություններին¹¹⁶, դիտարկելի չէ՞ արդյոք հե՛նց Սանահինի համար: Արդյո՞ք սա ինքնին չի՞ նշանակում, թե Սանահինում նույն կարգը չի պահպանվել: Չէ՞ որ Սանահինի մի շարք ձեռագրերի ընդօրինակություններ հեղինակություն են եղել և հիմք այլ գրչության կենտրոնների և մատենադարանների լավագույն ընդօրինակությունների համար: Կամ արդյո՞ք սա չի նշանակում, որ Սանահինի մատենադարանում պետք է փնտրել նվազագույնը 100-ից ավելի երկերի բնագրեր, եթե նկատի ունենանք «Գիրք պատճառացում» թվարկվածները: Եվ արդյո՞ք Աբաստրդի Գրիգորի «Գիրք պատճառացում» արտահայտած միտքը, թե «Գիտություն գրոց ծով է անեզր եւ անհաս, եւ չիք զբաւանդակն իմանալ ումեք ըստ արժանւոյն, այլ սակաւս ի բազմաց» չպետք է ուղիղ իմաստով հասկանանք:

Միջնադարյան մատենադարանների հավաքածուն համալրվել է տարբեր ճանապարհներով. ամենաառաջին և հասանելի տարբերակը տեղի, հիմնականում աշակերտների կամ հմուտ գրիչների արած ընդօրինակություններն էին: Սանահինը հայտնի է եղել որպես գրչության կենտրոն¹¹⁷: Տակավին րաբունապետ Հովհաննես գիտնականի «մոտ սովորում և նրա հրամանով ձեռագրեր էին ընդօրինակում նորակազմ ուխտի միաբան գրիչներն ու գրոց աշակերտները: Սանահինում ուսուցման համար ընդօրինակվող ձեռագրերը այդ ժամանակ պատահական լինել չէին կարող... դրանք անհրաժեշտ գրքեր էին, որոնք այլևայլ տեղերից գտնում, ընդօրինակվում, ընդօրինակել էին տալիս և ուսուցման հիմք ստեղծում»¹¹⁸: Թերևս պատահական չպետք է համարել այն, որ գրատուն (նշխարատուն) ավելի ուշ՝ 1063-ին է կառուցվել, քանի որ դրա պահանջն ավելի ուշ է զգացվել, ձեռագրեր անմիջապես կուտակվել չէին կարող, դրա համար ժամանակ էր պետք: Սանահինը մեզ ներկայանում է գրչարվեստի իր բեղուն գործունեությամբ. ՄՄ. 7431 ձեռագիրը վկայում է, որ Սանահինի առաջնորդ Հովհաննեսի համար գրված ձեռագրի «շիքիրոնը» Խաչատուր վարդապետն է տվել: Գրիգորես գրիչը հիշատակում է Սարգիս քահանային, որ ՌՄ. (2000) «տետր կոկեաց» (մոտ 2400 թերթ)¹¹⁹: Եթե ենթադրենք, որ թուրթը կոկվում էր հենց Սանահինի կարիքների համար, ապա հասկանալի է, թե ինչ ծավալի աշխատանք էր կատարվում գրչակենտրոնի շրջանակներում: Սանահինի ձեռագրերը պահպանել են նաև հայտնի ծաղկողների անուններ՝ օրինակ, Հովհաննես Սանահնեցին, որը նաև գրչության և մանրանկարչության ուսուցիչ էր¹²⁰:

Սանահինի գրատան համալրման մյուս ճանապարհը կամավոր նվիրատվություններն էին: Վիմական արձանագրությունները և ձեռագրական հիշատակությունները ներկայացնում են հետևյալ պատկերը.

Սանահինի Քեթրուկ	Վիմական արձանագրություններ ¹²¹
	1197թ. Գրիգոր Տուտեորդի՝ 8 գիրք, ոսկեգիր հարցատետր ¹²² :
	1198թ. (վնասված արձանագրություն). «Ի ՌԽԷ. թվ. //մ աւետար[ան]» ¹²³ :
[1181] Ես՝ Մարիամ Բագրատունի, դուստր արքային Կիրիկի, մեծաւ յուսով կանգնեցի զսինս այս եւ ետու իմ հայրենի սուրբ նշան մեծայծախ պահարանաւք ի Սուրբ	1181թ. Մարիամ Բագրատունի՝ Տոնացույց ¹²⁵ :

¹¹⁶ Խաչերեան Լ. Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ձեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները միջնադարեան Հայաստանում եւ Գիլիկիայում (V-XVI դդ.), Լիզպոն, 1998, ծնթ 3, էջ 159-160:

¹¹⁷ Ա. Մաթևոսյանի նշված հոդվածում, էջ 31-40:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 32:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 36:

¹²⁰ Երեմյան Ա., Գրիչ եւ ծաղկող Յովհաննես Սանահնեցին (ԺԵ. դար), «Բազմավեպ», թիւ 1-2, 1957, էջ 70-82:

¹²¹ Ղաֆադարյան Կ., «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները» գրքից:

¹²² Նույն տեղում, էջ 111:

¹²³ Նույն տեղում, էջ 110:

Աստուածածնիս, [սկեան] արծաթի եւ տաւնացո[ւ]ցաք ¹²⁴ :	
	1211թ. Սարգսի որդի Վաչե ոսկետուփ Աւետարան եւ Գործք առաքելոց (՝). «Ի ՈԿ. թու. եւ Վաչե... որդի Սարգսի, շինեցի զխորանս եւ ետու զիմ <i>ոսկետուփ գաւետարանս</i> եւ գտուրք նշանս եւ զգործքս» ¹²⁶ :
1217թ. Գրիգոր Աբասորդին Ս. Աստվածածնին է նվիրում ինը փերթ գիրք ¹²⁷ :	1217թ. Գրիգոր Աբասորդի ժԳ. գիրք. «Ի թուի(ն) հայոց ՈԿԶ եւ՝ Գրիգոր վարդապետ, որդի Աբասայ, առաջնորդ սուրբ ուխտիս, ետու յԱստուածածնինս խաչ մի մեծ, ժԳ գիրք» ¹²⁸ :
	1258թ. հայր Պետրոս՝ Հարանց վարք. «ԶԷ: Կամաւն Աստուծոյ, եւ՝ [Պ]ետրոս աշակերտ սուրբ աստուածածնիս, ետու գիրք հարանց վարք եւ այլ արդիւնս յեկեղեցիս» ¹²⁹ : 1356թ. Սամսար՝ այլ գրեանք. «Ի թվ. ՊԵ Կամաւն Աստուծոյ եւ Սամսար վարդապետ միաբանեցայ սուրբ Աստուածածնիս եւ ետու Ա երկաթի խաչ ու այլ գրեանք» ¹³⁰ :
1501թ. Բարսեղ եպիսկոպոսը՝ ձիթհանքի, այլևայլ իրերի հետ նաև «գրիանք» ¹³¹ : [1652թ.] Սարգիս եպիսկոպոսը՝ 14 անուն գիրք: 1687թ. Բարսեղ եպիսկոպոս (եղբորորդի Սարգսի) Մեկ Աւետարան, Մեկ մաշտոց, մեկ Շարակնոց, մեկ Ատենի, մին Առաքել (Դավիթեցի) պատմագիրք՝ բասմա, երեք Սաղմոսարան ¹³² : 1691թ. Նույն Բարսեղը՝ երկու Շարակնոց գրովի, երկու քարոզգիրք, երկու Մաշտոց, մեկ բուն, մեկ Ձեռագր ¹³³ :	

¹²⁵ Նույն տեղում, էջ 114:

¹²⁴ Սանահինի Քեթուկ, էջ 123:

¹²⁶ Ղաֆաղարյան Կ., Սանահինի վանքը..., էջ 135: «Զգործս» բառի մեկնությունը՝ նույն տեղում, տե՛ս ծնթ.:

¹²⁷ Սանահինի Քեթուկ, էջ 111, 126 :

¹²⁸ Ղաֆաղարյան Կ., Սանահինի վանքը..., էջ 116:

¹²⁹ Նույն տեղում, էջ 154:

¹³⁰ Նույն տեղում, էջ 152:

¹³¹ Նույն տեղում:

¹³² Նույն տեղում, էջ 114:

¹³³ Սաղմոսավանքում 1436թ. Սանահինի Հովհաննես փակակալի խնդրանքով ընդօրինակվում է Ճաշոց (Վենետիկի ձեռ. 178), որ ունի նաև վերջին՝ 1692թ. նորոգման հիշատակարան: Այստեղ Բարսեղն ակնարկում է իր կողմից նորոգված 15 ձեռագրերի մասին: Եվ իսկապես, նրա անունով մեզ հասած ձեռագրերի թիվը 15 է. «Ըզվերջին նորոյգող սուրբ մաշտոցիս Բարսեղ եպիսկոպոս յիշեցքէք, որ ետու նորոգել ԺԵ գիրք մեծ եւ փոքր հալալ ընչից իմոց տւի նորոգել վասն փրկութեան հոգւոյ իմոյ... թվին ՌՃԽ. (1692) կազմեցաւ Ովասաբ Մկրտիչ իրիցէ». տե՛ս Ցուցակ Վենետիկի, Հ. Գ., Մաշտոց-Գիրք ձեռնադրութեանց, յօրինեցին Հ. Բարսեղ Սարգիսեան եւ Հ. գրիգոր Սարգսեան, Վենետիկ, 1966, էջ 244:

Ընդամենը՝ 55 նվիրաբերված ձեռագրեր և «այլ գրեանք»: Անշուշտ, նվիրաբերած ձեռագրերի թիվն ավելին է: Արձանագրությունների տվյալների վերլուծության առիթով Կ. Ղաֆադարյանը նկատել է, որ հաճախ նվերները հանվանե չեն հիշատակվում արձանագրություններում, այլ բնորոշվում են ընդհանուր «արդյունք» բառով, որ կնշանակի շարժական գույք, այսինքն՝ դրամ, *ձեռագիր, գրքեր*, արժաթագործության նմուշներ, եկեղեցական իրեր և այլն¹³⁴: Պարզ է, որ այսպիսի ընդհանուր բնորոշմամբ նվիրաբերված շատ գրչագրերի անուններ չեն արտահայտվում, և նրանց հայտնաբերումը ապագայի խնդիր է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սանահինի հնամյա մատենադարանը լրացնում է վանքի հարուստ և բովանդակալից պատմությունը որպես նրա փաստացի վկա, և գրատան ուսումնասիրության հաջորդ քայլը պետք է լինի հայտնի 55 ձեռագրերը խմբավորել, փորձել գտնել դրանց մասին գեթ ամենափոքր տեղեկությունները, պահպանվելու վայրերը, եթե, իհարկե, դրանք պահպանվել են, կամ գոնե հիշատակվել: Այդ ձեռագրերի վերհանումը նոր էջ կբացի Սանահինի հեղինակավոր և հնամյա վանքի, ինչպես նաև նրա մատենադարանի ուսումնասիրության պատմության մեջ:

Հիմնաբառեր. գրանցամատյան, մատենադարան, ձեռագրերի պահոց, վանք, դասախոսական:

THE MATENADARAN OF SANAHIN

Hovsepyan Lilit

Beginning with the 11th century the monastic matenadaran (book depository) played a significant role in the literary and cultural life of Sanahin. At different times the matenadaran was enriched or robbed, but it preserved its existence and fame until the 18th century, at first in a separate book depository, then in the caverns of Sanahin. Written sources or lapidary inscriptions preserved until now contain important data about the matenadaran. In this sense the Sanahin book of inscriptions and colophons, called “Kiotuk”, and the lapidary inscriptions of the monastery are of exceptional importance. Their study gives the possibility to acquire a notion of the approximate picture of the manuscripts kept in the matenadaran. The matenadaran was perseverant either in enriching the vault or restoring the manuscripts. The colophons of manuscript sources give evidence that, in spite of long intervals or periodical pillages, the matenadaran of Sanahin existed until the 18th century.

Key words: book of inscriptions and colophons, matenadaran, book depository, inscription, lectionary, cavern, scriptorium, monastery.

МАТЕНАДАРАН САНАИНА

Овсебян Лилит

Начиная с XI века монастырский матенадаран (хранилище рукописей) сыграл важную роль в литературно-культурной жизни Санаина. В разное время матенадаран обогащался или был ограблен, но сохранил свое существование и славу до XVIII века: в начале в отдельном хранилище рукописей, а позже в пещерах Санаина. Дошедшие до нас письменные источники и лапидарные записи содержат данные о матенадаране. В этом смысле исключительно важны санаинская книга записей и колофонов, называемая «Кеотук», и лапидарные записи монастыря, изучение которых дает возможность выяснить приблизительную картину хранящихся в матенадаране рукописей. Матенадаран последовательно осуществлял и обогащение фонда, и работу по реставрации рукописей. Колофоны рукописных источников свидетельствуют о том, что несмотря на длительные интервалы и периодические ограбления, Санаинский матенадаран сохранил свое существование до XVIII века.

Ключевые слова: книга записей и колофонов, матенадаран, хранилище рукописей, запись, лекционарий, пещера, скрипторий, монастырь.

¹³⁴ Ղաֆադարյան Կ. Սանահինի վանքերը..., էջ 149-ի ծնթ.: